Էջմիածին



1963



ՌՆԺԳ

Ի ՏԱՐԻ

Յուլիս – Օգոստոս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Է-Ը

1963

86
7-8
ՈՌ-5080

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Պատմական այցելություն	3
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կարլեն Լ. Դալլաքյանի այցելությունը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին	6
Հանուն աշխարհի խաղաղության և մարդկության բարօրության	7
Ամենայն Հայոց Հայրապետի ցավակցական հեռագիրը Նորին Սրբություն Հովհաննես ԻԳ Պապի մահվան առթիվ և կարդինալ Ալոիզի Մազելլայի պատասխանը . .	9
Նորին Սրբություն Տ. Տ. Պավղոս Զ Պապի ընտրության առթիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Վատիկանի միջև փոխանակված պաշտոնական գրությունները . . .	10
ՆԱՐԵԿ ԱՌԵՂԱ ՇԱՔԱՐՅԱՆ—Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիի եպիսկոպոսության հիսնամյակը	11
Հաղորդագրություն Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին այցելության մասին . .	14
Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը Մայր Աթոռում	15
Տեսակցություն Թուրքիայի հայոց ամենապատիվ Տ. Շնորհք սրբազան պատրիարքի հետ	31
Հավատ և կարգի համաշխարհային շարժում ժողովը Մոնրեալում	40
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ	43
Լիոնի հայոց Սուրբ Հակոբ եկեղեցու օծումը	44
Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ—Պոլիս և իր դերը	46
Ա. ՆԱՋԻԿՅԱՆ—Սայաթ-Նովայի տաղերը եվրոպական լեզուներով	54
ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ	61

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագրության հասցեն՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue „Etchmiadzine", Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1963 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 13—23 օրերին, ուխտավորաբար Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյանը իր շքախմբի հետ:

1461 թվականին Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքության հաստատումից ի վեր առաջին անգամն է, որ պաշտոնական այցով Մայր Աթոռ էր ժամանում Կոստանդնուպոլսի հայոց սրբազան պատրիարքը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, հուլիսի 13-ին, Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առաջ, ջերմորեն ողջունելով Նորին Ամենապատվության այցելությունը Մայր Աթոռ, նշում էր.

«Իրոք խորապես կհուզե և կմխիթարե Մեզ Ձեր այս պատմական այցելությունը և Մենք այն հաստատ ու քաղցր զգացումը ունինք, թե նոր լույս մը կբացվի այսօրվընե սկսյալ Մայր Աթոռիս և Ձեր Աթոռին միջև, թեև միշտ սիրալիր եղած են Մեր Աթոռներու հարաբերությունները նաև անցյալին մեջ, Հայաստանյայց Եկեղեցվո կանոններուն, ավանդություններուն և միության սկզբունքին վեմին վրա հաստատուն»:

Սրբազան պատրիարք հայրը, խորապես զգացված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջունի ջերմ խոսքերից, պատասխանում էր.

«Եկած եմ հատկապես փոխարինելու համար այն սփոփարար այցելությունը, որ Ձերդ Ս. Օծությունը շնորհեց Թուրքիո հայության 1961 թվականի հուլիսին, երջանկահիշատակ Տ. Գարեգին պատրիարքի վախճանման առիթով:

Վեհափառ Տե՛ր, բերած եմ նաև Ձերդ Ս. Օծության Թուրքիո իմ հայ համայնքին՝ Ձեր հոգևոր զավակներուն՝ որդիական սիրո, հավատարմության և խոր հարումի զգացումները:

Կվստահացնեմ Ձերդ Ս. Օծությունը, թե Ստամբուլի հայությունը կապված կմնա իր Եկեղեցիին և հայրենի ավանդությանց, ավանդություններ, որոնց գլուխը կգտնվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հավատարմորեն կապված ըլլալու գիտակցությունը»:

Արդարև, մեծապես նշանակալից և պատմական է Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքի այցելությունը մեր օրերին, Մայր Աթոռ:

Ինչպես Վեհափառ Հայրապետն է նշել, պատմության մեջ անցյալում միշտ սիրալիր են եղել Մայր Աթոռի և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքական Աթոռի հարաբերությունները:

Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքությունը առաջին իսկ օրից հոգեպես կապված է եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

1453 թվականին Կոստանդնուպոլսի գրավումից հետո, այնտեղ գրված ամենահին երկու հայ ձեռագրեր՝ Ամիրդովլաթի «Գիրք ռամկօրէն»-ը (1474 թ.) և «Անգիտաց անպէտ»-ը (1478 թ.), Էջմիածնի Սարգիս կաթողիկոսին է որ հիշում են որպես Ամենայն Հայոց Հայրապետ:

1526 թվականին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք էր ընտրվում Զաքարիա Բ կաթողիկոսի եղբորորդին՝ Գրիգոր Վաղարշապատեցին:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն այդ պարագան ապացույց է համարում նախապես հայտնած իր տեսության, թե «Կ. Պոլսո Աթոռը, որչափ ալ առաջները Կիլիկիո Կաթողիկոսության հետ հարաբերության մեջ կգտնվեր, սակայն հետվհետե թե՛ արևելցի հայաբնակության շատնալովը, և թե՛ Էջմիածնի վիճակներեն լավ

մաս մը Օսմանյան կայսրության կցվելովը, Էջմիածինի Աթոռի հետ հարաբերություններ ընդարձակվեցան և հետզհետե անոր իրավասության հետ կապվեցավ Կ. Պոլսո պատրիարքությունը: Այս տեսակետեն շատ նշանակալից է վաղարշապատեցի և կաթողիկոսի եղբորորդի և Էջմիածնի միաբան եպիսկոպոսի մը պատրիարքության ընտրվիլը» («Ազգապատում», Բ, Կ. Պոլիս, 1914 թ., էջ 2225—2226):

Այնուհետև Օրմանյան սրբազանը եզրակացնում է. «Եվ այդ ատենեն Կ. Պոլսո Աթոռը վերջնականապես և բացառապես կապվեցավ Էջմիածնի Մայր Աթոռին հետ» (նույն տեղում, էջ 2286):

Անցյալում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքները համարվում էին նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի փոխանորդները («վեքիլ»-ները) Թուրքիայում:

Ուրախությամբ պետք է արձանագրել սակայն, որ մեր օրերին, մանավանդ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծության Տ. Տ. Վազգեն Ա-ի գահակալության տարիներին, Հայ Եկեղեցու նվիրապետական բոլոր Աթոռների հետ սիրո և գործակցության հոգևոր, կանոնական կապը է՛լ ավելի է սերտանում և ամրապնդվում:

1956 թվականի փետրվարին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն էր տալիս Անթիլիասում Կիլիկյան Աթոռին, ամրապնդելու երկու Աթոռների անքակտելի միության կապը:

1961 թվականի հուլիսին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը այցելում էր Ստամբուլ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունը տանելու Թուրքիո հայոց Պատրիարքության և ժողովրդին:

1963 թվականի հոկտեմբերին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կայցելի Երուսաղեմ, անձամբ. տանելու Իր ողջույններն ու հայրապետական օրհնությունները Երուսաղեմի հայոց Պատրիարքական Աթոռին, միաբանության և ժողովրդին:

Այս գաղափարների և մտածումների լույսի տակ, Վեհափառ Հայրապետը Վեհարանում, ընդունելության ժամանակ, ողջունելով ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքի այցելությունը Մայր Աթոռ, շեշտում էր.

«... Նոր էջ մը կբացվի մեր եկեղեցական կյանքին մեջ:

Պատմության ընթացքին միշտ սիրալիր եղած են Մայր Աթոռին և Պոլսո Պատրիարքության փոխհարաբերությունները: Բայց ահա Մեր օրերուն այդ սիրո և գործակցության կապը առավել կսերտանա:

Մենք միշտ պիտի աղոթենք ու գործենք, որպեսզի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սիրո և հոգևոր աշխատակցության կապերը հետզհետե առավել ջերմանան Մեր եկեղեցվո մյուս երեք նվիրապետական Աթոռներուն հետ, որոնք բոլորը միասին անբաժանելի մեկ ամբողջություն մը կկազմեն՝ օրհնությամբը և շնորհներովը Աստուծո Միածին Որդվույն, որ լուսեղեն կերպարանքով այստեղ իջավ շատ դարեր առաջ և այդ լույսի ահեղ զորությամբ հիմնեց Ամենայն Հայոց Հայրապետությունը, Գլուխը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո»:

Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք հոր ուխտավորությունը Մայր Աթոռ է՛լ ավելի կամրապնդի Մայր Աթոռի և Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարքական Աթոռի պատմական, կանոնական հարաբերությունները:

Անցնող 500 տարիների ընթացքում, Կոստանդնուպոլսի պատրիարքական Աթոռի վրա բազմել են 80 պատրիարքներ, որոնցից ոմանք այդ Աթոռը ծածկել են փառքով, եկեղեցաշեն և ժողովրդանվեր գործունեությամբ:

1961 թվականի հոկտեմբերին, Ստամբուլի հայ համայնքի ներկայացուցիչների ձայնով, պատրիարքական այդ պատասխանատու պաշտոնին է կոչվում Տ. Շնորհք սրբազանը:

Պատրիարքական գործունեության անցնող քսան ամիսները խոսում են այն մասին, որ այսօր պատմական այդ Աթոռը, հանձին ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքի, ունի մի արժանավոր գահակալ, որը, ստեղծված օրինական և գործնական պայմանների մեջ, հանրապետական թուրք կառավարության բարյացակամությամբ և Թուրքիայում ապրող հայ բարեպաշտ և ավանդապահ ժողովրդի սրտառուչ օժանդակությամբ, ձեռնհասորեն ղեկավարում է իր խնամքին հանձնված Թուրքիայի հայության հոգևոր, եկեղեցական, կրթական գործերը:

Ամենապատիվ Տ. Շնորհք սրբազանը հոգևոր պետն է այսօր Ստամբուլում և Թուրքիայի գավառներում ապրող ավելի քան 80 000 հայության:

Շեն ու պայծառ են Ստամբուլում գործող 35 հայ եկեղեցիները, որոնք ունեն իրենց քահանաները, դպրաց դասերն ու երգչախմբերը, համայնքային խնամակալությունները՝ պատրիարք սրբազան հոր հովանու տակ:

Պատրիարք սրբազան հոր գործունեության մեկ կարևոր երեսն է կազմում Ստամբուլի մի շարք հայ եկեղեցիների վերանորոգումն ու բարեկարգումը, նյութական և բարոյական օժանդակությամբ Ստամբուլի հայության, որի սրտում միշտ վառ է հավատի և բարեպաշտության կրակը:

Եկեղեցական վերաշինության հետ միասին, սրբազան պատրիարք հոր նախաձեռնությամբ, առաջ է տարվում հայ կրթական հաստատությունների վերանորոգումն ու շինարարությունը:

Պոլսահայ իրականության մեջ գործող համայնքային մեծ հաստատությունները, ինչպիսիք են Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցը, Գալֆայան և Գարակյոզյան որբանոցները, Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը և այլ կրթական, կարևոր հաստատություններ, իրենց խնամակալությանց հոգածության ներքո, պատրիարք հոր հոգևոր հովանու տակ, նախախնամական դեր են կատարում:

Անցյալ տարի Ստամբուլում եկեղեցական հանդիսությամբ նշվել է Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը, ինչպես նաև Թուրքիայի հայոց Պատրիարքական Աթոռի հաստատման 500-ամյակը:

Սրբազան պատրիարք հայրը նոր հեռանկարներ և ծրագրեր, «առաջադրություններ և իղձեր» էլ ունի, է՛լ ավելի կազմակերպելու և արդյունավետ դարձնելու համար հոգևոր-եկեղեցական կյանքը, իր խնամքին հանձնված ժողովրդի ծոցում:

«Թող Աստված օրհնե մեր միասնության ուխտը,— բարեմաղթում էր Վեհափառ Հայրապետը հրաժեշտի սեղանի առաջ,— **թող Աստված օրհնե մեր եղբայրությունը և մեր սուրբ գործը: Մեր գործը Աստուծո գործն է, մեր գործը եկեղեցաշեն գործ է, մեր գործը հայ հավատացյալ ժողովուրդի միասնության և հոգևոր լուսավորության գործ է»:**

Սրբազան պատրիարք հայրը այցելեց Էջմիածնի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդի, Ս. Խոր Վիրապի, Հաղբատի, Սանահնի, Սևանի, Մարմաշենի և Հառիճա վանքերը, Երևանի, Լենինականի և Կիրովականի եկեղեցիները, Ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը և հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով, հոգեպես և ֆիզիկապես կապդուրված:

Սրբազան պատրիարք հայրը շեշտեց.

«Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Էջմիածնի միաբանությունը շատ բախտավոր են, այս շրջանին մեջ ունենալով Վեհափառ Հայրապետի նման պայծառ և շատ գործունյա հոգևորական բարձր անձնավորություն մը՝ իբրև Պետ և Հայր:

Արդեն իսկ Իր անվան որպես մակդիր «Շինարար» տիտղոսը կցորդված է:

Ես մասնավոր կերպով սակայն կուզեմ անդրադառնալ Վեհի արտասահմանի մեր եկեղեցիներուն նկատմամբ ցույց տված հոգածության:

Պատմության պիտի անցնի Վեհը որպես այն բացառիկ Կաթողիկոսը, որ հատուկ դիտավորությունը ունեցած է այցելելու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հմայքն ու օրհնությունը տանելու Սփյուռքին, մեր ցրված համայնքներուն:

Վեհափառը Իր գահակալության օրեն ասդին ամրորեն և հեղինակաբար Իր ձեռքին մեջ առավ Մայր Աթոռին ղեկավարությունը և կայն դրավ իր պատմական հունին և առաքելության մեջ»:

Վեհափառ Հայրապետը և պատրիարք սրբազանը Մայր Աթոռում ունեցան մտերիմ հանդիպումներ և միասին քննարկեցին Հայ Եկեղեցու ներկա կյանքին և գործունեության հետ կապված մի շարք հարցեր, լիակատար համաձայնությամբ:

Սրբազան պատրիարք հայրը, անդրադառնալով Սփյուռքի ազգային եկեղեցական կյանքին, ասաց.

«Ստամբուլեն ելլելես հետո, ո՛ւր որ հանդիպեցա՝ Աթենք, Միլան, Նիս, Լիվբոն, Լոնդոն, ամենուրեք, պաշտոնական և ժողովրդային իմ շփումներու ընթացքին, ամենքն ալ անխտիր մասնավոր խնդրանք մատուցին ինձի, որպեսզի իրենց և՛ որդիական և՛ հավատարմական զգացումներուն թարգմանը հանդիսանամ Վեհափառ Հայրապետի մոտ:

Սիրով կկատարեմ այդ պարտականությունը, Ս. Էջմիածնի նվիրական այս կամարներուն տակ:

Այս պահուս գիտեմ, թե Ձեր և մեր սիրտերը խռովող երևույթներ ալ կան արտասահմանի ինչ-ինչ վայրերուն մեջ: Բայց կվստահեցնեմ Ձերդ Վեհափառությունը իմ ականատեսի վկայությամբ, որ մեր ժողովուրդի ջախջախիչ մեծամասնությունը և ընտրելագույն և գիտակից մեծ զանգվածը Վեհիդ կողքին է և հարած է Ձեզի հետ սերտ սիրով և խոր հարգանքով:

Մեր համոզումով, Հայ Եկեղեցին հաստատուն միակ ծառ մըն է, որուն արմատը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ կգտնվի, և որ ունի իր մեծ ու փոքր ճյուղերը՝ նույն արմատին վրա ընձյուղած:

Այն ճյուղը, որ հաստատված չէ այդ ծառին վրա, կարելի չէ նկատել մաս Հայ Եկեղեցվո»:

Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք հոր այցելությունը Մայր Աթոռ, արդարև, պատմական է և նշանակալից:

Երկու Աթոռների կանոնական հարաբերությունները, ինչպես անցյալում, կշարունակվեն այսուհետև ևս՝ հոգևոր և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու:

Բարեմաղթենք Վեհափառ Հայրապետի հետ՝

«Թող անսասան և շեն մնա Ձեր Պատրիարքական Աթոռը Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետության ծոցին մեջ, լուսավորված Քրիստոսի և ազգի սիրով»:

«Թագաւոր երկնաւոր, վեկեղեցի քո անշարժ պահեա»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՊՐ. ԿԱՐԼԵՆ Լ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Օգոստոսի 30-ին, ուրբաթ, երեկոյան ժամը 7-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին այցելեց Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նոր նշանակված նախագահ պր. Կարլեն Դալլաքյանը, ընկերակցությամբ տեղակալ պր. Սուրեն Հովհաննիսյանի:

Տեսակցության ներկա էին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը և գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի և Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պր. Կարլեն Լ. Դալլաքյանի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց ջերմ մթնոլորտում:

ՀԱՆՈՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ

Օգոստոսի 5-ին, Մոսկվայում, Կրեմլի մեծ պալատում, ստորագրվեց մթնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ միջուկային վենքի փորձարկումների արգելման պայմանագիրը:

Սույն պատմական փաստաթուղթը ստորագրեցին ՍՍՌՄ արտաքին գործերի մինիստր Ա. Ա. Գրոմիկոն, ԱՄՆ-ի պետական քարտուղար Դին Ռասկը և Մեծն Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր լորդ Հյումը:

Պայմանագրի ստորագրմանը ներկա էր նաև Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Ու Տանը:

Դահլիճում էին գտնվում ՍՍՌՄ Մինիստրների սովետի նախագահ Ն. Ս. Խրուշչովը, այլ պետական ղեկավարներ, ինչպես նաև սովետական և արտասահմանյան թղթակիցներ:

Մթնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ միջուկային վենքի փորձարկումների արգելման Մոսկվայում ստորագրված պայմանագիրը կարևոր քայլ է միջազգային լարվածությունը թուլացնելու և խաղաղությունը պահպանելու, ամրապնդելու ուղղությամբ:

Միջազգային վենքի փորձարկումների արգելման պայմանագրի ստորագրումը հսկայական գոհունակությամբ և խոր բերկրանքով ընդունվեց ողջ աշխարհում:

Կայուն խաղաղության՝ մարդկության վերջնական ու վեհ նպատակին՝ հասնելու գործի սկիզբն է դրվում: Դա առաջին քայլն է մյուսների շարքում:

Այդ պայմանագիրը պատմական մեծ նշանակություն ունեցող փաստաթուղթ է, որն իր դրական ներգործությունը կունենա նաև միջազգային այլ հարցերի՝ բանականությամբ և փոխադարձ վստահությամբ լուծման, պետությունների բարվոք հարաբերությունների վրա:

Աշխարհը հասկանում և գնահատում է Մոսկվայում ստորագրված պայմանագրի վեհ և մարդասիրական նշանակությունը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ևս, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, ջերմորեն ողջունում է պայմանագրի ստորագրումը, որն արտահայտում

է բովանդակ աշխարհում, առանց կրոնական և դավանական խտրության, համայն ժողովուրդների, կրոնների, եկեղեցիների հույսն ու երազանքը:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, այս բարեբաստիկ առթիվ, օգոստոսի 7-ին, հետևյալ հեռագիրն ուղարկեց ՍՍՌՄ Մինիստրների սովետի նախագահ Նիկիտա Սերգեևիչ Խրուշչովին, ԱՄՆ-ի նախագահ Ջ. Քենեդիին և Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստր Մաք Միլանին.

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ գոհունակությամբ ընդունեց այն լուրը, որ մեծ տերությունների կառավարություններն ստորագրել են պայմանագիր մթնոլորտում, տիեզերական տարածության մեջ և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումներն արգելելու մասին: Հայ հավատացյալ ժողովրդի ու համայն աշխարհի քրիստոնյաների համար չկա ավելի մեծ ուրախություն, քան այն լուրը, որ մեծ տերությունները դրել են բովանդակ մարդկությանը ջերմամիջուկային պատերազմի սարսափներից փրկելու սկիզբը:

Ներդաշնակորեն կառուցված մեր հրաշալի աշխարհում, որը հարուստ է Աստուծո շնորհներով, մեկընդմիշտ պետք է վերանան պատերազմի մահաբեր ամպերը և պետք է շողա խաղաղության անամպ երկնակամարը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, հայ հավատացյալ ժողովուրդը, աշխարհի բոլոր քրիստոնյաների հետ միասին, իրենց աղոթքներն են վերընծայում և հույս հայտնում, որ մեծ տերությունների ղեկավարները, հանուն Սուրբ Ավետարանի, հանուն Քրիստոսի, հանուն համայն մարդկության, հնարավորություն կգտնեն շուտափույթ համաձայնության հասնելու ընդհանուր և լրիվ վինաթափման շուրջը և օրենքից դուրս կհայտարարեն պատերազմը՝ որպես մեծագույն ոճրագործություն ընդդեմ Աստուծո և մարդկության:

Թո՛ղ ամենաբարի Աստուծո օրհնությունը լինի բոլոր խաղաղասեր ժողովուրդների վրա»:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԻԳ ՊԱՊԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ ԵՎ ԿԱՐԴԻՆԱԼ ԱԼՈՒՋԻ ՄԱՋԵԼԼԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ՆՈՐԻՆ ԱՄԵՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԱՄԼԵՏՈ ՉԻԿՈՆԻԱՆԻՆ

ՀՌՈՄ, ՎԱՏԻԿԱՆ

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու անունից մասնակցում ենք Ձեր մեծ սուգին և Ս. Էջմիածնի Սեղանի առաջ աղոթում Նորին Սրբություն Հովհաննես ԻԳ Պապի հոգու խաղաղության համար:

Թո՛ղ Աստված Նրա բարի հոգին քաղցրությամբ ընդունի արդար հոգիների հավիտենական օթևանում:

Թո՛ղ Աստված հաջողությամբ պսակի աշխարհի խաղաղության սուրբ գործը, որի համար ջերմեռանդ աղոթող և աշխատող հանդիսացավ հանգուցյալ Սրբազան Քահանայապետը, Իր երկրավոր կյանքում:

Թո՛ղ Աստված անսասան և փառավոր պահի Ձեր մեծ Եկեղեցին:

Սիրով ի Քրիստոս՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ
5 հունիսի 1963 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Խորապես վշտացված Հովհաննես ԻԳ Պապի մահվան առթիվ քրիստոնեական սիրով արտահայտված Ձեր վշտացմունքներից, սրտագին շնորհակալություն ենք հայտնում Էջմիածնի պատկառելի Կաթողիկոսության՝ առ Աստված ուղղած աղոթքների համար ի հավիտենական հանգիստ հանգուցյալ Քահանայապետի հոգու, որի խաղաղության և միասնության նվիրված կյանքը օրինակելի է բոլորի համար:

Եղբայրական սիրով ի Հիսուս Քրիստոս՝

ՎԱՏԻԿԱՆ
8 հունիսի 1963 թ.

ԿԱՐԴԻՆԱԼ ԱԼՈՒՋԻ ՄԱՋԵԼԼԱ, ԳԱՄԵՌԼԻՆԳ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՊԱՎՂՈՍ Զ ՊԱՊԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՎ ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ Ա. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

ԷՋՄԻԱԾԻՆ

Զերդ Սրբություն.

Հռովմեական Կաթոլիկ Եկեղեցու կարդինալները, համաձայն Եկեղեցու կանոնադրությանց, հավաքվեցին ժողովի, և Միլանոյի Միտրոպոլիտ-Արքեպիսկոպոս Նորին Ամենապատվություն Ջիովաննի Բատիստա կարդինալ Մոնտինիին ընտրեցին, հաջորդելու երջանկահիշատակ Նորին Սրբություն Հովհաննես ԻԳ Պապին: Նա որոշել է ընդունել Պավղոս Զ անունը:

Սուրբ Հայրը պատվել է ինձ՝ պարտականություն դնելով իմ վրա սույն հաճելի իրողության լուրը պաշտոնապես հաղորդելու Զերդ Սրբության և, Զեր միջոցավ, Զեր Եկեղեցուն:

Ս. Հոգին թո՛ղ ներշնչի սրտերը և ուղղի ճիգերը այն բոլոր մարդկանց, որոնք տքնում են Աստուծո սուրբ ժողովի հոգևոր շինության համար, ի կատարումն մեր միակ Տիրոջ աղոթքին, «զի եղիցին մի»:

Իմ լավագույն մաղթանքների և իմ խոնարհ աղոթքի հավաստիքով,

Զերդ եղբայրորեն ի Քրիստոս՝

ԿԱՐԴԻՆԱԼ ՕԳՈՍՏԻՆՈՍ ԲԵԱ

Քաղաք Վատիկան, 25 հունիսի 1963 թ.

ՔՐԻՍՏՈՍԱՀԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ Ի ԳԱՀԷ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԱՌ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆ Տ. Տ. ՊԱՒՂՈՍ Զ ՊԱՊՆ, ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆ ՀՌՈՎՄԱՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ի ՎԱՏԻԿԱՆ, ՀՌՈՄ

Զերդ Սրբություն.

Քաղցր հոգումով կարդացինք Նորին Գերազանցություն Կարդինալ Օգոստինոս Բեայի 25 հուլիս 1963 թվակիր՝ Մեզ ուղղված պաշտոնական գրությունը, ի մասին Զերդ Սրբության ընտրության և գահակալության:

Արդ, Մենք երջանիկ ենք շնորհավորելու Զերդ Սրբությունը Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցվո և Մեր անունով, սրտաբուխ աղոթքով, որ Տերը Զեզ պարգևե քահանայապետական բեղուն գործունեության երկար տարիներ, որպեսզի առավել բաշխվի Սուրբ Ավետարանի լույսը մարդկային աշխարհին մեջ, որպեսզի քրիստոնեական եկեղեցիները առավել սիրեն վիրար ու գործակցին եղբայրաբար, Աստուծո փառքին նվիրված իրենց միևնույն առաքելության մեջ, և որպեսզի ժողովուրդները առավել մոտենան իրարու բարի հաճությամբ և ըլլա «յերկիր խաղաղութիւն», ի լրումն աստվածային մեծ պատվիրանին:

Հաճեցեք վստահ ըլլալ, թե հայ ժողովուրդի քրիստոնեական հավատքի բազմադարյան կեդրոն Ս. Էջմիածնի Գահի վրա ունիք Զերդ Սրբության լծակից Եղբայր մը, որ Իր աղոթքները միշտ պիտի միացնե Զեր աղոթքներուն, վասն հաստատության ու ծաղկման Քրիստոսի Եկեղեցվոյն և վասն խաղաղության համայն աշխարհին:

Մաքուր սիրով ի Քրիստոս՝

Տուաւ գիրս ի 10-ն յուլիսի
1963 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԺԲ,
ի վանս Սրբոյ Էջմիածնի:

ՎԱՉԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻ

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԻԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՍՆԱՄՅԱԿԸ

1963 թվականի հուլիսի 14-ից մինչև 21-ը, Մոսկվայի պատրիարքանիստ Ս. Հայտնութիւն եկեղեցում և ապա Մոսկվայից 70 կմ. հեռու գտնվող ռուսական Զագորսկ քաղաքի Ս. Սերգեյի վանքում, տեղի ունեցան Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Նորին Սրբութիւն Ալեքսի Պատրիարքի եպիսկոպոսական ձեռնադրության 50-ամյակի հանդիսությունները։

Հոբելյանական հանձնաժողովի անունից, ապրիլի 29-ին, հանդիսությանց մասնակցելու համար, հրավեր էր ստացել նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը։

Վեհափառ Հայրապետը սիրով ընդունելով եղած հրավերը, նշանակեց մասնավոր պատգամավորություն՝ մասնակցելու համար Ալեքսի Պատրիարքի հոբելյանական հանդիսություններին։

Պատգամավորությանը գլխավորում էր Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Պատվիրակության կազմում էին Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը և Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։

Հուլիսի 13-ին նշանակված պատգամավորությունը մեկնեց Մոսկվա։

Մոսկվայի «Վնուկովո» օդանավակայանում Հայ Եկեղեցու պատվիրակությանը դիմավորեցին, հանուն Պատրիարքի, Իվանովո քաղաքի Լեոնիդ արքեպիսկոպոսը և Մոսկվայի ռուսաց Ս. Աստվածածին եկեղեցու ավագերեց Ալեքսանդր քահանան։

Հայ Եկեղեցու պատվիրակությանը դիմավորեցին նաև Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը և Ժիրայր սարկավագ Կոնսուլյանը։

Հայ Եկեղեցու պատգամավորությունը առաջնորդվեց «Ուկրաինա» հյուրանոցը, ուր արդեն ժամանել էին հանդիսությանց հրավիրված այլ եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ։

Հուլիսի 14-ին, կիրակի օր, Հայ Եկեղեցու պատվիրակությունը ներկա եղավ Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում, ուր պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը և ներկա հավատացյալներին հաղորդեց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու օրհնությունները։

Հուլիսի 15-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 11-ին, Հայ Եկեղեցու պատվիրակությունը, պաշտոնապես այցելելով Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին, հաղորդեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի եղբայրական սիրալիր ողջույններն ու սրտագին բարեմաղթությունները Նորին Սրբության եպիսկոպոսական ձեռնադրության 50-ամյակի բարեբաստիկ առիթով։

Տեսակցության ժամանակ Տ. Սահակ արքեպիսկոպոսը Ալեքսի Սրբազան Պատրիարքին հանձնեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրա-

պետի նվերը՝ արծաթե գեղեցիկ պատվանդանի վրա Նորին Սրբության քանդակված նկարը՝ գործ Երևանի հայ անվանի ոսկերիչների։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նվերը հոբելյար Պատրիարքը ընդունեց ուրախությամբ՝ շնորհակալություն հայտնելով եղբայրական ուշադրության համար։

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, հանուն Սրբազան Պատրիարք Հոր, «Ուկրաինա» հյուրանոցում, Հայ Եկեղեցու պատվիրակության փոխայցելության եկան Լենինգրադի միտրոպոլիտ Պիմենը և Մոսկվայի Ռուս Եկեղեցու ներքին հարաբերությունների բաժնի ղեկավար Կիպրիան եպիսկոպոսը։

Ամսի 17-ին և 18-ին, բոլոր պատգամավորությունները երկու օրով մեկնեցին Զագորսկի ռուսական վանքը, ուր պետք է սկսեին հոբելյանական հանդիսությունները։

Զագորսկում, հանդիսության մասնակցող բոլոր պատվիրակությունները, եկեղեցական թափորով, հոգևոր երգեցողությամբ առաջնորդվեցին դեպի Ս. Սերգեյի եկեղեցին, ուր իրենց ուխտը կատարելուց հետո, նույն հանդիսությամբ առաջնորդվեցին Զագորսկի ռուսական հոգևոր ճեմարանի եկեղեցին, ուր տեղի ունեցավ հանդիսության պաշտոնական բացումը։

Հանդիսության նախագահում էր հոբելյար Սրբազան Պատրիարքը։ Ներկա էին նաև Անտիոքի Պատրիարք Թեոդոսիոս Զ-ը, Վրաց Կաթողիկոս Եփրեմ Բ-ը, Սերբիայի Հերման, Ռումինիայի Հուստինիանոս և Բուլղարիայի Կյուրեղ պատրիարքները։

Այնտեղ էին նաև Պոլսի Հունաց Տիեզերական Պատրիարքի, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի պատրիարքությանց, Կիպրոսի արքեպիսկոպոսության, Հունաստանի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Ֆինլանդիայի և այլ օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչներ։

Հյուրերի թվում էին Հնդիկ Մալաբար, Վատիկանի Կաթոլիկ, Անգլիկան և Հին Կաթոլիկ եկեղեցիների, ինչպես նաև ՍՍՌՄ-ում գտնվող Լյութերական, Մկրտչական եկեղեցիների պատվիրակությունները։

Հանդիսությունը բացվեց հոբելյանական հանձնաժողովի նախագահ, միտրոպոլիտ Պիմենի աղոթք-ճառով։

Այնուհետև Ցարոսլավլի և Ռոստովի Նիկոտիմ արքեպիսկոպոսը ներկայացրեց Ալեքսի Պատրիարքի կենսագրությունը։ Խոսք առնելով, պատգամավորներից շատերը շնորհավորեցին Նորին Սրբության հոբելյանը սրտագին բարեմաղթություններով։

Հանդիսության ժամանակ խոսք առավ նաև Հայ Եկեղեցու պատվիրակության ղեկավար Տ. Սահակ արքեպիսկոպոսը և կարդաց Վեհափառ Հայրապետի հետևյալ ուղերձ-շնորհավորականը.

«Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս.

Այսօր մեծ տոն է մեր հոգիների համար։ Տոնը Ռուսաց Ուղղափառ մեծ Եկեղեցին տոնում է Ձերդ Սրբության եպիսկոպոսության 50-ամյակը. Մենք չենք կարող Մեր ուրախությունը չմիացնել բոլորի ուրախության, այսպիսով էլ ավելի լուսափայլ դարձնելու համար այն դափնեպսակը, որ Ձեր գլխի վրա շողում է այսօր։

Մենք և համայն հայ հավատացյալ ժողովուրդը ճանաչում ենք Ձեզ, սիրում ենք Ձեզ և խորապես գնահատում՝ Ձեր հովվապետական երկարամյա գործունեությունը, որով զարդարվել է Ձեր պատկառելի անձնավորությունը և Աստուծուն նվիրյալ Ձեր կյանքը։

Այս երջանիկ առիթով, Մենք պիտի կամենանք Մեր հարգանքի, սիրո հավաստիքը Ձեզ ներկայացնել հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո, որ ջերմ, եղբայրական կապերով կապված է Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հետ, մոտ 200 տարիներից ի վեր։

Ձերդ Սրբությունը հոգևոր մի հեղինակություն է այսօր ոչ միայն Պրավոսլավ եկեղեցիների ծոցում, այլ համայն քրիստոնեության մեջ։

Ձերդ Սրբությունը լուսամիտ մի անձնավորություն է, որ ճշմարիտ ավետարանական ոգիով մերձեցնում է ցանկանում քրիստոնեական եկեղեցիների միջև և այսպիսով ճանապարհ է հարթում քրիստոնյա եկեղեցիների անկեղծ եղբայրակցության և անբաժան գործակցության, մեր օրերի մարդկությանը հուզող հարցերի բարվոք լուծման ի խնդիր։

Ձերդ Սրբությունը մեր օրերում բացառիկ տեղ է գրավում մարդկության գիտակցության մեջ նաև իբրև խաղաղության խոսքի մեծ ավետաբեր։ Ձեր աղոթքը և Ձեր տարած աշխատանքը աշխարհի ժողովուրդների բարեկամության և խաղաղ գոյակցության ի նպաստ, թանկ են գնահատվում բոլորի կողմից։ Վասն զի Ձեր խոսքը արտահայտությունն է քրիստոնեական խղճի, Ձեր խոսքը հարազատ արտահայտությունն է ռուս մեծ ժողովրդի բարի սրտի։ Ձեր խոսքը քաղցր է և հեղինակավոր։

Երկար ապրեցեք, սիրեցյալ Եղբայր Մեր, երկաթյա առողջությամբ և հոգեկան խաղաղությամբ։

Այո՛, ապրեցեք տակավին երկար տարիներ, որպեսզի վայելեք բարի պտուղները Ձեր սերմանած սերմերի, որպեսզի ուրախացնեք նաև Մեզ և Ձեր բոլոր եղբայրներին, որոնք սիրում են Ձեզ և հարգում։

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և հայ ժողովրդի, շնորհավորում ենք

Զեղ ջերմապես և աղոթում առ Աստված, որպեսզի հավետ անսասան մնա և միշտ փառքի մեջ աճի և ծաղկի Ռուս Պրավոսլավ մեծ Եկեղեցին։

«Այսօր է օր զոր արար Տէր, եկայք ցնծասցուք և ուրախ եղիցուք ի սմա» (Սաղմ. ՃԺէ 24)։

Հանդիսությունը վերջացավ պատգամավորությունների ողջույնի և շնորհավորական ելույթներով։ Այն փակվեց աղոթքով, որից հետո պատգամավորներից շատերը վերադարձան Մոսկվա։

Հուլիսի 18-ին Զագորսկում տեղի ունեցավ հանդիսության շարունակությունը։ Այդ օրը Ռուս Եկեղեցու համար մեծ տոն էր, տոն Ս. Սերգեյի։

Հանդիսավոր այս առիթով, օրթոդոքս բոլոր պատրիարքների մասնակցությամբ, հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց Ալեքսի Պատրիարք Հայրը։

Հավարտ սուրբ պատարագի, որին ներկա էին բոլոր պատգամավորությունները և հավատացյալների հոծ բազմություն, հանդիսավոր իրադրության մեջ, վանքի ընդարձակ բակում, տեղի ունեցավ դոհաբանական մաղթանք։

Շատ տպավորիչ և վեհ էր հանդիսությունը։

Նույն օրը երեկոյան, վանքի սեղանատան մեծ դահլիճում, ի պատիվ պատգամավորության, հոբելյանական հանձնախմբի կողմից կազմակերպվել էր պաշտոնական մեծ ընդունելություն խանդավառ և ջերմ մթնոլորտում, ուր փոխանակվեցին ողջույնի և շնորհավորության ճառեր։

Հանդիսության իր մասնակցությունն էր բերում Պատրիարքարանի մեծ երգչախումբը։

Ամսի 19-ին, ուրբաթ, պատգամավորները խումբ-խումբ այցելեցին Մոսկվայի տեսարժան վայրերը։

Երեկոյան ժամը 19-ին, ՍՍՌՄ Մինիստրների սովետին առընթեր Ռուս Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Վ. Ա. Կուրսևոդովը, ի պատիվ պատգամավորությունների, «Պրագա» հյուրանոցում կազմակերպել էր ընդունելություն, որին ներկա էին բոլոր պատգամավորությունները, Ալեքսի Պատրիարքի գլխավորությամբ։

Հուլիսի 20-ին, շաբաթ օր, պատգամավորները նորից ծանոթանում են Մոսկվային։ Նրանք այցելեցին Կրեմլ, համալսարան, թանգարան, ռուսական վանքերն ու եկեղեցիները։

Հուլիսի 21-ին, կիրակի, Մոսկվայի պատրիարքանիստ Ս. Հայտնություն եկեղեցում, պատարագեց Անտիոքի Թեոդոսիոս Զ Պատրիարքը։

Սուրբ պատարագին մասնակցում էին բոլոր օրթոդոքս եկեղեցիների պետերը և ներկայացուցիչները, իսկ պատգամավորությունները և հյուրերը տեղ էին գրավել աստյանում։

Երեկոյան ժամը 8-ին, «Ուկրաինա» ռեստորանում, Ռուս Պրավոսլավ Եկեղեցու Ս. Սինոդը, ի պատիվ պատգամավորությունների, կազմակերպել էր ճոխ ընդունելություն։

Ընդունելության ժամանակ փոխանակվեցին ողջույնի և շնորհակալության ճառեր։ Վերջում ելույթ ունեցավ Մոսկվայի և Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին, որը ջերմ շնորհակալություն և երախտագիտություն հայտնեց բոլոր պատգամավորություններին՝ հոբելյանական հանդիսության նրանց ներկայության և ջերմ եղբայրական բարեմաղթության համար։

Հրաժեշտի ընդունելությունը վերջացավ ջերմ, խանդավառ մթնոլորտում, արձանագրելով այն գեղեցիկ փաստը, որ եկեղեցիների համագործակցությունը, միջեկեղեցական հանդիսություններն ու հանդիպումները հուսալի քայլեր են Քրիստոնյա Եկեղեցու միության և համագործակցության, ժողովուրդների մերձեցման և եղբայրության և աշխարհում խաղաղության հաղթանակի համար։

Հուլիսի 22-ին, Հայ Եկեղեցու պատգամավորությունը Մայր Աթոռ վերադարձավ լավագույն տպավորություններով։

Մի սրտագին էջ ևս ավելացավ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Ռուս մեծ Պրավոսլավ Եկեղեցու ժամանակակից եղբայրական հարաբերությունների պատմության մեջ։

ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ՇԱՔԱՐՅԱՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԻ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ամենապատիվ պատրիարք հայոց Թուրքիայի Տ. Շնորհք արքեպիսկոպոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց շաբաթ, 13 հուլիսի 1963 թվականի ժամը 12-ին:

Սրբազան պատրիարքին ուղեկցում էին Տ. Վազգեն վարդապետ Գպրսլյանը և տիար Կարապետ Ղազարյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում եղբայրական սիրով դիմավորեց սրբազան պատրիարքին, ջերմապես ողջունելով նորին ամենապատվության պատմական սույն այցելությունը:

Փրկչի Իջման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետն ու սրբազան պատրիարքը վերանորոգեցին իրենց միասնության ուխտը և միատեղ աղոթեցին Ս. Եկեղեցվո հաստատության և աշխարհի խաղաղության համար:

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը ունեցան մտերիմ հանդիպումներ և միասին քննարկեցին Հայ Եկեղեցու ներկա կյանքի և գործունեության հետ կապված մի շարք հարցեր, լիակատար համաձայնությամբ:

Տ. Շնորհք սրբազան պատրիարքը սուրբ պատարագ մատուցեց Մայր Տաճարում հուլիսի 21-ին, Տիրոջ հրաշալի Այլակերպության տոնին, և տվավ իր պատգամը բազմահազար հավատացյալ ժողովրդին:

Սրբազան պատրիարքն այցելեց Էջմիածնի, Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի, Ս. Շողակաթի, Ս. Գեղարդա, Ս. Խոր Վիրապի, Հաղբատի, Սանահինի, Սևանի, Մարմաշենի և Հառիճա պատմական վանքերը, ինչպես և Երևանի, Կիրովականի և Լենինականի եկեղեցիները:

Սրբազան պատրիարքն այցելեց նաև Օշականում Ս. Մեսրոպի դամբարանը, Երևանի Մատենադարանը, պատմության թանգարանը և Բյուրականի աստղադիտարանը:

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ դոկտ.-պրոֆ. Նագուշ Հարությունյանը հուլիսի 22-ին ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետին և Թուրքիայի հայոց պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոսին: Ընդունելության ընթացքում տեղի ունեցավ բարեկամական ջերմ զրույց:

Տ. Շնորհք պատրիարքը և իր շքախումբը հուլիսի 23-ին հրաժեշտ տվին Նորին Ս. Օծության, իրենց վերադարձի ճանապարհին այցելություն տալով Թբիլիսիի և Մոսկվայի հայոց եկեղեցիներին:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
23 հուլիսի 1963 թ.

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ Տ. ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ժամանում

Հուլիսի 13-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին ժամանեց Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը։

Նորին սրբության ուղեկցում էին հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Գպրսյանը՝ Լոնդոնից, որպես գավազանակիր և պր. Կարապետ Ղազարյանը Ստամբուլից, որպես Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի խնամակալության ատենապետ։

Երևանի օդանավակայանում, հանուն Վեհափառ Հայրապետի, բարի գալստյան սրտագին խոսքերով, սրբազան պատրիարք հոր և նրա շքախմբին պաշտոնապես և ջերմորեն դիմավորեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

Սրբազան պատրիարք հորը դիմավորեցին նաև Գերագույն Հոգևոր Խորհրդի մյուս անդամները գերաշնորհ Տ. Ասողիկ սրբազանի գլխավորությամբ, ինչպես նաև Վրաստանի հայոց թեմի առաջնորդ՝ գերաշնորհ Կոմիտաս, Շիրակի թեմական գերաշնորհ Տ. Մաշտոց և Բաքվի առաջնորդ գերաշնորհ Տ. Հուսիկ եպիսկոպոսները, Մայր Աթոռի միաբաններ հոգեշնորհ Տ. Մուշեղ և Տ. Գրիգոր վարդապետները, հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղան, սարկավագների խումբը, Արարատյան թեմի քահանայից դասը, Մայր Աթոռի պաշտոնեությունը և հավատացյալների հոծ բազմությունն։

Թուրքիայի հայոց ամենապատիվ պատրիարքին դիմավորեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղամալ պր. Ս. Հովհաննիսյանը։

Այնուհետև սրբազան պատրիարքը առաջնորդվում է Մայր Աթոռ։

Մայր Տաճարի զանգերը հնչում են տոնականորեն։

Մայրավանքի արևելյան դարբասի առաջ, եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը «Հրաշափառ»-ով մուտք է գործում Մայր Տաճար։

Հայ Եկեղեցու տարեգրության մեջ վերջին 500 տարիների ընթացքում, 1461 թվականին Պոլսի հայոց Պատրիարքության հաստատումից հետո, առաջին անգամն է, որ Թուրքիայի հայոց պատրիարքը պաշտոնական այցով և ուխտով գալիս է Մայր Աթոռ Ս. Էջմիածին։

Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը եղբայրական ողջագուրումով և ջերմորեն բարի գալուստ է մաղթում սրբազան պատրիարքին։

Պահը հուզիչ է և պատմական։

Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում բարի գալուստ է մաղթում Թուրքիայի հայոց պատրիարքին

Իջման Ս. Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը վերանորոգում են իրենց միասնության ուխտը և միատեղ աղոթում Հայ Եկեղեցու հաստատության և աշխարհի խաղաղության համար։

Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը

Վեհափառ Հայրապետը, ողջունելով նորին ամենապատվության պատմական սույն այցելությունը Մայր Աթոռ, ասում է.

«Ողջո՛ւյն և բարի ժամանում Թուրքիո ամենապատիվ Շնորհք սրբազան պատրիարքին:

Հույժ սիրեցյալ եղբայր մեր ի Քրիստոս, անմահման ուրախությամբ կողջունենք Ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս լուսավոր կամարներուն տակ: Ուրախ ենք մենք, ուրախ է Մայր Աթոռիս միաբանությունը, ուրախ է մանավանդ Հայաստանի հավատավոր ժողովուրդը:

Իրոք խորապես կհուզե և կմխիթարե Մեզ Ձեր այս պատմական այցելությունը և Մենք այն հաստատ ու քաղցր զգացումը ունինք, թե նոր լույս մը կբացվի այսօրվընե սկսյալ Մայր Աթոռիս և Ձեր Աթոռին միջև, թեև միշտ սիրալիր եղած են մեր Աթոռներու հարաբերությունները նաև անցյալին մեջ, Հայաստանյայց Եկեղեցվո կանոններուն, ավանդություններուն և միության սկզբունքին վեմին վրա հաստատուն:

Կմաղթենք, սիրեցյալ եղբայր Մեր, որ Ձեր այցելության օրերը ի Հայաստան ըլլան հաճելի և հոգեպարար: Գիտենք, թե Ձեր հավատավոր հոգին ջերմապես պիտի մխիթարվի՝ ծնրադրելով և աղոթելով մեր պատմական հին վանքերու և եկեղեցիներու սուրբ սեղաններու առաջ:

Կխորհինք նաև, թե առիթներ պիտի ունենանք եղբայրաբար քննարկելու և միասին խոսելու այն բոլոր հարցերու մասին, որոնք մեր Ս. Եկեղեցվո առաջ կդրվին մեր օրերուն: Վստահ ենք, թե այս տեսակետեն ևս արդյունավետ պիտի ըլլա մեր հանդիպումը:

Ուրեմն կրկին բարի գալուստ Ձերդ Սրբազնության և Ձեզ ուղեկցող անձանց: Թող Աստված օրհնե այս օրը և մեր եղբայրությունը, և պայն պահե ամբողջ ու անխառով այժմ և հավիտյան՝ ի պայծառություն մեր Ս. Եկեղեցվո և ի փառս հայ հավատացյալ ժողովուրդին, որ ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի: Ամեն»:

Ամենապատիվ Սրբազան Պատրիարք Հոր պատասխան խոսքը

Վեհափա՛ռ Տեր, սիրեցյալ և շնորհազարդ Հայրապետ.

Խորապես զգացված եմ Վեհիդ ողջույնի խոսքերեն: Ինձի համար մեծ բախտավորություն եղավ, որ այսպես հնարավորություն ստեղծվեցավ վերստին գալու Ս. Էջմիածին, լրացնելու համար ուխտս, զոր գրեթե կիսատ ձգած էի, ութ տարիներ առաջ, իմ առաջին այցելության առիթով, 1955 թվականի աշնան:

Եկած եմ հատկապես փոխարինելու համար այն սփոփարար այցելությունը, զոր Ձերդ Ս. Օծությունը շնորհեց Թուրքիո հայության 1961 թվականի հունիսին, երջանկահիշատակ Տ. Գարեգին պատրիարքի վախճանման առիթով:

Դժվար է Մայր Տաճարին մեջ ներկա եղող բազմության համար երևակայել, թե ինչ խոշոր և ցնծագին ցնցում մը հառաջ բերավ Վեհափառ Հայրապետի այցելությունը Ստամբուլ:

Անակնկալ մահով մեր շատ սիրեցյալ և մեծարյալ պատրիարքին, գրեթե շվարումի մատնված էր ամբողջ Ստամբուլի հայությունը:

Ձերդ Վեհափառության օրհնաբեր այցելությունը հանկարծ հոգիները լուսավորեց և սիրտերը ամրապնդեց և ամենքը բոլորվեցան Ձեր շուրջը և Ձերդ Սուրբ Օծության սրտապնդիչ խոսքերը բարձրացուցին ամենքիս տրամադրությունները:

Հապար-հապարներ պիտի ուզեին գտնվիլ այսօր այստեղ, այս տեղվույն վրա, ուր ես կանգնած եմ և ունենալ այն բախտավորությունը, որ իմս է այժմ:

Ասիկա մեծ շնորհ մը կնկատեմ, որուն համար Աստուծո գոհություն կմատուցանեմ:

Վեհափա՛ռ Տեր, բերած եմ նաև Ձերդ Ս. Օծության Թուրքիո իմ հայ համայնքին՝ Ձեր հոգևոր զավակներուն՝ որդիական սիրո, հավատարմության և խոր հարումի զգացումները:

Կվստահեցնեմ Ձերդ Ս. Օծությունը, թե Ստամբուլի հայությունը կապված կմնա իր Եկեղեցիին և հայրենի ավանդությանց, ավանդություններ, որոնց գլուխը կգտնվի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին հավատարմորեն կապված ըլլալու գիտակցությունը:

Ստամբուլեն ելլելես հետո, ո՛ւր որ հանդիպեցա՝ Աթենք, Միլան, Նիս, Լիվբոն, Լոնդոն, ամենուրեք, պաշտոնական և ժողովրդային իմ շփումներու ընթացքին, ամենքն ալ անխտիր մասնավոր խնդրանք մատուցին ինձի, որպեսզի իրենց և՛ որդիական և՛ հավատարմական զգացումներուն թարգմանը հանդիսանամ Ձեր մոտ:

Սիրով կկատարեմ այդ պարտականությունը Ս. Էջմիածնի նվիրական այս կամարներուն տակ:

Այս պահուս գիտեմ, թե Ձեր և մեր սիրտերը խռովող երևույթներ կան արտասահմանի ինչ-ինչ վայրերուն մեջ: Բայց կվստահեցնեմ Ձերդ Վեհափառությունը իմ ակնատեսի վկայությամբ, որ մեր ժողովուրդի ջախջախիչ մեծամասնությունը և ընտրելագույն ու գիտակից մեծ պանգվածը Վեհիդ կողքին է և հաբած է Ձեզի սերտ սիրով և խոր հարգանքով:

Այս առթիվ, կբերեմ նաև մեր եկեղեցական դասուն եղբայրական ողջույնները, ինչպես նաև մեր ժողովուրդի սիրալիր զգացումները Էջմիածնի միաբանության, որ ուրախությամբ կնշմարեմ աճած, բազմացած է Ձեր հովանիին ներքև:

Կբերեմ նաև Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի սերն ու ողջույնները Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանին:

Աղոթող եմ Ս. Էջմիածնի անսասանության և Ձերդ Ս. Օծության թանկագին կենաց արևշատության համար:

Խորապես երջանիկ եմ այս սրբազան հարկին ներքև և Ձերդ Ս. Օծության հետ միասին գտնված ըլլալուս համար»:

Արարողության ավարտին, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը, եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, առաջնորդվեցին նոր Վեհարան:

Բոլոր ներկաները բարի գալուստ մաղթեցին սրբազան պատրիարք հոր և աջահամբույրով հրաժեշտ առան:

Ճաշկերույթ սրբազան պատրիարք հոր պատվին

Ժամը 3-ին, նոր Վեհարանի սեղանատանը, կազմակերպվել էր բարի գալստյան ընդունելություն սրբազան պատրիարք հոր պատվին:

Ընդունելությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի եկեղեցական և աշխարհական անդամները, ներքին Թեմերի թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը և հարգելի Տիրամայրը:

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը:

Ընդունելության ժամանակ, որն անցավ շատ ջերմ և սրտագին մթնոլորտում, ճառեր փոխանակեցին Վեհափառ Հայրապետն ու սրբազան պատրիարքը:

Սրբազան պատրիարք հոր Մայր Աթոռ Ս. Էջմիածին և Հայաստան այցելությունը ողջունեցին ներկաներից շատերը՝ բարի գալստյան խոսքերով և եղբայրական արտահայտություններով:

Ժամը 7-ին, Մայր Տաճարում, Վեհափառ Հայրապետը նախագահեց կիրակամտի ժամերգությանը:

Յուրբ պաշտամանը ներկա էր պատրիարք սրբազան հայրը, որի համար Մայր Տաճարի ձախակողմյան դասում, Ավագ Սեղանի դիմաց, դրված էր մասնավոր պատրիարքական աթոռ:

Երեկոյան, ժամերգության ավարտին, պատրիարք սրբազան հայրը այցելեց Մայր Տաճարի եկեղեցական արվեստի գանձարանը:

Ժամը 9-ին նորին սրբազնությունը հրաժեշտ առավ Վեհափառ Հայրապետից և ճանապարհվեց Երևան, Նորին Ս. Օծության վիլլան, ուր մնալու է իր շքախմբի հետ:

Սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում

Հոկտեմբերի 14, կիրակի, բարեկենդան Վարդավառի: Առավոտյան ժամը 11-ին, Մայր Տա-

ՍԱ-5080

ճարում պատարագեց սրբազան պատրիարք հոր գավազանակիր հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետ Գպրսլյանը։

Հավատացյալների հոծ բազմությունը վաղ առավոտվանից լցրել էր Մայր Տաճարն ու շրջափակը։

Ժամը 12-ին, Մայր Տաճարի զանգերի ավետավոր հնչյունների տակ, Վեհափառ Հայրապետը և պատրիարք սրբազանը, եկեղեցական թափորով և ժողովրդական խանդավառ բարեմաղթությունների տակ, առաջնորդվեցին Մայր Տաճար։

Սուրբ պատարագի Կոմիտասյան քառաձայն երգեցողությունը հաջողությամբ կատարում էր Մայր Տաճարի երգչախումբը, Խորեն Հակոբյանի ճարտար ղեկավարությամբ։

Շատ հուզիչ և սրտագրավ էր «Ողջոյն»-ի պահը, երբ Մայր Տաճարի նվիրական կամարների տակ, Ավագ Ս. Սեղանի առաջ, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Թուրքիայի հայոց պատրիարք սրբազանը, «ի համբոյր սրբութեան», վերանորոգում էին իրենց եկեղեցական միասնության ուխտը։

«Զի՜ բարի, զի՜ վայելուչ, զի բնակին եղբարք ի միասին» (Սաղմ. ՃԼԲ 1)։

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ և Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը «Ուրախ եղէ ես, ոյք ասէին ցիս ի տուն Տեառն երթիցուք մեք» (Սաղմ. ՃԻԱ 1) բնաբանով։

Քարոզիչ սրբազանը, ողջունելով պատրիարք հոր գալուստը, իր բնաբանը պատշաճեցնում է նրա այցելության. «Նա եկել է հուխտ և հերկրպագություն ի Տուն Տյառն, այսինքն՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որը Սրբություն Սրբոցն է և հավատի կենտրոնը՝ հայ հավատացյալ ժողովրդի, «տուն աղօթից ամենայն հայոց և Աթոռ Քահանայապետութեան»։

Հավարտ սուրբ պատարագի, նույն հանդիսությամբ և հավատացյալների խանդավառ արտահայտությունների տակ, Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Թուրքիայի հայոց պատրիարքը, օրհնելով ժողովրդին, առաջնորդվում են նոր Վեհարան։

Ժամը 3-ին, նոր Վեհարանի սեղանատանը, Մայր Աթոռի ողջ միաբանությունը՝ եպիսկոպոս, վարդապետ, սարկավագ, ուրախությունն է ունենում սեղանակից լինելու Վեհափառ Հայրապետին և սրբազան պատրիարքին։

Սեղանը օրհնում է պատրիարք սրբազանը։

Առաջին բաժակը Վեհափառ Հայրապետը բարձրացնում է հավերժական Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության և պայծառության համար։

Նորին Ս. Օծությունը երկրորդ բաժակը առաջարկում է Թուրքիայի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհը արքեպիսկոպոսի և Թուրքիայի Իր հոգևոր հայ զավակների գործերի հաջողության համար։

Սրբազան պատրիարք հայրը բարձրացնում է երրորդ բաժակը Վեհափառ Հայրապետի թանկագին կյանքի արևշատության և Մայր Աթոռի միաբանության կենաց։

Սեղանների շուրջ ստեղծված հոգևոր ուրախությունն ու խանդավառությունը ավելացնում են վարդապետներն ու սարկավագները պատշաճ շարականների, երգերի կատարմամբ։

Ժամը 6-ին, սրբազան պատրիարք հայրը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն և Տ. Ասողիկ սրբազանների և հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի, իր շքախմբով այցելում է Էջմիածին քաղաքի պատմական վանքերը՝ Ս. Հռիփսիմե, Ս. Շողակաթ և Ս. Գայանե։

Ժամը 7-ին, սրբազան պատրիարքը այցելում է նաև Զվարթնոցի ավերակները։

Երեկոյան ժամը 9-ին, սրբազան պատրիարքը, Մայր Աթոռի միաբանության և իր շքախմբի հետ, ներկա է լինում Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնի դերասանների կատարմամբ «Վարդանանք»-ի ներկայացման՝ Էջմիածնի ստադիոնում։

Այցելություններ

Հուլիսի 15-ին, երկուշաբթի, առավոտյան ժամը 9-ին, սրբազան պատրիարք հայրը, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսի և հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետի, իր շքախմբով այցելում է Ս. Մաշտոցի անվան մատենադարանը, ուր ընդունվում է պատշաճ հարգանքով դիրեկտոր, դոկտ.-պրոֆ. Լ. Խաչիկյանի կողմից։

Մատենադարանը, որպես ճարտարապետական կառույց և մանավանդ որպես հայ ձեռագրերի անկրկնելի գանձարան, խորին, անջնջելի տպավորություն է թողնում Թուրքիայի հայոց պատրիարքի և նրա շքախմբի անդամների վրա։

Պատրիարքը իր հիացմունքն է արտահայտում հայ ձեռագրերի հանդեպ ցույց տրված խորունկ ուշադրության, գուրգուրանքի և հայ մշակույթի բնագավառում մատենադարանում կատարված գիտական լուրջ հետազոտությունների համար։

Ժամը 12-ին, սրբազան պատրիարք հայրը ուխտի է գնում Օշական, Ս. Մեսրոպ Մաշտոցի լույս դամբարանին։

Պատրիարքը ծնրադիր աղոթում է և մի պահ հսկում եռամեծ Վարդապետի ջիրի-

մի վրա, խոնարհած նրա խնկելի հիշատակի առաջ։

Վաղգեն Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ, Օշականի եկեղեցում և Մեծ Հսկողի դամբարանում կատարված վերանորոգությունները երախտագիտությամբ և շնորհակալությամբ են լցնում պատրիարքի սիրտը։

Վերադարձի ճանապարհի վրա, սրբազան պատրիարք հայրը այցելում է Օշական գյուղի մուտքի առաջ, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ երախտագետ հայ ժողովրդի կողմից կանգնեցված հուշարձանը։

Այնուհետև ամենապատիվ հյուրը այցելում է Աշտարակի Կարմրավոր գողտրիկ եկեղեցին՝ կառուցված Ե դարում։

Ժամը 2-ին, սրբազան պատրիարքը իր շքախմբով այցելում է Մայր Աթոռի տպարանը։

Նորին սրբազնության ընկերակցում են «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և տպարանի դիրեկտոր Խ. Սամվելյանը։

Թուրքիայի հայոց պատրիարքը հանգամանորեն ծանոթանում է տպարանի բոլոր մեքենաների աշխատանքներին և այլ տպագրական գործերի և իր գոհունակությունը հայտնում կատարված վերանորոգչական աշխատանքների և տպարանի բացման առթիվ։

Ավելի ուշ, նորին սրբազնությունը այցելում է Հոգևոր Ճեմարան։ Ուսանողությունը արձակուրդի մեջ էր։ Սրբազանը այցելում է դասարանները, տեսչարանը, հանդիսությանց սրահը, սերտարանն ու գրադարանը։

Ժամը 3-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճում է Իրեն և սրբազան պատրիարք հոր սեղանակից դարձնել Մայր Աթոռի աշխարհական պատասխանատու աշխատողներին՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրին, դիվանապետին, ֆինանսական և տնտեսական բաժինների վարիչներին, ճարտարապետին և տպարանի դիրեկտորին։

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետը, սրբազան պատրիարք հոր ծանոթացնելով աշխատակիցներին, միաժամանակ իր բարձր ուշադրությանն է արժանացնում նրանց կատարած աշխատանքները Մայր Աթոռում։

Ճաշից հետո, Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարք հոր միջև Վեհարանում տեղի է ունենում խորհրդակցություն եկեղեցական, կրոնական մի շարք հարցերի շուրջ։

Երեկոյան, պատրիարք սրբազանը իր շքախմբով ներկա է լինում օպերայում «Արշակ Բ»-ի ներկայացման։

Ուխտագնացություններ

Հուլիսի 16-ին, երեքշաբթի առավոտյան, սրբազան պատրիարք հայրը ուխտի գնաց Խոր Վիրապի վանքը, իր շքախմբի հետ։

Նորին սրբազնության ընկերակցում էին դերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը և բարեշնորհ Կայծակ սարկավագը։

Ժամը 2—30-ին, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը, միաբանության անդամների հետ, ճաշեցին Հոգևոր Ճեմարանի ուսանողության սեղանատանը։ Օրվա ճաշը հայկական հարիսան էր։

Սեղանը օրհնեց Վեհափառ Հայրապետը։

Վերատեսուչ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, Հոգևոր Ճեմարանի ուսանողության անունից, բարի գալուստ մաղթեց սրբազան հոր։ Նորին սրբազնության ողջունեց նաև Բաքվի առաջնորդ Տ. Հուսիկ եպիսկոպոսը։

Գ դասարանի ուսանող Գրիգոր Բունիաթյանը ապրումով արտասանեց Միլտոնի «Աղերս առ լույսն» գրաբար քերթվածը։

Վերջում խոսք առավ սրբազան պատրիարք հայրը, շնորհակալություն հայտնեց Հոգևոր Ճեմարանի վերատեսչության և ուսանողության հյուրասիրության համար, և խոսքը ուսանողության ուղղելով ասաց.

«Երանի՜ ձեզի, որ կապրիք այս սրբազան հարկի տակ, առաջնորդության ներքև Վեհափառ Հայրապետին, որ նոր գիծ մը բացավ մեր եկեղեցական կյանքի նոր շրջանին մեջ և դրավ Ս. Էջմիածինը իր պատմական առաքելության հունին և հոգևոր բարձրության և դերին մեջ։

Երանի՜ ձեզի, որ կապրիք մեր պատմական վանքերու մոտիկության մեջ, որոնց մեջ կան շունչն ու տեսիլքը մեր եռամեծ վարդապետներուն, որոնց աշակերտներն ու հետևորդներն ենք մենք և դուք։

Կմաղթեմ, որ անսայթաք ընթանաք մեր մեծ վարդապետներու և անոնց արժանավոր աշակերտ և հետևորդ Նորին Ս. Օծության բացած լուսավոր ճանապարհեն»։

Ընդունելությունը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով և սրբազան պատրիարք հոր գոհաբանական մաղթանքով։

Հուլիսի 17-ին, չորեքշաբթի, առավոտյան ժամը 9-ին, սրբազան պատրիարք հայրը այցելեց Երևանի պատմական թանգարանը։

Այնուհետև նորին սրբազնությունը ուխտի գնաց Ս. Գեղարդի վանքը։

Սրբազան պատրիարքին ընկերակցում էին Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը և Տ. Մեսրոպ վարդապետը։

Ճանապարհին ամենապատիվ հյուրը այցելում է Գառնիի ավերակները, ամրոցը, հեթանոսական տաճարն ու եկեղեցին։

Ս. Գեղարդի վանքի մեծ դարբասի առաջ, սրբազան պատրիարքին դիմավորում է վանահայր Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և առաջնորդում եկեղեցի։

Սրբազան հայրը իր ուխտը կատարելուց հետո; երկյուղածությամբ և հիացմունքով դիտում է Գեղարդի եկեղեցական ճարտարապետության կոթողները, օրհնություն և երախտագիտություն մրմնջալով մեր լուսաբնակ նախնիքների հավատի ամրության և կառուցողական տաղանդի մասին։

Ժամը 5-ին, սրբազան պատրիարք հայրը վերադառնում է Երևան, ուր ժամը 6-ին վիլայում ընդունում է Վեհափառ Հայրապետի փոխադարձ այցելությունը։ Նորին Ս. Օծության ընկերակցում էին Տ. Ասողիկ սրբազանը և գավազանակիր Տ. Արսեն աբեղան։

Հուլիսի 18 և 19 օրերին, հինգշաբթի և ուրբաթ, սրբազան պատրիարք հայրը իր շքախմբով մեկնում է երկօրյա ուխտագնացության դեպի Կոտայք, Գուգարաց աշխարհը և Շիրակ՝ այցելելու Սևանի վանքը, Հաղբատ, Սանահին, Մարմաշեն, Հառիճա վանքերը և Թալիշի եկեղեցին։

Սրբազան պատրիարք հոր ընկերակցում են Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, Տ. Մեսրոպ վարդապետը և Մայր Աթոռի դիվանապետ Հայկ Առաքելյանը։

Հաճելի է ուղևորությունը։ Խաղաղ ու ջինջ առավոտ է։ Ամռան արևը ոսկեզօծել է հայրենի դաշտերն ու սարալանջերը։ Հայրապետական մեքենան սուրում է ասֆալտապատ գեղեցիկ ճանապարհով և Հյուղդանի ափերով դեպի Սևան, որը հայկական բարձրավանդակի լեռներում եղած բազմաթիվ լճերի մեջ իր մեծությամբ և գեղեցկությամբ առաջին տեղն է գրավում։

Գեղամա, Սևանա, Վարդենիսի, Զանգեզուրի լեռները, խոր խաղաղությամբ և ջերմագին սիրով իրենց գրկում առած օրորում են Սևանը և «կղզին»՝ իր զույգ վանքերի տարորեն հուզիչ սրբության մեջ։

Մեքենան կանգ է առնում «կղզու» ստորոտում։ Սրբազան պատրիարք հայրը իր ուղեկիցներով բարձրանում է «կղզու» հարավարևմտյան փոքր սարալանջը, որի վրա գտնվում են 874 թվականին Սյունյաց Մարիամ տիկնոջ կողմից կառուցված Ս. Կարապետ և Ս. Առաքելոց եկեղեցիները։

Աղոթքից և ուխտից հետո, սրբազան պատրիարքը շարունակում է իր ճանապարհորդությունը Դիլիջանի ծաղկավետ, դալարագեղ բնության միջով դեպի Կիրովական։

Կիրովականը, երբեմնի Ղարաքիլիսան, պատմական Գուգարաց աշխարհի Տաշիրք գավառի Բամբակաձորի մեջ, Տանձուտ, Վանաձոր և Փամբակ գետակների մեջ առնված, Հայաստանի երիտասարդ ու գեղեցիկ երրորդ քաղաքն է։



Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը միաբանության մի խումբ անդամների հետ

Սրբազան պատրիարք հայրը ուղղվում է դեպի Կիրովականի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին։

Հնչում են զանգերը։ Շիրակի թեմի առաջնորդ Տ. Մաշտոց եպիսկոպոսը, Տ. Գևորգ ավագ քահանա Գևորգյանի և Տ. Վազգեն քահանայի գլխավորությամբ, նորին սրբազնության «Հրաշափառ»-ով առաջնորդում են եկեղեցի, ուր հավաքված հավատացյալների բազմությունը ջերմորեն դիմավորում է Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքին։

Կիրովականում մի քիչ հանգստանալուց հետո, սրբազան պատրիարքը շարունակում է իր ճանապարհը դեպի Ալավերդի՝ Լոռվա աշխարհը, Գուգարաց երկիր՝ «յուխտ և յերկրպագութիւն» Սանահին և Հաղբատ վանքերի։

Այժմյան Ալավերդու շրջանը պատմական Հայաստանի Գուգարաց աշխարհի Տաշիրք գավառի մի մասն է հանդիսանում։ Բագրատունիները իշխել են այնտեղ Ժ դարում և կառուցել են բազմաթիվ վանքեր՝ Սանահինը, Հաղբատը, Քոբայրը, Հոռոմայրը, Քառասուն Մանկունքը և Կայան, Կայծուն ու Ախթալա ամրոցները։

ԺԳ դարում այստեղ իշխել են Զաքարե և Իվանե եղբայրները։

Ժամը 2-ին մեքենան կանգ է առնում Դեբետ գետի վրա ձգված հին կամրջի մոտ, որը կառուցվել է ԺԳ դարում Նանա թագուհու կողմից։

Սանահին վանքը գտնվում է կամրջից 3 կմ. հեռավորության վրա, Սանահին համանուն գյուղի սարի լանջին։ Ժայռոտ և ոլորապտույտ կածաններով ճանապարհը դեպի վանք շատ դժվար է։

Ալավերդու տեղական իշխանությունները Թուրքիայի հայոց պատրիարքի և նրա ուղեկիցների տրամադրության տակ են դրել ժայռերն ի վեր մագլցող ելկու վիլլիս ավտոմեքենա։

Գեղեցիկ է տեսարանը։ Զորում հոսում է պղտոր Դեբետը, մինչ հանդիպակաց պղնձաձույն լեռներից լսվում է Ալավերդու պղնձաձուլական գործարանների զվարթ աղմուկը և անընդհատ երթևեկող գնացքների ազդարար սուլոցը։

Սարի լանջին, կղմինդրե կտուրներով, ծառերի ու փարթամ կանաչների մեջ թաղված երդիկների ետևից երևում է Սանահին հռչակավոր վանքի սուրբ գմբեթը։

Հաղարամյա վանքի դարբասի առաջ կանգ են առնում մեքենաները։

Սրբազան պատրիարք հայրը, երկյուղած քայլերով և խոհուն, իր ուղեկիցներով մտնում է վանքի բակից ներս և հափշտակված կանգ առնում սրբավայրերի և շիրիմների առաջ։

Սանահին վանքի գոյությունը բարձրանում է մինչև Ժ դար։

Սանահինը, սակայն, դառնում է հայ մշակույթի վառ օջախ Սմբատ Բ թագավորի օրերից։ Այնտեղ աշխատում ու ստեղծագործում են մեր եռամեծ վարդապետները, հայ եկեղեցու մեծիմաստ ու քաջակորով պաշտպանները։ Սանահին վանքը քարեղեն ճարտարապետական մի համանվագ է՝ հուշարձանների իր խմբով։ Այստեղ գործել է ԺԱ դարում Գրիգոր Մագիստրոսի ճեմարանը։

Սանահինի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 935—945 թվականներին, Ամենափրկիչ եկեղեցին՝ 967—972 թվականներին, Գավիթը կամ ժամատունը՝ 1181 թվին, Նորագավիթը, որն իշխանական դամբարան է՝ 1211 թվին։

Սանահին վանքում կան բազմաթիվ վիմական արձանագրություններ։ Վանքը հանդիսացել է միաժամանակ ազգային-եկեղեցական դեմքերի պանթեոն, այստեղ թաղվել են Զաքարե իշխանից սկսյալ մինչև Գրիգոր Տուտեորդի վարդապետը։

Վանքի արժեքավոր կառույցներից է նաև Մատենադարանը, կառուցված 1063 թվականին, Դավիթ Ա Անհողին թագավորի դուստր Հրանույշ թագուհու կողմից։

Սրբազան պատրիարքը մի առ մի այցելում է բոլոր հուշարձանները՝ հիացմունքի և երախտագիտության արտասվախառն զգացմունքներով։

Հայաստանի հնությունների պահպանության պետական կոմիտեն վերանորոգչական խոշոր աշխատանք է կատարել Սանահինի վանքում։

Մինչև ուշ երեկո, սրբազան պատրիարք հայրը մնում է վանքում և երեկոյան ժամերգությունը կատարելուց հետո, իջնում՝ Ալավերդում գիշերելու։

Հուլիսի 19-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 8-ին, սրբազան պատրիարք հայրը ուխտի է գնում Հաղբատի վանքը՝ հավատի ու գիտության այս երկրորդ օջախը։

Մեքենան կանգ է առնում վանքի մեծ դարբասի առաջ։ Ոտքով Սանահնից Հաղբատ ութ կիլոմետր է։ Հեռվից նայում և ողջունում է Սանահինը։

Հաղբատ ու Սանահի՛ն, երկու համբուրելի և նվիրական անուններ, հայ մշակույթի ու հավատի երկու վառ օջախներ։

Պատրիարք սրբազանը և իր ուղեկիցները մտնում են դարավոր մենաստանի պարիսպներից ներս, նույն սիրելի և միստիկ միջավայրը, նույն ջերմ ու կենդանացնող շունչը, տեսիլքը՝ ամեն կողմ։

Սրբական պատրիարք հայրը քարոզում է

Հաղբատը հիմնադրվել է Աբաս Ա Բագրատունու օրոք։ Վանքի առաջին գլխավոր եկեղեցին է Ս. Նշանը, ճարտարապետական հոյակապ մի կառույց, կառուցված 967—991 թվականներին, Խոսրովանույշ թագուհու կողմից նվիրված Քրիստոսի խաչափայտի մի մասունքի վրա, Գարեգին և Սմբատ արքայորդիների կողմից։ Գեղեցիկ է նաև Ս. Նշանի գավիթը։

1005 թվականին կառուցվել է Ս. Գրիգոր եկեղեցին՝ ինը պատարագամատույց սեղաններով։

Նշանավոր է Հաղբատի վանքի դահլիճը, որը վանահայր Համազասպ եպիսկոպոսի անունով կոչվում է նաև «Համազասպի շենք». 25,50 մ. երկարությամբ, 32 մ. բարձրությամբ, 25,50 մ. լայնությամբ, գմբեթաձարդ այդ դահլիճը ծառայել է որպես դպրատուն և դպրեվանք, ուր դասավանդել են մեծ հաղբատցիները։ Դպրատան հարավային կողմում գտնվում է Մատենադարանը։

Վանքի բակում միայնակ բարձրանում է զանգակատունը, կառուցված 1245 թվականին։ Վանքի պարիսպներից դուրս է գտնվում մեծ սեղանատունը։ Հաղբատը ունեցել է մեծ թվով միաբանություն։

Ժամերն անցնում էին աննկատ, բայց հուզումով լի։ Հաղբատը հարուստ է հուշարձաններով։ օրեր են պետք հանգամանորեն դիտելու։ Սրբազան հայրը դիտում է, աղոթում և «Հոգևոց» արտասանում այդ սուրբ հարկի մեջ աշխատած, տքնած և մահացած մեր նախնիների պայծառ հիշատակին։

Ժամը 10-ին, սրբազան պատրիարք հայրը իր ուղեկիցներով վերադառնում է Կիրովական, և Ս. Աստվածածին եկեղեցում նախագահում է առավոտյան ժամերգության։

Այնուհետև Նորին Սրբությունը ծանոթանում է քաղաքի տեսարժան վայրերին և նորակառույցներին և ժամը 11-ին մեկնում Լենինական, ուր «Հրաշափառ»-ով մուտք է գործում առաջնորդանիստ Ս. Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին։

Եկեղեցու բակում և տաճարի մեջ հավաքված հավատացյալների հոծ բազմությունը ջերմորեն դիմավորում է սրբազան պատրիարք հորը։

Շիրակի թեմի առաջնորդ Տ. Մաշտոց եպիսկոպոս Թաջիրյանը բարի գալուստ է մաղթում Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքին, որը պատասխանում է ողջույնի խոսքերին և շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար։

Փոքր հանգստից հետո, սրբազան պատրիարքը այցելում է Մարմաշենի վանքը, որ գտնվում է Հայկական ՍՍՌ Ախուրյանի շրջանում, Լենինականից 12 կմ. դեպի արևմուտք, Ախուրյան գետի ձորում։

Մարմաշենի վանքը եղել է Հայաստանի կրոնական խոշոր կենտրոններից մեկը և պատկանում է հայ ճարտարապետության հոյակապ կոթողների թվին։

Վանքի հիմնադրումը վերագրվում է Կամսարական տոհմի իշխաններին։ Վանքի գլխավոր եկեղեցու վրա կա Վահրամ Պահլավունի իշխանի արձանագրությունը, ըստ որի եկեղեցին կառուցվել է 1026 թվին։

Մարմաշենի վանքը բաղկանում է երկու խմբից՝ Մեծ Մարմաշենի վանք, որի կազմի մեջ մտնում են չորս եկեղեցի, մեկ գավիթ-ժամատուն, մեկ դամբարան և գերեզմանոց, ապա Փոքր Մարմաշեն, որը բաղկանում է մեկ եկեղեցուց և կից գերեզմանատնից։ Քարերի վառ կարմիր գույնը, ընտիր և ողորկ մշա-

կումը, ճարտարապետական ձևերի ճշգրիտ լուծումը, կառուցողական հնարամտությունը, մշակված և նուրբ զարդաքանդակները է՛լ ավելի վեհություն և գեղեցկություն են տալիս Մարմաշենի վանքին։

Ախուրյան գետի ափին, ծառերի զով հովանու ներքո, Թուրքիայի հայոց պատրիարքի պատվին տրվում է ճաշկերույթ, որին մասնակցում են նաև թեմական խորհրդի անդամները, քահանայից դասը։

Վերադարձի ճանապարհի վրա, սրբազան պատրիարք հայրը ծանոթանում է Լենինականի տեսարժան վայրերին և ապա մեկնում իր ուղեկիցներով Արթիկ՝ Հառիճա վանք։

Հառիճան նույնպես պատմական Հայաստանի հնագույն և նշանավոր վանքերից և հոգևոր կենտրոններից մեկն է եղել։

Արագածի փեշերին, ձորի բարձր քարափի ափին, գեղատեսիլ վայրում, իր հովասուն կլիմայով, սառնորակ աղբյուրներով, ալպյան կանաչությամբ և երփներանգ, անուշաբույր ծաղիկներով, հին օրերին Հառիճա վանքը եղել է նաև կաթողիկոսական ամառանոց։

Հառիճա վանքի նշանավոր հուշարձանների խումբը բաղկանում է երկու գավիթ-ժամատնից, երկու մատուռից, վանական խցիկներից և գրեզմանոցից։ Հառիճա վանքի ամենահին կառույցը Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է, կառուցված է դարում։

Վանքի գլխավոր եկեղեցին Ս. Աստվածածին եկեղեցին է, կառուցված Զաքարե իշխանի կողմից 1201 թվականին։

Վանքի բոլոր կառույցները պարսպապատված են։

Հառիճա վանքի ո՛չ գավթում, ո՛չ բակում չկան դամբարաններ, ինչպիսիք կան Սանահին և Հաղբատ վանքերում։

Սրբազան պատրիարք հայրը երկարորեն մնաց Հառիճա վանքում և իր ուխտն ու աղոթքը կատարելուց հետո, հրաժեշտ առավ։

Օրեկոյան ժամը 7.30-ին, երկօրյա ուխտագնացությունից հետո, սրբազան պատրիարքը անմոռանալի տպավորություններով վերադառնում է Մայր Աթոռ, ճանապարհին այցելելով նաև Մաստարայի և Թալիշի պատմական եկեղեցիները։

Ժամը 8.30-ին, նորին՝ սրբազնությունը, Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում, ներկա է լինում Վ. Մայակովսկու ծննդյան 70-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսության, իր շքախմբի հետ։

Հուլիսի 20-ին, շաբաթ, առավոտյան ժամը 9-ին, սրբազան պատրիարք հայրը, Արարատյան թեմի փոխանորդ Տ. Վահան վարդապետ Տերյանի առաջնորդությամբ, այցելեց Երևանի եկեղեցիները՝ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցին, Կոնդի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին և Ս. Զորավոր եկեղեցին։

Նորին սրբազնության պատշաճ հանդիսությամբ դիմավորեցին թեմական խորհրդի անդամները, Երևանի եկեղեցական խորհրդի անդամները, քահանայից դասը և հավատացյալների բազմությունը։

Ժամը 11-ին, սրբազան պատրիարքը այցելեց Բյուրականի աստղադիտարանը և ջերմ զրույց ունեցավ Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի նախագահ Վ. Համբարձումյանի հետ։

Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը հրաժեշտ առավ մեծանուն գիտնականից լավագույն տպավորություններով։

Երեկոյան, Մայր Տաճարում, կիրակամտի ժամերգության և Վարդավառի նախատոնակին նախագահեց Վեհափառ Հայրապետը։

Արարողության ներկա էր նաև սրբազան պատրիարք հայրը։

Երեկոյան ժամը 8-ին, սրբազան պատրիարք հայրը, նոր Վեհարանի հանդիսությանց դահլիճում, մեծ գոհունակությամբ դիտեց 1962 թվականի ազգային-եկեղեցական ժողովի, սրբալույս մեռոնօրհնության և եպիսկոպոսական ձեռնադրության հանդիսությանց նվիրված «Էջմիածին» գունավոր ֆիլմը։

Հանդիսավոր սուրբ պատարագ և քարոզ Մայր Տաճարում Վարդավառի տոնին

Հուլիսի 21-ին, կիրակի, «Տօն պայծառակերպութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

Ազգային-եկեղեցական մեծ տաղավարի առիթով, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում այսօր Թուրքիայի հայոց ամենապատիվ պատրիարք Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյանը։

Առավոտյան ժամը 11-ին, նոր Վեհարանում զգեստավորված, պատարագիչ պատրիարք սրբազանը, եկեղեցական թափորով և ամպհովանու տակ, հանդիսավորապես առաջնորդվում է Մայր Տաճար։

Աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել հրավիրյալներ և պաշտոնական անձինք։

Մայր Տաճարը, ինչպես նաև վանքի շրջափակը, լիքն են ուխտավորներով և հավատացյալներով։

Սկսվում է սուրբ պատարագը։ Ս. Սեղանին սպասարկում են վարդապետներ, քահանա հայրեր, սարկավագների խումբը։ Սուրբ պատարագի Կոմիտասյան քառաձայն երգեցողությունը փայլուն հաջողությամբ կատարում է Մայր Տաճարի երգեցիկ խումբը։

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը առաջնորդվում են դեպի Վեհարան

Ժամը 12-ին, Մայր Տաճար է առաջնորդվում Վեհափառ Հայրապետը և բազմում Իր Գահի վրա։

Սուրբ պատարագը շարունակվում է մինչև «Հայր մեր»։ Պատարագիչ սրբազան պատրիարք հայրը քարոզում է օրվա մեծ տոնի պատմական և հոգևոր նշանակության մասին «եւ այլակերպեցաւ առաջի նոցա» *ավետարանական բնաբանով։*

Սրբազան պատրիարք հայրը իր քարոզի սկզբում ողջույնի և շնորհակալության սրտագին խոսք է ուղղում Վեհափառ Հայրապետին, Մայր Աթոռի միաբանության, հաղորդելով միաժամանակ Թուրքիայի հայության և հոգևորականության որդիական սերն ու հարումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և նրա աստվածարյալ Հայրապետին։

Այնուհետև իր քարոզի մեջ սրբազան պատրիարք հայրը մեկնաբանում է Թաբոր լեռան վրա Քրիստոսի պայծառակերպության հոգևոր նշանակությունը և ծանրանում անցյալում հայ ժողովրդի եկեղեցական-մշակութային կյանքում տեղի ունեցած փառավոր պայծառակերպությունների վրա, առաջինը Դ դարում Ս. Գրիգոր Լուսավորչի շնորհիվ, «որ Ավետարանի լույսը տարածեց հայ հողի վրա և այլակերպեց հայ հոգիները. անկե հիսուն տարի հետո, մեր ժողովուրդի երկրորդ պայծառակերպությունը եղավ մեծն Ներսեսի օրով, երբ Հայաստանի մեջ ան հիմնեց դպրոցներ, բացավ հիվանդանոցներ, ծերանոցներ, անկելանոցներ։ Հաջորդ և ամենամեծ պայծառակերպությունը սակայն եղավ Ե դարի սկզբին, Ս. Սահակ Պարթևի, Ս. Մեսրոպ Մաշտոցի և անոնց թարգմանիչ աշակերտներու շնորհիվ, մեր գրերու գյուտով և Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ։

Պայծառակերպությունը կյանքի բանալին եղած է։

Մեր ժողովուրդը գիտցած է գործածել այդ բանալին, հրաշալիորեն պայծառակերպված է այն անցյալին մեջ և ստեղծած հոգևոր արժեքներ։

Այսօր ալ, սիրելինե՛րս, ժամանակն է, որ մեր ժողովուրդը նորեն պայծառակերպվի ո՛չ միայն ֆիզիկապես ու տնտեսապես, ո՛չ միայն մշակույթի բնագավառին մեջ, այլ մանավանդ հոգեպես և բարոյապես։

Կաղոթեմ, որ Աստված խաղաղություն տա աշխարհին, որպեսզի ազգերն ու ժողովուրդները, Աստուծո սիրույն մեջ, օրհնված և պայծառակերպված ապրին, համերաշխության պայմաններու մեջ։

Կմաղթեմ Մայր Աթոռին անսասանություն, Վեհափառ Հայրապետին՝ կենաց արևշատություն, որպեսզի ան երկար տարիներ շարունակե հովվել և Իր թևերը տարածել հայ ժողովուրդի վրա, ինչպես հո՛ս՝ Հայաստան աշխարհի վրա, այնպես ալ աշխարհի բոլոր կողմերուն վրա, ուր կան ցրված հայության բեկորներ, մինչև այն

երջանիկ օրը, երբ ըլլանք «մի հոտ և մի հովիւ», ընդ հովանայվ Ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի»:

Հավարտ սուրբ պատարագի, հավատացյալներից շատերը Ս. Հաղորդություն ստացան։

Եկեղեցական հանդիսության ավարտին, Վեհափառ Հայրապետը և պատրիարք սրբազանը, ամպհովանու տակ, եկեղեցական թափորով, առաջնորդվեցին Վեհարան։

Հրաժեշտի ընդունելություն

Ժամը 3-ին, Վեհարանի սեղանատանը, Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքի պատվին կազմակերպվել էր հրաժեշտի ընդունելություն։

. Ճաշկերույթին ներկա էին Գերագույն Հոգևոր խորհրդի և Վերատուգիչ հանձնաժողովի անդամները, Մայր Աթոռի միաբանությունն ու պաշտոնեությունը։

Հրավիրյալների թվում էին վարպետը՝ ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, գրող Կոստան Զարյանը, Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի անդամներ, Արարատյան թեմի թեմական խորհրդի ատենապետ Ս. Արևշատյանը և այլ հյուրեր։

Ընդունելության ներկա էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

Սեղանը օրհնում է Վեհափառ Հայրապետը։

Այնուհետև ստեղծվում է ջերմ ու սրտագին մթնոլորտ սեղանների շուրջ։

Ընդունելությունը ղեկավարում է Վեհափառ Հայրապետը։ Նորին Ս. Օծությունը առաջին բաժակը բարձրացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների անսասանության և միության կենաց։

Սրահում թնդում է «Էջ Միածինն ի Հօրէ»՝ Մայր Աթոռի հոգևոր հիմնը։

Վեհափառ Հայրապետը երկրորդ բաժակը առաջարկում է հայրենի կառավարության և հայ ժողովրդի բարօրության կենացը։

Սրբազան պատրիարք հայրը բաժակ է առաջարկում Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության և Մայր Աթոռի անսասանության։

Հուզումով ունկնդրվում է «Տէ՛ր, կեցո՛ զու զհայս» ազգային հիմնը՝ Տ. Մեսրոպ վարդապետի կատարմամբ։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, ողջունելով սրբազան պատրիարքին, ասում է.

«Ավելի քան մեկ շաբաթ է, որ ուրախության և խոր մխիթարության օրեր կապրինք Մայր Աթոռին մեջ։

Ուրախ ենք և հույժ երջանիկ, վասնզի մեր օրերուն տեղի ունեցավ այցելությունը Պոլսո հայոց սրբազան պատրիարքին։

Այստեղ է ան, Ս. Էջմիածին, նստած ահա Մեր կողքին։

Պատմական է այս իրադարձությունը և մեծապես նշանակալից։

Փա՜ռք Աստուծո ամենակալին, որուն ողորմության և շնորհքին ներքև կգտնվի Հայոց Ս. Եկեղեցին և մեր եկեղեցական կյանքն ու գործունեությունը։

Մենք անկեղծորեն հրճվեցանք, երբ բոլոր տեսակի դժվարությունները հաղթահարվելով, Թուրքիո հայոց Պատրիարքական Աթոռը ունեցավ իր գահակալը, ժողովուրդի միաձայն ընտրությամբ։

Հրճվեցանք մանավանդ, որ նորընտիր պատրիարքը եղավ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, որ մեր օրերու հայ բարձրաստիճան հոգևորականության ամենափայլուն դեմքերեն մեկը կհանդիսանա։ Իր ամբողջ կյանքը եղած է նվիրում և ծառայություն։

Այսօր կկրկնապատկվի Մեր հրճվանքը, երբ երջանիկ պատեհությունը ունինք այստեղ, հայրենի հողի վրա, Ս. Էջմիածնի կամարներուն տակ, ողջունելու Շնորհք պատրիարքը, որ իր ուղեկիցներուն հետ կուգա իր Աթոռին և իր ժողովուրդին սիրո և հավատարմության վկայությունը բերելու Ամենայն Հայոց Հայրապետին։

Սրբազան պատրիարք եղբայրը Մեր ուխտի կուգա Փրկչի Իջման այս սուրբ տեղերը և նոր էջ մը կբացվի մեր կեղեցական կյանքին մեջ։

Պատմության ընթացքին միշտ սիրալիր եղած են Մայր Աթոռիս և Պոլսո Պատրիարքության փոխհարաբերությունները։ Բայց ահա այդ սիրո և գործակցության կապը առավել կսերտանա։

Մենք միշտ պիտի աղոթենք ու գործենք, որպեսզի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սիրո և հոգևոր աշխատակցության կապերը հետզհետե առավել ջերմանան մեր Եկեղեցվո մյուս երեք նվիրապետական Աթոռներուն հետ, որոնք բոլորը միասին անբաժանելի մեկ ամբողջություն մը կկազմեն՝ օրհնությամբը և շնորհներովը Աստուծո Միածին Որդվույն, որ լուսեղեն կերպարանքով այստեղ իջավ շատ դարեր առաջ և այդ լույսի ահեղ զորությամբ հիմնեց Ամենայն Հայոց Հայրապետությունը, Գլուխը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո։

Սիրեցյալ պատրիարք եղբայր. թող Աստված օրհնե մեր միասնության ուխտը, թող Աստված օրհնե մեր եղբայրությունը և մեր սուրբ գործը։ Մեր գործը Աստուծո գործն է, մեր գործը եկեղեցաշեն գործ է, մեր գործը հայ հավատացյալ

ժողովուրդի միասնության և հոգևոր լուսավորության գործ է: Մենք միշտ Ձեզի հետ պիտի աղոթենք, որպեսզի լինի «Յերկիր խաղաղութիւն և ի մարդիկ հաճութիւն»:

Ձեզի կմաղթենք անսպառ ուժ և աշխատանքի եռանդ ու լավատեսության ոգի, որպեսզի երկար, շա՜տ երկար տարիներ հովվեք ու առաջնորդեք Թուրքիո հայոց եկեղեցիները և հավատացյալ ժողովուրդը:

Դուք, սիրելի՛ եղբայր, այցելեցիք մեր երկրի՝ Հայաստանի կարգ մը եկեղեցիները և պատմական վանքերը, կրթական, գիտական և գեղարվեստական բարձր հաստատություններ, տեսաք մեր վերածնած երկրի շեն ու ծաղկած քաղաքները՝ Երևան, Լենինական, Կիրովական, Ալավերդի և այլ վայրեր: Տեսաք մեր գործարար բ-չարքաշ ժողովուրդը իր առօրյա աշխատանքին մեջ: Ու տեսաք այդ աշխատանքի, շինարար աշխատանքի փառավոր արդյունքները:

Ահա մեր նորաշեն Մայր Հայաստանը, որ նոր պայմաններու մեջ, բարենպաստ պայմաններու մեջ կապրի ու կվերաշինվի նաև մեր եկեղեցական վյանքը, կվերաշինվի ու կպայծառանա մանավանդ ամենայն հայոց սուրբ հավատքի վեմ Մայր Առոթ Ս. Էջմիածինը, շնորհիվ հավատացյալ ժողովուրդի կոհողություններուն, շնորհիվ այստեղ ծավալող աշխատանքին, բայց մանավանդ ի մասնավորի շնորհիվ մեր հայրենի կառավարության բարյացակամության և օրինական անաչառ վերաբերմունքին դեպի Եկեղեցին:

Այս առթիվ Մենք Մեր սրտագին շնորհակալությունները կհայտնենք Խորհրդային Հայաստանի իշխանություններուն, որ, ինչպես անցյալին, նաև այս անգամ ընդառաջեց Մեր դիմումին և հարկ եղած օրինավոր ձևակերպությունը կատարվեցավ շուտափույթ կերպով, որպեսզի սրբազան պատրիարքը իր շքախմբով ուխտի գա Ս. Էջմիածին:

Մեր գոհունակությունը պարտինք հայտնել նաև Թուրքիո հանրապետական կառավարության նույն բարյացակամության համար, որով հնարավոր դարձավ Մեր այցելությունը Ստամբուլ 1961-ին և այժմ Շնորհք սրբազան պատրիարքին այցելությունը Հայաստան:

Սիրելի՛ սրբազան եղբայր, տարեք Ձեզի հետ Ձեր հոտին ջերմագին ողջույններ հայրենի հողեն, մեր բազմադարյան սրբավայրերեն և Մայր հայրենիքի հավատացյալ ժողովուրդի սրտեն:

Մենք կճանչնանք Ձեր հոտը: Մենք կճանչնանք և կսիրենք Ձեր ժողովուրդը, Մեր հոգևոր զավակները: Տարեք բոլորին, բոլորին անխտիր Մեր սիրո ողջույնը և Մեր հայրապետական օրհնությունները, Մեր սրտեն բխած ամենաջերմ մաղթանքներով:

Թող անսասան մնա Թուրքիո հայոց Պատրիարքական Աթոռը, հավետ շեն ու պայծառ իր եկեղեցիներով»:

Հանուն հայրենի կառավարության, Թուրքիայի հայոց պատրիարքին ողջունում է նաև Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը:

Հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի, Գրիգոր Բեֆմեզյանն իր ելույթում ասում է.

«Վեհափա՛ռ Տեր.

Խորին շնորհակալություն այն պատվին համար, որով հնարավորություն կտրվի ինձի բարի գալուստ մաղթելու նորին ամենապատվություն Ս. Շնորհք պատրիարք Գալուստյանին։

Սրբազա՛ն հայր, բոլոր անոնց համար, որոնք Ձեզ կճանչնան դեռ ուսանողական տարիներեն, բոլոր անոնց համար, որոնք կհետևին Ձեր հովվական բեղմնավոր գործունեության սփյուռքահայ զանազան կեդրոններուն մեջ, բոլոր անոնց համար, որոնք հրճվեցան Ձեր պատրիարքության բարձր պաշտոնին համար, մեծ պատիվ և երջանկություն է ողջունել Ձեզ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեջ։

Այսօր, Մայր Տաճարին մեջ, Ձեր քարոզին մեջ Դուք մեկնաբանեցիք Քրիստոսի այլակերպության և պայծառակերպության հրաշափառ խորհուրդը։ Այդ խորհուրդը, սակայն, կյանք է առեր, առաջին հերթին, նաև Ձեր անձին և գործունեության մեջ, որովհետև ուր որ Դուք եղաք որպես հոգևոր հովիվ հայ հավատացյալներու, Ձեր գործունեությամբ ոչ միայն պայծառակերպվեցաք անձնապես, այլև պայծառակերպեցիք Ձեզի հանձնված հոտը։

Մենք վստահ ենք, որ պայծառակերպության նոր շրջան մը կապրի նաև Պոլսո հայությունը Ձեր պատրիարքության օրով։

Պոլիսը մեզի համար սովորական քաղաք մը չէ, այլ նվիրական անուն մը, հուզիչ հիշատակներով առլցուն, որովհետև ան քաղաքն է Օրմանյաններու և Դուրյաններու, Մեծարենցներու, Վարուժաններու, Պարոնյաններու և Զոհրապներու, Սիամանթոներու և Թեքեյաններու։ Պոլիսը այն քաղաքն է, ուր երկար ժամանակ ապրեցավ և ստեղծագործեց մեր մեծ Կոմիտասը։ Պոլիսը այն քաղաքն է, ուր այժմ կապրի մեր ժողովուրդին մեկ հատվածը, որ, դեռ վերջերս, Վեհափառ Հայրապետի այցելության առիթով, ցույց տվավ, որ գիտե և կրնա արժանավորապես շարունակել իր նախնիքներուն նվիրական ավանդությունները։

Սրբազա՛ն հայր, Ձեր գործունեությունը եղեր է արդյունավետ անով մանավանդ, որ Դուք ոչ միայն անձամբ ներշնչվեր եք Իշման Սեղանի սրբազան լույսով, այլև ամեն տեղ Ձեզի հետ տարեր եք զայն, տարեր եք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ուժն ու փառքը։ Այժմ ող-

Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների և այլ հյուրերի հետ

բացաք նաև հայրենի հողի ներշնչանքով, հայրենի երկրի գեղեցկություններով և, առավել ևս գոտեպնդված, կվերադառնաք Ձեր Աթոռը։ Հավատացած ենք, որ Ս. Էջմիածնի լույսն ու ներշնչանքը ամբողջովին կբաշխեք անոնց կարոտովը տառապող և անոնց երազովը ապրող մեր սիրեցյալ եղբայրներուն։

Այս հավատքով և ոգևորությամբ ալ մենք, Մայր Աթոռի Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամներս, բաժակ կբարձրացնենք Ձեր թանկագին կենացը, մաղթելով Ձեզի ամենայն հաջողություն և ամենայն բարիք»։

Սրբազան պատրիարք հոր սաղմիական հին դասընկեր և «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանն իր ճառի մեջ ասում է.

«Այսօր պատմական օր է Մայր Աթոռի համար։ Մեր մեջ ունենք ներկայությունը, պատմության մեջ առաջին անգամ, Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարք հոր։

Առանձնապես ինձ համար այսօր բերկրանքի և հպարտության օր է։ Սրբազան Պատրիարք հորը ճանաչում եմ 1929 թվից, Երուսաղեմից, երբ միասին էինք սովորում Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում, աշակերտելով լուսահոգի Թորգոմ պատրիարքին։

Միշտ թարմ է հիշողությանս մեջ ուսանողության այդ օրերից, Նազարեթի որբանոցից եկած, մի քիչ դժգույն և թեթև կռացած՝ պատկերը Արշակի, բարությամբ լեցուն աչքերով այդ պատանու, որը սիրում էր ավելի լռել, խոկալ և աղոթել։ Այս երեք բառերի մեջ են խտանում երեկվա իյդեցի (Եղզատ) որբ հայ պատանու և այսօրվա Թուրքիայի հայոց սրբազան պատրիարք հոր նկարագրի ու բնավորության հիմնական գծերը, որպես մարդու և հոգևորականի։

Շնորհք սրբազան պատրիարքը Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի առաջին ձեռնասուն եպիսկոպոսն է, որ բարձրացել է Հայ Եկեղեցու նվիրապետական Աթոռներից մեկի՝ Պոլսի Պատրիարքական Գահի վրա։

Պետք է ուրախությամբ արձանագրել այն խրախուսիչ փաստը, որ Վեհափառ Հայրապետի ձեռնադրած եպիսկոպոսներն այսօր կարևոր, առաջնորդող դեր են կատարում թե՛ արտասահմանի և թե՛ ներքին թեմերում, Հայ Եկեղեցու ղեկավարության մեջ, որպես առաջնորդների, հայրապետական պատվիրակների և հոգևոր հովիվների։

Այս փաստը ինքնին խոսում է այն մասին, որ այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, հայրենի ազատ և խաղաղ պայմաններում, Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանու ներքո, նորից դրվել է իր առաքելության և կոչման բարձրության վրա։

Սրբազան հա՛յր, որպես Թուրքիայի հայոց պատրիարք, Ձեր ետին ունեք 500 տարվա մի փառավոր պատմություն։

Այդ պատմության ոգին թող լինի Ձեզ առաջնորդ և նեշնշման աղբյուր։

Պոլսի Պատրիարքական Աթոռը, ինչպես նշում է Օրմանյան սրբազանը, 1526 թվից ի վեր հոգեպես «վերջնականապես և բացառապես կապվեցավ Էջմիածնի Մայր Աթոռին հետ»։

Ես վստահ եմ, որ Դո՛ւք, Ձեր պատրիարքության տարիներին, է՛լ ավելի կամրապնդեք կանոնական ու պատմական այդ կապը Մայր Աթոռի հետ, ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի և ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու»։

Հոգեշնորհ Տ. Արսեն արեղան մեներգում է «Խաչն ի նախնումն» տաղը, իսկ Մայր Տաճարի երգչախմբի մեներգչուհի Սվետլանա Ջաքարյանը երգում է «Կռունկ»-ը և «Ավե Մարիա»-ն։

Հանդիսության վերջում խոսք է առնում սրբազան պատրիարք հայրը *և ասում.*

«Վեհափա՛ռ Տեր և հարգելի սեղանակիցներ.

Ծանրաբեռնված կլգամ ինքվինքս իմ հասցեին արտահայտված ալնիվ խոսքերու, ապրումներու և երախտագիտական լգացումներու բեռան տակ։

Պիտի նախընտրեի իմ բնական հակումիս հետևելով լռել, քան արտահայտել վանոնք։

Ինձի կվերապահեմ ապրումներս։ Մյուս կողմեն, սիրով և շնորհակալությամբ կփոխադարձեմ իմ հասցեին եղած ալնիվ խոսքերը։

Կուլեմ լոկ արտահայտել իմ երախտագիտական լգացումները։

Այստեղ կգտնվիմ ես, ոչ միայն իբրև Հայաստանյայց Եկեղեցվո նվիրապետական Աթոռներեն մեկուն գահակալը, այլ նաև որպես հայ հոգևորական։

Առաջին հերթին գոհունակությամբ կանդրադառնամ, որ մեր հանրապետական թուրք կառավարության բարյացակամ վերաբերմունքին շնորհիվ կարելիություն ստեղծվեցավ, որ իմ այս ուխտավորական այցելությունս ի գլուխ հանեմ, ինչպես նաև փոխադարձեմ Վեհափառ Հայրապետին Թուրքիո հայության տված սփոփարար այցելության, 1961 թվականին։

Պիտի փափագեի և մաղթեի, որ մեր թուրք կառավարության և Սովետական մեծ Միության հարաբերությունները առավել բարվոքվեին և ավելի լայն հնարավորություններ ստեղծվեին երկուստեք, մշակութային և այլ հարաբերությանց։

Այս պատճառով, ես ուրախությամբ կանդրադառնամ այն պատգամավորության, որ վերջերս այցելեց Սովետական Միություն։

Գոհունակությամբ կնշեմ նաև Սովետական Միության բարյացակամ վերաբերմունքը, որ դյուրություն ստեղծեց մեր վիպայի համար։

Իմ Հայաստան գտնված միջոցին, հատկապես երկրի մեջ իմ կատարած ճանապարհորդության ընթացքին, շատ բարյացակամ վերաբերմունք գտանք քաղաքային իշխանության կողմե, որոնց բոլորին, այս առիթով, կհայտնենք մեր խորին շնորհակալությունը։

Այցելեցինք ուր որ կամեցանք և մեկ ընծայվեցավ ամեն դյուրություն։ Իմ շնորհակալության և երախտագիտության մեծագույն մասը կերթա Վեհափառ Հայրապետին, որուն հյուրը եղանք, մեր այստեղ գտնված ամբողջ միջոցին։ Շարունակ առարկան եղանք իր եղբայրական և հայրական հատուկ հոգատարության։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և Էջմիածնի միաբանությունը շատ բախտավոր են, այս շրջանին մեջ ունենալով Վեհափառ Հայրապետի նման պայծառ և շատ գործունյա հոգևորական բարձր անձնավորություն մը՝ իբրև Պետ և Հայր։

Արդեն իսկ Իր անվան որպես մակդիր. «Շինարար» տիտղոսը կցորդված է։ Վեհափառ Հայրապետի շինարարական գործունեությունը ամենքին հայտնի է։

Ես մասնավոր կերպով կուլեմ անդրադառնալ Վեհի արտասահմանի մեր եկեղեցիներուն նկատմամբ ցույց տված հոգածության։

Պատմության պիտի անցնի Վեհը, որպես այն բացառիկ կաթողիկոսը, որ հատուկ դիտավորությունը ունեցած է այցելելու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հմայքն ու օրհնությունը տանելու Սփյուռքին, մեր ցրված համայնքներուն։

Վեհափառը Իր գահակալության օրեն ասդին ամրորեն և հեղինակաբար Իր ձեռքին մեջ առավ Մայր Աթոռի ղեկավարությունը և կայն դրավ իր պատմական հունին և առաքելության մեջ։

Ուրախ ենք նշելու, որ Էջմիածնի հոգևոր հեղինակությունը, թե՛ հայ եկեղեցիներեն ներս և թե՛ միջեկեղեցական շրջանակներու մեջ, իր բարձր և արժանի մակարդակին վրա կգտնվի։

Վեհափառ Հայրապետը սիրված և համակրության արժանացած անձնավորություն մըն է նաև պետական և ժողովրդական շրջանակներու մեջ։

Սրտագինս կմաղթեմ խաղաղություն ամբողջ աշխարհին, հաճություն և եղբայրություն բոլոր ազգերուն։

Աչքովս տեսա Հայաստանի տնտեսական և մշակութային հսկա վերելքը, ծաղկումը։

Կմաղթեմ Վեհափառ Հայրապետին երկար կյանք և առավել շինարար աշխատանք։

Կաղոթեմ միշտ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանության համար։

Կմեկնիմ այստեղեն հոգվով և ֆիզիկապես կապդուրված, շարունակելու իմ ուսերուս վրա ծանրացած պատասխանատու, հոգևորական պարտականությունս ու պաշտոնս։

Կտանիմ լավագույն հիշատակներ այստեղեն

և կիայցեմ Վեհի օրհնությունը մեր ժողովուրդին և մեր գործին վրա»:

Ներկաների սրտագին ծափերի տակ, Վեհափառ Հայրապետը և Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքը մի անգամ ևս ջերմորեն ողջագուրվում են:

Նորին Ս. Օծությունը, հրաժեշտի այս սրտառուչ ընդունելության վերջում, որպես հիշատակ սրբազան պատրիարք հորը նվիրեց եպիսկոպոսական մի թանգակին մատանի, իսկ հոգեշնորհ Տ. Վազգեն վարդապետին՝ լանջախաչ:

Թուրքիայի հայոց սրբազան պատրիարք հոր պատվին կազմակերպված հրաժեշտի ընդունելությունը վերջացավ խմբովին երգված Տերունական աղոթքով:

Երեկոյան ժամը 8-ին, սրբազան պատրիարք հայրը ներկա եղավ Հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճում հայկական երգի-պարի անսամբլի համերգին, իր շքախմբի և ուղեկիցների հետ:

Այցելություն Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ մեծահարգ պր. Հարությունյանին

Հուլիսի 22-ին, երկուշաբթի օր, առավոտյան ժամը 12-ին, Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Թուրքիայի հայոց սրբազան պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, Երևանում, Գերագույն սովետի դահլիճում, այցելեցին Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության նախագահ մեծահարգ պր. Նագուշ Հարությունյանին:

Պաշտոնական այս այցելության ժամանակ Վեհափառ Հայրապետին և սրբազան պատրիարք հոր ուղեկցում էին Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, Տ. Վազգեն վարդապետ Գպրսյանը, Տ. Արսեն աբեղա Բերբերյանը և տիար Կարապետ Ղազարյանը: Ընդունելությանը ներկա էին նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Ս. Գասպարյանը և տեղակալ Ս. Հովհաննիսյանը:

Վեհափառ Հայրապետի, Թուրքիայի հայոց պատրիարքի և Հայաստանի Հանրապետության նախագահի միջև տեղի ունեցավ սիրալիր զրույց, ջերմ մթնոլորտում:

Թուրքիայի հայոց սրբազան պատրիարք հայրը հրաժեշտ է առնում Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից

Հուլիսի 22-ին, երկուշաբթի, ժամը 4-ին, ճաշից հետո, Վեհարանում վերջին տեսակցությունը տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի և սրբազան պատրիարքի միջև:

Բաժանման ժամն է, արդ, «օրհնե՛, Հա՛յր»:

Խորապես հուզված են Վեհափառ Հայրապետը, պատրիարք հայրը և բոլոր ներկաները:

Բաժանման թախիծ կա բոլորի աչքերում:

Ոտքի վրա է Վեհափառ Հայրապետը: «Տարեք Մեր ողջույններն ու օրհնությունները Թուրքիո մեջ ապրող Մեր զավակներուն և Ձեզ բարի ճանապարհ, սրբազան պատրիարք եղբայր»:

Վերջին անգամ Վեհափառ Հայրապետը և պատրիարք հայրը ողջագուրվում են: Նորին սրբազնությունը հրաժեշտ առնելով, առաջնորդվում է Մայր Տաճար՝ իր վերջին աղոթքը անելու Իջման Ս. Սեղանի առաջ:

Ժամը 6-ին, սրբազան պատրիարք հայրը, ընկերակցությամբ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի և Արարատյան թեմի փոխանորդ Տ. Վահան վարդապետ Տերյանի, այցելում է Երևանում հայ բողոքական համայնքի ժողովարանը և նախագահում է երեկոյան աղոթքին և պաշտամունքին:

Վերապատվելի Սարգիս Կոնսուլյանը ջերմորեն բարի գալուստ է մաղթում Թուրքիայի հայոց պատրիարք հորը հանուն իր համայնքի և շեշտում է Հայ Եկեղեցու և հայ բողոքական համայնքի համագործակցության կարևորությունը և այցելությունների հոգևոր նշանակությունը:

Սրբազան պատրիարք հայրը խոսք առնելով, օրհնում է հայ բողոքական համայնքի հավատացյալներին և շնորհակալություն է հայտնում ջերմ ընդունելության համար:

Հուլիսի 23-ին, երեքշաբթի, առավոտյան ժամը 8-ին, Վեհափառ Հայրապետի ինքնաշարժով Թբիլիսի է մեկնում Թուրքիայի հայոց սրբազան պատրիարք ամենապատիվ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը, իր շքախմբի հետ:

Նորին սրբազնության ուղեկցում է Արարատյան թեմի փոխանորդ Տ. Վահան վարդապետ Տերյանը:

Հանուն Վեհափառ Հայրապետի, սրբազան պատրիարք հորը և նրա շքախմբի անդամներին ճանապարհում են Տ. Հայկազուն և Տ. Ասողիկ սրբազանները, Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը:

Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը Թբիլիսի է ժամանում երեքշաբթի առավոտյան ժամը 12-ին, իր ուղեկիցներով:

Թբիլիսիի հայոց Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու առաջ հավաքված հավատացյալների բազմությունը ջերմորեն է դիմավորում Նորին սրբազնության, որը եկեղե-

ցու զանգակների ղողանջի տակ «Հրաշափառ»-ով առաջնորդվում է եկեղեցի։

Վրաստանի հայոց առաջնորդ Տ. Կոմիտաս եպիսկոպոսը, հանուն իր թեմի, բարիգալուստ է մաղթում պատրիարք հորը, որն օրհնությամբ և շնորհակալությամբ է պատասխանում եղած արտահայտություններին։ Այնուհետև սրբազան պատրիարք հայրը առաջնորդվում է եկեղեցուն կից ընդունելության սրահը, ուր ընդունում է ժողովրդի, թեմական խորհրդի անդամների այցելությունները։

Թուրքիայի հայոց պատրիարք հորն են այցելում նաև Վրացական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի լիազոր Շալուտաշվիլին և Պրավոսլավ եկեղեցու գործերի խորհրդի լիազոր Մեքոբիշվիլին։

Այնուհետև սրբազան պատրիարք հայրը առաջնորդվում է Ինտուրիստ հյուրանոցը։

Երեկոյան ժամը 6-ին, սրբազան պատրիարք հայրը, Տ. Կոմիտաս եպիսկոպոսի առաջնորդությամբ, իր ուղեկիցներով, այցելում է Հավլաբարի էջմիածնեցոց եկեղեցին և այնուհետև՝ Թբիլիսիի հայոց գերեզմանատան պանթեոնը։

Հուլիսի 24-ին, շաբաթ, առավոտյան ժամը 11-ին, սրբազան պատրիարք հայրը, իր ուղեկիցներով, այցելում է վրաց ժողովրդի սրբության սրբոց, հնադարյան Մցխեթայի վանքը։

Մցխեթայում պատրիարք հայրը դիմավորվում է հանդիսավորապես։ Նորին սրբազնությունը հանգամանորեն ծանոթանում է վանքի պատմության և ճարտարապետական առանձնահատկություններին։

Այնուհետև պատրիարք հայրը այցելում է Մցխեթայի մոտ, լեռան բարձունքի վրա գտնվող վրացական Ջիվարիի Ս. Խաչ վանքը։

Հարուստ ու քաղցր տպավորություններով, պատրիարք հայրը հրաժեշտ է առնում Մցխեթայի վանքից։

Թբիլիսի վերադառնալով, նորին սրբազնությունը այցելում է վրաց Ս. Սիոն կաթողիկոսանիստ Մայր Տաճարը, ուր իր ուխտը կատարելուց հետո, համբուրում է Վրաստանի առաքելուհի Ս. Նունե կույսի պատմական խաչը։

Ժամը 1-ին, Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքը իր ուղեկիցներով պաշտոնական-այցելություն է տալիս Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Նորին Սրբություն Եփրեմ Բ-ին, Թբիլիսիի Վրաց Կաթողիկոսարանում։

Երեկոյան ժամը 6-ին, Ֆունիկուլյորում, Վրաստանի հայոց թեմական խորհուրդը, պատրիարք հոր պատվին, կազմակերպում է ողջերթի ընդունելություն, որն անցնում է ջերմ, սրտագին մթնոլորտում։

Հուլիսի 25-ին, հինգշաբթի առավոտյան, սրբազան պատրիարք հայրը ծանոթանում է Թբիլիսիի տեսարժան վայրերին և պատմական հուշարձաններին։

Երեկոյան ժամը 4-ին, նորին սրբազնությունը հրաժեշտ առնելով, «Տու—104» ինքնաթիռով մեկնում է Մոսկվա։

Վնուկովոյի օդանավակայանում սրբազան պատրիարք հորը ջերմորեն դիմավորում են Մոսկվայի հայոց հոգևոր հովիվ գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոս Գևորգյանը, հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը և բարեշնորհ Ժիրայր սարկավագ Կոնսուլյանը։

Նորին սրբազնությունն առաջնորդվում է «Լենինգրադսկայա» հյուրանոցը, ուր մի օր առաջ ժամանել էր նաև Վեհափառ Հայրապետը դեպի Չեխոսլովակիա Իր ուղևորության ճանապարհի վրա։

Հուլիսի 26-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 11-ին, սրբազան պատրիարք հայրը այցելում է Մոսկվայի թուրք դեսպանին։

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարքը, իրենց շքախմբերով, այցելում են Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսիին։

Եկեղեցական երեք պետերի միջև տեղի է ունենում եղբայրական ջերմ զրույց, մտերիմ մթնոլորտում։

Երեկոյան ժամը 8-ին, «Լենինգրադսկայա» հյուրանոցում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և Թուրքիայի հայոց սրբազան պատրիարքին այցելում է Մոսկվայում թուրք դեսպանը։

Հուլիսի 27-ին, շաբաթ, Վեհափառ Հայրապետը և սրբազան պատրիարք հայրը, առավոտյան ժամը 9-ին, «ՏՈՒ—104» ինքնաթիռով մեկնում են Պրագա։

Նորին Ս. Օծության և Նորին սրբազնության ճանապարհում են գերաշնորհ Տ. Պարգև եպիսկոպոսը, Մոսկվայի հայոց եկեղեցական խորհրդի անդամները, թուրք դեսպանի ներկայացուցիչը և պաշտոնական այլ անձինք։



ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՇՆՈՐՀՔ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԵՏ

«Էջմիածին» ամսագրի խմբագիրը հուլիսի 22-ին, երկուշաբթի առավոտյան, տեսակցություն ունեցավ Թուրքիայի Հայոց ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքի հետ, որը ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։

Սրբազան պատրիարք հայրը, ընդունելով «Էջմիածին» ամսագրի խմբագրին, սիրով պատասխանեց նրա հարցերին։

Ստորև ներկայացնում ենք այդ տեսակցությունը իր շահեկանության համար։

Հարց.— Սրբազան պատրիարք հայր, որպես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ, հունիսի 23—25 օրերին, ներկա եք եղել Աթոռ լեռան վանքերի հաստատման 1000-ամյակին նվիրված հանդիսություններին։ Խնդրում ենք պատմել Ձեր տպավորությունները։

Պատասխան.— Որպես Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ներկայացուցիչ, Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու Հայ Եկեղեցին ներկայացուցինք Աթոռ լեռան վանքերու հաստատման և վանական կազմակերպության 1000-ամյակին նվիրված հանդիսություններուն։

Այս առաքելության ժամանակ մեզ կընկերանային Ստամբուլի Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի տեսուչ հոգեշնորհ Տ. Շահան ծայրագույն վարդապետ Սվաճյանը, հոգեշնորհ Տ. Խոսրով վարդապետ Էմիրզեյանը և պր. Կարապետ Ղազարյանը։

Հունիս 21-ին, ուրբաթ օր, ժամանեցինք Աթենք մեր շքախմբի հետ և ընդունվեցանք Աթենքի և Համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Խրիսոստոմոս սրբազանի երկու եկեղեցական ներկայացուցիչներու, միտրոպոլիտարանի պաշտոնեության, ինչպես նաև Հունաստանի հայոց առաջնորդական տեղապահ արժանապատիվ Տ. Մեսրոպ ավագ քահանա Տ. Հակոբյանի, թեմական խորհուրդի անդամներու և հոծ հայ բազմության մը կողմե և առաջնորդվեցանք Քեֆիսի «Սեսիլ» հյուրանոցը, որպես հույն կառավարության հյուրը։

Նույն օրը երեկոյան, հյուրանոցին մեջ, ընդունեցանք այցելությունը հունահայ թեմի ազգային-եկեղեցական մարմիններու։

Շաբաթ օր, հունիս 22-ին, մասնավոր շոգենավով մը և Բուլղարիո, Ռումանիո պատրիարքներու և օրթոդոքս եկեղեցական այլ բարձրաստիճան հոգևորականներու և մեր շքախումբին հետ, մեկնեցանք Այնորոզ։ Հունաստանի հայոց թեմական խորհուրդին կողմե որպես թարգման մեզ ընկերացավ պր. Ս. Գասպարյանը։

Աթոսը քսան մեծ և ավելի քան 100 փոքր վանքերու համադրություն մըն է, որ կգտնվի Խալքիտիքի թերակղզիի արևելյան մասին վրա և հսկա մենաստանի մը տպավորությունը կգործե նայողին վրա։

Թերակղզիի գլխավոր վանքը Մեծ Լավրա կկոչվի, Աթոս սրբազան լեռան ստորոտը։ Իսկ վանքերու վարչական կեդրոնը կկոչվի Կարիե։

Աթոս լեռան վանքերուն մեջ կպահվին շատ արժեքավոր ձեռագիրներ և հնություններ։

Աթոս լեռան վանքերու հաստատման 1000-ամյակը կկատարվեր Ստամբուլի Հունաց Տիեզերական Պատրիարքի՝ Նորին Ամենապատվություն Տ. Աթենագորասի նախագահությամբ։ Այս բոլոր վանքերը և վանական միաբանությունները ենթակա են Ստամբուլի Հունաց Տիեզերական Պատրիարքության իրավասության։ Պետք է նշեմ, սակայն, որ Աթոս լեռան մենաստանները եղած են ընդհանրապես օրթոդոքս ինքնագլուխ եկեղեցիներու վանական կեդրոնները։ Այստեղ վանքեր ունեցած են վրաց, բուլղար, ռումեն պրավոսլավ եկեղեցիները։ Կարիեի մեջ ամենագեղեցիկ և մեծարժեք սրբապատ-

Ամենապատիվ Տ. Շնորհք պատրիարքը օրթոդոքս պատրիարքների հետ հանդիսության ժամանակ

կերներով հարուստ վանքեր կհամարվին ռուսական երկու վանքերը։

Ժամանակ մը Աթոս լեռան վանքերուն մեջ ապրող վանականներու թիվը հասած է քսանհինգ հազարի։ Այժմ երկու հազար վանականներ միայն կապրին այդ վանքերու մեջ։

Հանդիսությանց անձամբ կնախագահեր Ստամբուլի Տիեզերական Պատրիարքը։ Ներկա էին Երուսաղեմի հունաց պատրիարք Բենեդիկտոսը, Սերբիո Գերմանոս պատրիարքը, Բուլղարիո Կյուրեղ և Ռումանիո Հուստինիանոս պատրիարքները, Ֆինլանդայի օրթոդոքս եկեղեցիի էկզարխը, Ալեքսանդրիո, Անտիոքի պատրիարքությանց ներկայացուցիչներ, Կիպրոսի արքեպիսկոպոսության, Չեխոսլովակիայի, Լեհաստանի օրթոդոքս եկեղեցիներու ներկայացուցիչներ։

Հյուրերու կարգին առաջին տեղը հատկացված էր Վեհափառ Հայրապետի ներկայացուցչին՝ Թուրքիո հայոց պատրիարքին և անոր շքախմբին։ Ներկայացուցիչներ ունեին նաև կաթոլիկ միաբանություններ, հույն կաթոլիկներ, ղպտի, ասորի եկեղեցիներ։

Անգլիկան Եկեղեցին և Քենտերբերիի Արքեպիսկոպոսը կներկայացներ Ջիպրալտարի եպիսկոպոսը։ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը կներկայացներ անձամբ ընդհանուր քարտուղար դոկտ. Վիսսեր, Ռուսաց Եկեղեցին և Համայն Ռուսաց Պատրիարք Նորին Սրբություն Ալեքսին կներկայացնեին Նիկոտիմ արքեպիսկոպոսը և Եվրոպայի մեջ Պատրիարքի ներկայացուցիչ էկզարխը։

Հոբելյանական հանդիսության անձամբ ներկա էր Հունաստանի թագավոր Նորին Վեհափառություն Պավլոս Ա-ը դահաժառանգ իշխանի, իր նախարարներու, կաբինետի և այլ պաշտոնական անձնավորություններու ընկերակցությամբ։

Հանդիսությունը սկսավ հունիս 22-ին, շաբաթ օր, եկեղեցական արարողությամբ, աղոթքով և սաղմոսերգությամբ։

Օրվան հանդիսավորության առիթով պատարագեց Ստամբուլի Հունաց Աթենագորաս Տիեզերական Պատրիարքը։ Սուրբ պատարագին կամանակցեին ներկա օրթոդոքս պատրիարքները զգեստավորված։

Հավարտ սուրբ պատարագի, տեղի ունեցավ առաջին պաշտոնական ընդունելությունը, որուն հրավիրված էին միայն պատրիարքները և կառավարական դեմքեր, թագավորի գլխավորությամբ, օրթոդոքս ինքնագլուխ եկեղեցիներու պետեր և հյուրեր։ Աթենագորաս

Պատրիարքը և Հունաց Թագավորը ճառեր փոխանակեցին։

Հունիս 23-ին, կիրակի, հանդիսության երկրորդ օրը սկսավ կրոնական պաշտամունքով։

Կպատարագեր դարձյալ Աթենագորաս Պատրիարքը։ Սուրբ պատարագին այս անգամ զգեստավորված կմասնակցեր նաև Ռուսաց Պատրիարքի ներկայացուցիչ Նիկոտիմ արքեպիսկոպոսը։

Շատ փառաշուք և տպավորիչ էր եկեղեցական հանդիսությունը։ Ընդունելության ժամանակ նորեն ճառեր փոխանակեցին Տիեզերական Պատրիարքը և Թագավորը։

Մեր գլխավորած պատգամավորությունը առարկա էր մասնավոր ուշադրության և հոգածության, թեև առիթը չունեցանք հանդիսության ժամանակ ելույթ ունենալու և հաղորդելու Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ողջույններն ու շնորհավորանքը։ Ըստ նախապես կազմված ծրագրի, ելույթ ունեցան միայն Թագավորը և Տիեզերական Պատրիարքը։

Հունիս 25-ին վերջացան հանդիսությունները և բոլոր հրավիրյալները վերադարձան Աթենք։

Հարց.— Սրբազան հա՛յր, հանդիսությունից հետո, առիթը ունեցա՞ք այցելելու հունահայ մեր համայնքին։

Պատասխան.— Այո, օգտվելով առիթեն, այցելեցի Էջմիածնի հավատարիմ մեր համայնքին, տանելու համար Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու ողջույնը։ Հատուկ կերպով երկարաձգեցի Աթենք մնալու օրերս, որպեսզի կիրակի օր մը ժողովուրդին հետ ըլլամ, Պերիստերիի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին այցելեմ, որ միակ մատուռն է Էջմիածնի հավատարիմ համայնքի ձեռքը մնացած։

Հունիս 30-ին, կիրակի օր, թե՛ մատուռին մեջ և թե՛ դուրսը հսկա բազմություն մը հավաքված կսպասեր։

Եկեղեցական թափորով և «Հրաշափառ»-ով մուտք գործեցինք եկեղեցի և ողջունելով ժողովուրդը, հաղորդեցինք Վեհափառ Հայրապետի օրհնություններն ու ողջույնները։ Մեր այցելության առիթով պատարագ մատույց հոգեշնորհ Տ. Շահան ծայրագույն վարդապետ Սվաճյանը, իսկ մենք Բանին կենաց քարոզությամբ մխիթարեցինք ժողովուրդը և սրտապնդիչ խոսքերով հորդորեցինք ամուր մնալ իրենց ուղիղ, կանոնական դիրքի վրա դեպի Ս. Էջմիածինը։ Մեծապես ուրախացավ և գոհացավ ժողովուրդը և ավելի սերտորեն կապված զգաց իրեն Մայր Աթոռին։

Մեկ օր առաջ, շաբաթ, համայնքը մեր պատվին կազմակերպած էր մեծ ընդունելություն մը, Սեսիլ հյուրանոցին մեջ։

Աթոսեն Աթենք մեր վերադարձեն հետո, մեզի այցելության եկան նաև Անթիլիասի կապված հատվածի հոգևորականը իր խորհրդականներով։ Եկած էին բարի գալուստ մաղթելու Թուրքիո հայոց պատրիարքին։ Այցելության ժամանակ խոսք դարձավ նաև Անթիլիասի դիրքի մասին։ Մենք կոչ ըրինք իրենց վերադառնալ 1958 թվականի կանոնական կացության։ Պետք է նշենք, որ անկեղծորեն տրամադրություն հայտնեցին միության, բայց այժմ այդ իրենց ձեռնհասությունեն վեր կնկատեն։ Կսպասեն որ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Անթիլիասի աթոռակալը համերաշխության գետին մը գտնեն և հարցը այդ ձևով լուծվի ինքնաբերաբար։ Հրավիրեցին նաև այցելել իրենց եկեղեցին։ Բայց ժամանակի սղության պատճառով չկրցանք այցելել իրենց։

Աթենք մեր գտնված միջոցին այցելեցինք Աթենքի և Համայն Հունաստանի Արքեպիսկոպոս Խրիսոստոմոսին, որ ջերմորեն ընդունեց մեզ։ Սիրալիր զրույց ունեցանք անոր հետ։ Մեր տեսակցության ժամանակ, շեշտեցինք որ Ստամբուլեն եկած այցելու հոգևոր հովիվներու առաջ արգելք չհարուցվի եկեղեցական պաշտամունքներուն ներկա գտնվելու համար, հայ եկեղեցիին մեջ։

Միաժամանակ այցելեցինք նաև Աթենքի թուրք դեսպանին, որ և փոխադարձեց մեր այցելությունը, անձամբ պանդոկ գալով։

Նույնպես պաշտոնական այցելություն տվինք հույն արտաքին գործոց նախարարության, ուր ընդունվեցանք պատշաճ պատվով և ջերմորեն։ Տեսակցության ժամանակ պարզեցինք Էջմիածնի հավատարիմ հայ հատվածի դիրքին կանոնականությունը և հատուկ հուշագիր մը մատուցինք այդ հարցի կապակցությամբ։ Հուշագրի պատճենը ներկայացուցած ենք Վեհափառ Հայրապետին։

Հրաժեշտի այցելություն մը ալ տվինք Աթենագորաս Պատրիարքին, որ մեզի ջերմորեն ընդունեց իր եպիսկոպոսներով շրջապատված, Մաքսիմոս Հաուզ պալատին մեջ։ Խնդրեց, որ իր եղբայրական մասնավոր ողջույնները և սրտագին շնորհակալությունը հայտնենք Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Աթոս լեռան 1000-ամյակի հանդիսության առիթով մեզի իբր Հայ Եկեղեցիի ներկայացուցիչ նշանակելուն և անձամբ մեր մասնակցությունը բերած ըլլալուն համար։

Հունիս 1-ին, մեր շաբաթի երկու վարդապետ անդամները վերադարձան Ստամբուլ, իսկ մենք մասնավոր այցելությամբ մը շարունակեցինք մեր ճանապարհը Միլանի վրայով դեպի Լիզբոն և Լոնդոն, ընկերակցու-

Սրբազան պատրիարքը Աթենքում, Պերիստերիի հայոց Ս. Աստվածածին եկեղեցու առաջ, ժողովրդի հետ։

թյամբ պր. Կարապետ Ղազարյանի, դեպի Մայր Աթոռ ուխտի երթալու մեր ճանապարհին վրա։

Հարց.— Սրբազան հա՛յր, կարելի՞ է իմանալ Լիսաբոն և Լոնդոն Ձեր այցելությունների նպատակների և արդյունքների մասին։

Պատասխան.— Այո։ Հուլիս 1-ին հասանք Միլան, ուր դիմավորեց մեզ գերաշնորհ Տ. Զգոն սրբազանը, համայնքի ներկայացուցիչներուն հետ։ Հինեն ծանոթ էի այս պատվական համայնքի կյանքին, որ այս անգամ ալ մեզ կողջուներ ջերմորեն։ Մինչև ամսու 3-ը մնացինք Միլան, վայելելով համայնքի և համայնքային վարչության ջերմ հյուրասիրությունը։ Միլանի մեջ, սեղմ շրջանակի մը մեջ, հանդիպում ունեցանք մեր Եկեղեցիի զավակներուն հետ։

Դեպի Լիզբոն մեր ճանապարհին վրա այցելեցինք նաև Նիս, ուր փոքր պատվական հայ գաղութ մը կա, իր եկեղեցիով։ «Հրաշափառ»-ով մտանք եկեղեցի և մեր ողջույնի խոսքը ըսինք Հայ Եկեղեցիի զավակներուն։

Հուլիս 6-ին հասանք Լիզբոն, ուր ջեռորեն դիմավորվեցանք Գալուստ Կյուլպենկյան հիմնարկի ներկայացուցիչներուն կողմե։

Մեր Լիզբոն այցելության առաջին նպատակն էր փոխադարձել հիմնարկի նախագահ դոկտ. Պերտիագոյի և հայկական գործերու բաժնի տնօրեն պր. Ռոբերտ Կյուլպենկյանի պաշտոնական այցելությունը, 1962 թվի դեկտեմբերին տրված մեզ և Պատրիարքարանիս։ Երկրորդ՝ Ս. Խաչ դպրեվանքի կարիքներուն և կրթական շենքերու վերանորոգման հարցերու մասին խորհրդակցություն ունենալ հիմնարկի վարչության հետ։

Հիմնարկի պատասխանատու դեմքերը կբացակայեին մայրաքաղաքեն՝ արձակուրդով։ Մեր ժամանման հաջորդ օրը հասավ պր. Գ. Եսայանը, որ այցելեց մեզ և շատ սիրալիր և ջերմ զրույց ունեցավ մեզ հետ։ Գոհունակությամբ և երախտագիտությամբ պետք է նշեմ, որ սիրով ընդունվեցան մեր առաջարկները, իրենց օժանդակության վերաբերյալ հիմնական հարցերուն մեջ։

Հուլիս 9-ին ժամանեցինք Լոնդոն, ընկերակցությամբ Ստամբուլի Ս. Խաչ դպրեվանքի խնամակալության ատենապետ պր. Կարապետ Ղազարյանի։

Մեզ դիմավորեցին հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոսը։

հոգեշնորհ Տ. Իսահակ, Տ. Վազգեն, Տ. Ներսես վարդապետները, Քենտրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչ եպիսկոպոսը, Լոնդոնի Հույն Եկեղեցիի առաջնորդի ներկայացուցիչը, Լոնդոնի հայ համայնքի խորհուրդի ատենապետ Ե. Պենլյան, խորհուրդի անդամներ Հ. Գալուստյան, Ա. Մուքաֆյան, Լևոն և Հրանտ Ապաճյաններ, տիկին Ֆ. Ապաճյան, Ա. Խաչատուրյան և Լոնդոնի հայ տան քարտուղար Հակոբ Կյուրինլյան։

«Հրաշափառ»-ով մուտք գործեցինք Լոնդոնի հայոց Ս. Սարգիս եկեղեցին, ուր մեզ ողջունեցին Տ. Պսակ եպիսկոպոսը, Քենտրբերիի Արքեպիսկոպոսի ներկայացուցիչը և Հույն Եկեղեցիի ներկայացուցիչը։ Մեր պատասխան խոսքին մեջ շնորհակալություն հայտնեցինք Տ. Պսակ եպիսկոպոսին և բոլոր ներկաներուն ջերմ ընդունելության համար և ավելացուցինք, որ «իմ տունս է որ կայցելեմ, ուր ծառայեցի Աստուծո և մեր պատվական ժողովուրդին, չորս տարիեն երկու ամիս պակաս և ուրախ եմ, որ անգամ մը ևս Աստված դիս հոս կբերե իմ Մայր Աթոռ և Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց ամենուս սիրելի Հայրապետին այցելության ճամբուս վրա։ Վեհափառ Հայրապետին հրահանգին վրա էր, որ Նորին Ս. Օծությունը ներկայացուցի Աթոռի վանքերուն հիմնադրության 1000-ամյակին հանդիսության և հիմա կմեկնիմ երկու օրեն դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին»։

Համայնքը մեր պատվին ընդունելություն մը կազմակերպած էր Քինզինգտոն հյուրանոցին մեջ։

Լոնդոն գտնված միջոցին, այցելեցինք նաև Քենտրբերիի Արքեպիսկոպոսին և Լոնդոնի Թուրքիո դեսպանին։

Հարց.— Սրբազան հա՛յր, կխնդրենք տեղեկություններ հաղորդել Ձեր պատրիարքական գործունեության և Թուրքիո հայության եկեղեցական-մշակութային կյանքի մասին։

Պատասխան.— Թուրքիո Հայոց Պատրիարքության մեր ընդհանուր գործունեության պատկերը, որպես տարեկան տեղեկատվություն տպված Ստամբուլի մամուլի մեջ, հայտնի է Ձեզ։

1961 տարվո հոկտեմբեր 11-ին, կամոքն Աստուծո և համայնքիս ներկայացուցիչներու ձայնով կանչվեցանք այս պատասխանատու պաշտոնին։ Անցած շուրջ 20 ամիսներու մեջ մեր պատրիարքական գործունեությունը սահմանափակված է զուտ եկեղեցական-կրոնական կալվածի մեջ։

Այսօր Թուրքիո մեջ ապրող հայության թիվը կհաշվվի շուրջ 70—80 հազար հոգի, մեծ մասը կեդրոնացած Ստամբուլի մեջ։ Փոքր համայնքներ ունինք նաև Կեսարիա, Դիարբեքիր, Իսկենդերուն, Անկարա և այլ գավառական քաղաքներու մեջ։

Կեսարիա, Դիարբեքիր և Իսկենդերուն կան գործող հայկական եկեղեցիներ, իրենց քահանաներով։

Ներքին ոչ մեկ գավառին մեջ դպրոց չունինք։ Իսկ այն տեղերը, ուր քահանաներ չկան, տարին անգամ մը այցելու հովիվ կղրկվի մկրտություն, պսակ կատարելու և Բանին կենաց քարոզությամբ մխիթարելու ժողովուրդը։

Ստամբուլի մեջ ունինք շուրջ 60—65 հազարի հայություն մը, 35 եկեղեցիներով և նույնչափ թվով քահանաներով։ Ստամբուլի մեջ ունինք 30 հայ վարժարաններ (նախակրթական և երկրորդական), որոնցմե չորսը լիսե, Կեդրոնական (մանչերու), Եսայան (աղջիկներու), Բանկալթի լիսե (Մխիթարյան) և Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքը։

Այս դպրոցներու մեջ դասավանդության հիմնական լեզուն հայերենն է, ի բաց առյալ թուրքերեն լեզվի ուսուցումեն և պետականորեն ճշտված դասանյութերեն։ Ինչպես բոլոր դպրոցները Ստամբուլի մեջ, հայ դպրոցներն ալ կգտնվին պետական կրթական տեսչության հակակշռին տակ։

Դպրոցներու տնտեսական մատակարարումը կկատարվի տեղական եկեղեցիներու և համայնքի կողմե։

Վերոհիշյալ չորս հայ լիսեներու շրջանավարտները կընդունվին պետական համալսարան։

Հատկապես կուզեինք խոսիլ Սկյուտարի Ս. Խաչ դպրեվանքի մասին, որ հանգուցյալ Գարեգին լուսահոգի պատրիարքի մեծագործություններեն մեկը եղավ։ Դպրեվանքը արդեն տասը տարվան պատմություն մը ունի։ Այս կրթական հաստատությունը բարերար դեր մը կկատարե և շատ կարևոր պակաս մը կլրացնե մեր համայնքի կրթական դրության մեջ։ Այժմ ուսանողներու թիվը հասած է 160 աշակերտի։ Դպրեվանքը ունի երկրորդական և լիսեի բաժիններ, յուրաքանչյուրը երեք դասարաններով։

Երրորդ տարին է որ դպրեվանքը իր շրջանավարտներու հունձքը կուտա։ Անոնցմե ոմանք իրենց ուսումը կշարունակեն պետական համալսարաններու մեջ, իսկ ուրիշներ արդեն իսկ ընդգրկած են ուսուցչական ասպարեզը։ Անցյալ տարի և այս տարի ալ, ունեցանք երկուքական ընծայացումներ շրջանավարտներուն մեջ, որոնցմե նախորդ տարվանները կուսակրոն սարկավագ ձեռնադրեցինք, իսկ այս տարվան երկու շրջանավարտները պիտի ձեռնադրենք մեր Աթոռը վերադառնալեն ետքը։

Ընծայացումները երեք տարի դպրեվանքի

մեջ պիտի հետևին մասնավոր դասընթացքներու և կատարելագործվին տեղական համալսարանին մեջ, նախքան իրենց կուսակրոն քահանա ձեռնադրվիլը։

Ստամբուլի մեջ կգործեն նաև երեք համայնքային բարեսիրական հաստատություններ.

1) Ս. Փրկիչ ազգային հիվանդանոցը, որ ունի տիպար հաստատության մը հատուկ բժշկական բոլոր բաժինները, այն է հիվանդանոց, ծերանոց, բուժարան, հոգեբուժական բաժին և այլն։

Ազգային հիվանդանոցը ունի 400 մահճակալ և շուրջ 100 հոգիե բաղկացած որակավոր բժշկական անձնակազմ, որ բարեխղճորեն և ձեռնհասորեն կկատարե իր պարտականությունները։

Այս հսկա հաստատության ծախքը կհոգա համայնքը։ Կառավարությունը ևս տարեկան որոշ հատկացում մը կընե հիվանդանոցին։ Ս. Փրկիչը ունի իր ամսագիրը և իր մատուռն ու քահանան։

2) Գալֆայան աղջկանց որբանոց, որուն ղեկավարությունը կգտնվի Գալֆայան կրոնական ուխտի քույրերու ձեռքը։ Որբանոցը ունի 100 տնաղուրկ որբուհիներ։ Տիպար հաստատություն մըն է, ուր բարոյական, մտավոր դաստիարակության կողքին կուսուցվի նաև ձեռագործ և առտնին տնտեսագիտություն։ Որբանոցը ունի իր մատուռը։

3) Գարակյոզյան մանչերու որբանոց, ուր կպատրաստվին 200 ուսանողներ, եկած մեծ մասամբ գավառեն։ Գարակյոզյան որբանոցն ալ մեծ հաստատություն մըն է, նախակրթարանի մակարդակով։

Այս երեք հաստատություններ ունին իրենց հատուկ խնամակալությունները, ինչպես նաև Ս. Խաչ դպրեվանքն ու Կեդրոնական լիսեն, ընտրված Ստամբուլի համայնքի կողմեն։

Մենք հաճախ կայցելենք համայնքային այս հաստատությունները և մոտեն կհետաքրքրվինք անոնց հանրօգուտ գործունեությամբ։ Այդ հաստատությունները բարոյապես կապված են Պատրիարքարանին և պատրիարքին։

Ստամբուլի հայաշատ թաղերն են Գումգափուն, ուր կգտնվի Պատրիարքարանը Ս. Աստվածածին աթոռանիստ իր մայր եկեղեցիով, Սամաթիան իր Ս. Գևորգ եկեղեցիով, որ եղած է պատրիարքանիստ առաջին եկեղեցին, և Կեդիկփաշա։ Ասոնք կգտնվին հին քաղաքի սահմանին մեջ։ Մեր ժողովուրդի մեծագույն դանգվածը համախմբված է Ֆերիքյոյ, Բեյօղլու, Բեշիկթաշ։ Գոհունակությամբ նշենք, որ Ստամբուլի հայությունը սրտովին կապված է իր Եկեղեցիին, տոհմական իր ավանդություններուն և մեծ հոգածություն ցույց կուտա իր վարժարաններուն և իր համայնքային հաստատություններուն։

Վերջին 3—4 տարիներուն ընթացքին վերանորոգության նոր թափ մը սկսած է հին եկեղեցիներու և դպրոցական շենքերու։

Ստամբուլի մեջ ամեն եկեղեցի ունի իր դպրաց դասը, և մեծ եկեղեցիները ունին իրենց երգչախմբերը։

Ունինք բազմաթիվ սանուց միություններ և ուսուցչաց միություն, որ կազմված է վերջին տարիներս և կաշխատի ուսուցիչներուն համար հանգստյան թոշակ ապահովելու և հայերեն դասագրքերու պատրաստության և տպագրության գործով։

Շատ սիրալիր հարաբերություններ կպահենք կառավարության հետ, ըլլա կեդրոնի՝ Անգարայի և ըլլա Ստամբուլի կուսակալության հետ։ Շարունակական կապ կպահենք կառավարական ավագանիին հետ, պաշտոնական մեծ տոներու առիթով փոխանցված շնորհավորական հեռագիրներով։

Անցյալ մարտ ամսին այցելեցինք երկրի մայրաքաղաքը և պետական ավագանիին հայտնեցինք մեր շնորհակալությունը և հարգանքը մեր նախորդի թաղման և պատրիարքական ընտրության ընթացքին, և անոր հաջորդին հին քաղաքացիության շնորհին մեջ վերահաստատվելու առթիվ տրված բարյացակամության համար։

Անձամբ մեր հարգանքը և մեր հարումը հայտնեցինք պետության Վսեմաշուք Նախագահ գեներալ Ջեմալ Գյուրսելին, Վսեմաշուք վարչապետ Իսմեթ Ինենյուին և Ազգային մեծ ժողովի բաժիններու նախագահներուն, ներքին գործոց, արդարության պետական գործավարներուն, Անկարայի կուսակալին և կրոնից տեսչության։

Իսկ Ստամբուլի մեջ պաշտոնական առիթներով հաճախ կայցելենք Վսեմաշուք Կուսակային և մեր քաղաքապետին և կընդունինք անոնց փոխադարձ այցելությունները։

Ստամբուլի Մուֆթիին հետ ևս այցելություններ փոխանակելու պատեհությունը կունենանք։

Քաղաքիս հրեից բարունապետի հետ մեր հարաբերությունները նույնպես բարեկամական և սիրալիր են։

Սիրալիր և եղբայրական հարաբերություններ կպահենք օտար եկեղեցական աթոռներու և հատկապես Ստամբուլի Հունաց Եկեղեցիի Գուլխ՝ Նորին Սրբություն Աթենագորաս Տիեզերական Պատրիարքին հետ, ինչպես նաև հայ կաթոլիկ համայնքի միաբանապետին և հայ բողոքական համայնքի ազգապետին հետ։

Ստամբուլի հայությունը ունի իր հատուկ մամուլը՝ «Ժամանակ» և «Մարմարա» օրա-

թերթերը, որոնք իրենց էջերը սիրով կտրամադրեն Պատրիարքարանի զեկույցներուն և պաշտոնական գրությանց և հաղորդությանց նկարագրության։ Ունինք նաև «Պարտեզ» մանկական և «Քուլիս» արվեստի վերաբերյալ պարբերականները։ Սանուց միությունները ևս ունին իրենց հատուկ մամուլը։

Կուզեինք խոսիլ նաև առանձին կարևորությամբ Պատրիարքարանիս պաշտոնաթերթ «Շողակաթ» հանդեսի մասին, որու հրատարակությունը շարունակվեցավ մինչև 1959 թվականը։ Հանգուցյալ Պատրիարքը ամսագրի 1959, 1960 համարները համադրեց «Շողակաթ» տարեգրքի մեջ, նվիրված լուսահոգի Եղիշե Դուրյան պատրիարքի ծննդյան 100-ամյակին։ Մեր օրով կշարունակվի «Շողակաթ»-ը որպես պարբերաթերթ։ Մենք մինչև այժմ հրատարակած ենք երկու բացառիկ թիվեր, մեկը նվիրված Գարեգին պատրիարքի մահվան տարելիցին, իսկ երկրորդ համարը նվիրված Պատրիարքությանս հաստատման 500-ամյակին։

Ծրագրած ենք հառաջիկա տարիեն սկսյալ հրատարակել «Շողակաթ»-ը որպես ամսագիր։ Մինչև այժմ Պատրիարքարանս չուներ իր սեփական տպարանը. ինչպես ունին մեր մյուս նվիրապետական Աթոռները։ Ուրախ ենք գոհունակությամբ և երախտագիտությամբ հայտնելու, որ մոտիկ ապագային, մեր Լիզբոն այցելության և խնդրանքի վրա, Գալուստ Կյուլպենկյան հիմնարկի սիրանդակությամբ, Պատրիարքարանս կունենա իր սեփական տպարանը։

Անցնող դեկտեմբեր ամսվան ընթացքին կատարեցինք Թուրքիո Հայոց Պատրիարքության հաստատման 500-ամյակը եկեղեցական, կրոնական հատուկ արարողություններով։ Հայ եկեղեցիներուն մեջ կարդացվեցավ Վեհափառ Հայրապետի այս առթիվ գրած օգոստոս 22 թվակիր սրբատառ կոնդակը, որ և տպագրվեցավ մամուլին մեջ։

Որպես պատրիարք Թուրքիո հայոց, սիրալիր և կանոնական հարաբերություններ պահած ենք և կպահենք Հայ Եկեղեցվո նվիրապետական մյուս Աթոռներու և արտասահմանի հայ թեմերու հետ։

Առաջին հերթին մեր կապը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Նորին Վեհափառություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հետ շատ սիրալիր է և բնականոն։

Պաշտոնական առիթներով միշտ կփոխանակվին շնորհավորական հեռագրեր, Մայր Աթոռեն կստանանք կոնդակներ, որոնք, ըստ կանոնական սովորության, կկարդացվին մեր եկեղեցիներուն մեջ և ապա կհրատարակվին Ստամբուլի հայ մամուլին մեջ։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ մեր կանոնական հարաբերությունները ավելի ամրապնդելու համար, մենք անձամբ այցելեցինք Մայր Աթոռ Ս. Էջմիածին։ Մեր այցելությունը միաժամանակ փոխադարձ այցելություն մըն է Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի 1961 թվականի հունիսին Թուրքիո Հայոց Պատրիարքության և ժողովուրդին տված պատմական սփոփարար և օրհնաբեր այցելության։

Հարց.— Սրբազան հա՛յր, Ձեր երկրորդ այցելության ժամանակ, ինչպե՞ս գտաք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Վեհափառ Հայրապետը։

Պատասխան.— Ինչպես գիտեք, առաջին անգամ Մայր Աթոռ այցելեցինք 1955 թվականի աշնան ազգային-եկեղեցական ժողովին մասնակցելով, որպես Կալիֆոռնիո թեմի առաջնորդ։

Այս անգամ Մայր Աթոռ կայցելենք որպես Թուրքիո հայոց պատրիարք։

Առաջին անգամն է, որ Թուրքիո հայոց պատրիարք մը կայցելե Մայր Աթոռ։

Մեր տպավորությունը շատ բարձր և խոր եղավ, տեսնելով Ս. Էջմիածինը և անոր շրջապատը շատ բարեկարգ և շեն վիճակի մը մեջ։

Նորին Ս. Օծությունը գտանք առույգ, առողջ, լավատես և հոգևին նվիրված Իր բարձր պաշտոնին և պատասխանատու կոչումին պարտականություններու կատարման մեջ, շրջապատված գիտակից և մեծ մասամբ երիտասարդ միաբանությամբ և գործիմաց պաշտոնեությամբ մը։

Եղանք Մայր Տաճարին մեջ, մեր ուխտը և աղոթքը կատարեցինք Իշման Ս. Սեղանի առաջ և խորապես տպավորվեցանք Մայր Տաճարի վերանորոգված գեղեցիկ պատկերեն։ Այցելեցինք գանձատունը, ուր մեծ ուրախությամբ նշմարեցինք, որ ամեն ինչ լավ դասավորված է և որտեղ գտանք հայ եկեղեցական արվեստի վերաբերյալ շատ արժեքավոր և ճոխ սպասներ, անոթներ, իրեր, սրբություններ, քան կերևակայեինք։

Հատկապես հետաքրքիր էր նաև տեսնել անձամբ Ավագ Խորանին տակ պեղումներու շնորհիվ հայտնաբերված հեթանոսական կրակարանը, որուն մասին շատ բան լսած և կարդացած էինք։

Մեզի համար ամենամեծ անակնկալը և նորությունը եղան նոր Վեհարանը, Տրդատի գեղեցիկ և շատ տպավորիչ կամարակապ Դուռը։ Արդարև, նոր Վեհարանը վեհաշուք կառույց մըն է, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին վայել հայրապետանոց մը, իր դահլիճներով, գահասրահով, աշխատանքի սենյակով և ամեն հարմարություններով։

Գոհունակությամբ այցելեցինք նաև տպա-

Տ. Աթենագորաս Տիեզերական Պատրիարքը և Տ. Շնորհք պատրիարքը Աթենքում զրուցելիս

բանը, ուր տեսանք տպագրական արվեստի վերջին խոսքով շինված մեքենաներն ու տպագրական ամբողջ սարքվածքը։ Տեսանք տպարանի մեջ տպագրությունը Մայր Աթոռի 1964 թվի օրացույցի, «Էջմիածին» ամսագրի հերթական համարի, ինչպես նաև հայագիտական այլ հրատարակություններու՝ Հայաստանի գիտությունների ակադեմիային համար։ Տպարանին մեջ կաշխատին 60 գործավորներ։ Այս թիվը շուտով կբարձրանա 100-ի։ Գոհունակությամբ իմացանք Վեհափառ Հայրապետեն, որ տպարանի վարչական-տնտեսական ղեկավարությունը փոխադարձ համաձայնությամբ ժամանակավորապես հանձնված է Հայաստանի գիտություններու ակադեմիային։ Մայր Աթոռը իրեն կվերապահե սեփականության և կրոնական, եկեղեցական գիրքերու հրատարակության իրավունքը։

Այցելեցինք նաև Հոգևոր Ճեմարանը. շենքը գտանք մաքուր և բարեկարգ վիճակի մեջ։ Ուսանողներու մեծ մասը արձակուրդի մեջ էր։

Այցելեցինք Երևանի տեսարժան վայրերը։ Հատկապես Ս. Մեսրոպի անվան Մատենադարանը մեծ տպավորություն գործեց մեր վրա, ինչպես նաև Թանգարանը։ Այս երկու հաստատություններու ղեկավարները մեզ ընդունեցին և հանգամանորեն բացատրություններ տվին, պատցուցին մեզ հաստատության բաժինները, տալով լուսաբանող և սպառիչ տեղեկություններ։

Ուրախությամբ նշենք, որ Մատենադարանը և Թանգարանը որևէ քաղաքակիրթ երկրի մը համար պատիվ բերող հաստատություններ են։

Մեր այս համոզումը և միաժամանակ շնորհակալությունն ու գոհունակությունը արձանագրեցինք տպավորություններու մատյանին մեջ։

Այցելեցինք նաև Բյուրականի աստղադիտարանը, ուր մեզ ընդունեց և առաջնորդեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումյանը, որուն հետ ունեցանք նաև շատ հետաքրքիր զրույց՝ երկրի գիտական նվաճումների մասին։

Ուխտի գացինք Խոր Վիրապ, Ս. Գեղարդ, Հաղբատի, Սանահինի, Մարմաշենի, Հառիճա, Թալիշի և Սևանի պատմական վանքերն ու եկեղեցիները։ Համբուրեցինք անոնց սուրբ քարերն ու պատերը և աղոթք մրմնջացինք, «Հոգւոց» ըսինք անոնց հովանիին տակ

ննջող մեր նախնիքներու հոգիներուն համար։

Սեծապես տպավորվեցանք այդ պատմական վանքերու ճարտարապետական կառույցեն։ Ուրախությամբ տեսանք և կարձանագրենք, որ կառավարությունը ոչ միայն կվերանորոգե այդ վանքերն ու եկեղեցիները որպես պատմական հուշարձաններ, այլ անոնց պահպանության համար նշանակված են պահակներ։

Վանքերեն շատերուն վիճակը մխիթարական չէ, և կարիք կա ավելի լայն վերանորոգության աշխատանքներու։ Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ ավելի հիմնական կերպով վերանորոգված են Ս. Հռիփսիմեն, Գայանեն, Շողակաթը, Օշականի Ս. Մեսրոպը, Գեղարդը և այլն։ Սփյուռքը, վանքերու վերանորոգության այս աշխատանքներուն մեջ, պիտի առավել օգնե իր շինարար Վեհափառ Հայրապետին, որպեսզի Ան կարողանա ընդարձակել վանական վերանորոգության աշխատանքներու շրջանակը։

Մեզի համար անակնկալ և հուզիչ էր տեսնել Երևանի և Հայաստանի այլ քաղաքներու՝ Լենինականի, Կիրովականի, Ալավերդիի ծաղկումը, բուռն շինարարությունը։ Ութը տարվան մեր բացակայությենեն հետո, Երևանը անճանաչելի էր իր նորակերտ թաղերով, պողոտաներով և այլ շինարարությամբ։

Ժողովուրդի ընդհանուր վիճակը ամեն մասամբ գտանք ավելի քան գոհացուցիչ։ Սիրով և գոհունակությամբ կհիշենք Վեհափառ Հայրապետի հետ մեր այցելությունը Վարպետին՝ նկարիչ Մարտիրոս Սարյանին, անոր բնակարանին մեջ, որ իսկական արվեստանոց մըն էր, զարդարված նկարչական արվեստի անկրկնելի և սարյանական նմուշներով։

Մայր Աթոռ գտնված ժամանակ, ոչ միայն հյուրն էինք Վեհափառ Հայրապետին, այլ նաև պատեհություն ունեցանք զրուցելու և մտերիմ հանդիպումներ ունենալու Նորին Ս. Օծության հետ Հայ Եկեղեցիի ներկա կյանքին և գործունեության հետ կապված շարք մը կարևոր հարցերու շուրջ։ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը հաճելի զրուցակից է։ Իմաստուն, շրջահայաց տեսակետներ և հեռանկարներ ունի Հայ Եկեղեցիի մասին։

Ուրախությամբ իմացանք նաև, որ Նորին Ս. Օծությունը այս աշնան պիտի այցելե Երուսաղեմ, անձամբ տանելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ողջույններն ու օրհնությունները Ս. Աթոռի միաբանության, սրբազան պատրիարքին և ժողովուրդին։

Կհուսանք, որ Վեհափառ Հայրապետը այս շնորհաբեր այցելության ժամանակ կզբաղի նաև Հայ Եկեղեցվո կյանքը հուզող շարք մը խնդիրներու լուծմամբ։

Մենք կհավատանք, որ ի վերջո կանոնականությունը և ողջամտությունը պիտի հաղթանակեն, և Հայ Եկեղեցվո ծոցին մեջ պիտի վերահաստատվի խաղաղությունը և միությունը։

Մենք կհավատանք Հայ Եկեղեցվո շինարար դերին, ըլլա՛ Հայաստանի, ըլլա՛ արտասահմանի մեջ, ինչպես նաև անոր կատարելիք աղդային, մշակութային մեծ առաքելության։

Մենք եկանք Ս. Էջմիածին թե՛ մեր ուխտը կատարելու, վերանորոգելու Ս. Էջմիածնի մեջ և լրացնելու դայն այլ սրբավայրերու մեջ, որոնց այցելելու առիթը չունեցանք մեր առաջին այցելության ժամանակ 1955 թվին, և շեշտելու Հայ Եկեղեցվո սերտության և միության գաղափարը։

Մեր համոզումով, Հայ Եկեղեցին հաստատուն միակ ծառ մըն է, որուն արմատը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին մեջ գտնվի, և որ ունի իր մեծ ու փոքր ճյուղերը, նույն արմատի վրա ընձյուղած։

Այն ճյուղը, որ հաստատված չէ այդ ծառին վրա, կարելի չէ նկատել մաս Հայ Եկեղեցվո։

Կմեկնինք Մայր Աթոռեն լավագույն և սրտապնդիչ տպավորություններով։

Նորին Սուրբ Օծության կհայտնենք մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը, եղբայրական իր ջերմ հոգածության և հյուրասիրության համար։

Կմեկնինք հոգեպես պայծառացած, զորացած ուխտավորությամբ մեր վանքերուն, և լավատեսությամբ տոգորված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայ Եկեղեցվո ապագայի մասին։

Կաղոթենք, որ Տերը անսասան պահե Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ընդ հովանյավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, և երկար կյանք պարգևե անոր արժանընտիր և շնորհազարդ Հայրապետին։

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա»։

«Էջմիածին» ամսագրի խմբագիրը, սպառած լինելով իր հարցերի շարքը, հրաժեշտ է առնում Թուրքիայի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքից, ջերմ շնորհակալություն հայտնելով այդ շահեկան տեսակցության համար։

ՀԱՎԱՏՈ ԵՎ ԿԱՐԳԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՉՈՐՐՈՐԴ ԺՈՂՈՎԸ ՄՈՆՐԵԱԼՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 12—25-ին, Մոնրեալում գումարվեց Հավատո և Կարգի համաշխարհային չորրորդ ժողովը, որին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրահանգով, մասնակցեց գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանը, որպես Հայ Եկեղեցու ներկայացուցիչ։

Քաղվածաբար ներկայացնում ենք Տ. Տիրան արքեպիսկոպոսի հուլիս 12 և 13 թվակիր գրած և Վեհափառ Հայրապետին հղած երկու զեկուցագրերի գլխավոր մասերը, Մոնրեալի Հավատո և Կարգի չորրորդ համաժողովի նստաշրջանի և օրակարգի հարցերի մասին։

Հավատո և Կարգի համաժողովը բացվել է հուլիսի 12-ին, Մոնրեալի Մակկիլ համալսարանի շենքում։

Ամսի 12-ին և 13-ին, ժողովը զբաղվել է կազմակերչական գործերով։

Ժողովը կազմակերպվել և հրավիրվել էր Հավատո և Կարգի հանձնաժողովի կողմից, որը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի գլխավոր և հիմնական կազմակերպություններից մեկն է։

Մոնրեալի Հավատո և Կարգի համաշխարհային չորրորդ ժողովին մասնակցել են Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ բոլոր եկեղեցիները, ինչպես նաև հանձնաժողովի կողմից ընտրված և հրավիրված, հանգամանք և կշիռ ունեցող մեծ դեմքեր։

Ժողովին մասնակցել են նաև հայ ավետարանական համայնքի երկու ներկայացուցիչներ։

Տասնմեկ տարի առաջ գումարվել է Հավատո և Կարգի երրորդ ժողովը Շվեդիայի Լունտ քաղաքում։

Հուլիսի 13-ին կատարվում է ժողովի պաշտոնական բացումը։ Առաջին նիստին ելույթ է ունենում Ստրազբուրգի համալսարանի աստվածաբանության պրոֆ. Ռոժե Մելը, որը շեշտում է, թե ի՞նչ պետք է ասել և անել՝ գլուխ բերելու համար Եկեղեցու միությունը, և խորապես պետք է ուսումնասիրել փնտռված միության սահմաններն ու նկարագիրը. պարզ հարաբերություն եկեղեցիների միջև բավական չէ, միասին և ի Քրիստոս պետք է հասնել Եկեղեցու տիեզերականության։

Ալբերտ Աուտլերը, ԱՄՆ-ից, շեշտում է, որ եկեղեցիների միության ջատագովության շրջանը անցել է և հասել է խոսակցության, խորհրդակցության շրջանը։ Այդ խորհրդակցությունը, խոսակցությունը պետք է լինեն խաղաղ ու շինարար ոգով։

Համաժողովի նախագահ Օլիվեր Տոմկինս եպիսկոպոսը նշում է, որ եկեղեցիների միության շարժումը հրաշալիորեն մեծացել է. «Միության ճանապարհը՝ դեպի կենտրոն ճանապարհ է»։ «Ամեն եկեղեցի իր ավանդությունն ունի, բայց Եկեղեցու Տերը Քրիստոսն է, որ կերպարանք և բովանդակություն է տալիս ավանդության։ Սկսած ենք մեր ա-

վանդությունները չափել Քրիստոսով, որ տիրակալ է։ Այս բոլորովին նոր և ընդարձակ մի դաշտ է, որի վրա ոտք ենք դրած»։

Այնուհետև համաժողովի հաջորդ նիստերին լսվում են կարևոր այլ զեկույցներ տարբեր հարցերի շուրջ, այդ թվում ավագերեց Վիտալի Բորովոյի (Լենինգրադից, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքության՝ ներկայացուցիչ), Գլառդ Ուելշի (Չվիցերիայից, Մեթոդական Եկեղեցու ներկայացուցիչ), Ռայմոնդ Բրաունի (ԱՄՆ-ից, Հռոմական Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչ), պրոֆ. Էռնեստ Գաղեմանի (Գերմանիայից, Ավետարանական Եկեղեցու ներկայացուցիչ)։

Մոնրեալի համաժողովը բաժանված էր հինգ ենթամարմինների։ Յուրաքանչյուր ենթախումբ քննում է իրեն հանձնարարված որոշ մի հարց և իր քննության եզրակացություններն ու դիտողությունները բերում համաժողովի ընդհանուր նիստին։

Ենթախմբերի զեկուցագրերը, ընդհանուր ժողովում քննվելուց և վավերացվելուց հետո, կուղարկվեն Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնական հանձնաժողովին, որն իր հերթին կքննի և կվավերացնի ներկայացված զեկուցագրերը՝ որպես Եկեղեցիների համաշխարհային խորհրդի պաշտոնական դատումներ և որոշումներ և կհղի անդամ եկեղեցիներին՝ քննության և ուսումնասիրության համար։

Մոնրեալի Հավատո և Կարգի համաժողովը քննության է առել հետևյալ հարցերը.

1. Եկեղեցին Աստուծո նպատակի մեջ *(Եկեղեցիների երևութական համաձայնությունը քրիստոսաբանական վարդապետության մասին. Եկեղեցու չորս ստորոգելիները՝* միություն, սրբություն, կաթողիկեություն, առաքելականություն. *ի՞նչ աստիճան համաձայնություն գոյություն ունի եկեղեցիների մեջ. եկեղեցաբանության մարզի մեջ, որո՞նք են այն գլխավոր խնդիրները, որոնք ձգտում առաջ են բերում գլխավոր քրիստոնեական ավանդության միջև։ Ի՞նչ է եկեղեցաբանական նշանակությունը եկեղեցիների խորհուրդների իրականության և նշանակությունը՝ անջատողական եկեղեցիների և շարժումների, որոնք մերժում են եկեղեցական ինստիտուցիոն կարիքը)։*

2. Աստվածաշունչ, Ավանդություն և Ավանդություններ *(Ի՞նչ են հարաբերությունները Աստվածաշնչի, Ավանդության և Ավանդությունների։ Ի՞նչ է Ավանդություն և Ավանդություններ կոչված հարցը այսօր։ Ի՞նչ են առնչությունները արևելյան և արևմտյան ավանդությանց։ Աստվածաշնչի հեղինակության հարցը, որպես հայտնության, հավատի հանգանակների և խոստովանությանց հեղինակություն։ Ինչպե՞ս պետք է դիտել նոր եկեղեցական ավանդությունների ստեղծումը, և հին և նոր ավանդությունների հարաբերությունը՝ Մի Ավանդության հետ։ Ինչպե՞ս պետք է խորացնել մեկ հասարակաց Ավանդության մեջ ապրելու գիտակցությունը եկեղեցիների մեջ)։*

3. Քրիստոսի փրկագործությունը և Նրա եկեղեցու սպասավորությունը *(Ի՞նչ է հարաբերությունը Քրիստոսի սպասավորության—Մինիստերիում—և եկեղեցու սպասավորության։ Ի՞նչ է դիրքը և պաշտոնը ձեռնադրյալ սպասավորության՝ պաշտոնեության՝ Քրիստոսի Մարմնույն՝ Եկեղեցիին մեջ։ Ի՞նչ է հարաբերությունը ձեռնադրյալ պաշտոնեության, քահանայական և առաքելական կոչման և հավատացյալների պարտականությանց և ձիրքերի մեջ։ Որքա՞ն է կարևորությունը և զանազանությունը սպասավորության նոր ձևերի։ Ի՞նչ է նշանակությունը ձեռնադրության ավանդական վարդապետության և ի՞նչպես հնար է այն կիրարկել մասնակի խնդիրների մեջ, ինչպիսիք են սարկավագության դիրքը եկեղեցում, կանանց ձեռնադրությունը որպես սարկավագ կամ քահանա)։*

4. Պաշտամունքը և Քրիստոսի Եկեղեցու միությունը *(Պարզել քրիստոնեական պաշտամունքի հիմնական «ձևակերպերը» («պատերն») և ուշադրության առնել այն, թե ի՞նչպես դրանք ցոլացնում են Եկեղեցու ընդհանրականությունն ու առաքելականությունը։ Ուսումնասիրել վերջին ժամանակների ծիսական վերանորոգչական շարժումը, և ճշտել արժեքը պաշտամունքի զանազան տեսակների, որը պահանջում է ներկա ընկերությունը և թելադրել ուղեգծեր՝ հին և նոր մշակույթների մեջ, պաշտամունքին տեղական բնույթ տալու մասին։ Ուսումնասիրել եկեղեցիների խորհրդական ուսուցումը և գործումը և դրանց հարաբերությունը այն միության, որին ձգտում է Եկեղեցին։ Սերտել մասնավոր հետևությունները այն իրողության, որ բոլոր եկեղեցիները մի մկրտություն են ճանաչում, հաղորդության խորհրդի նկարագիրը, հաղորդակցության խնդիրը և հաղորդության խորհրդի կատարումը էկումենիկական ժողովների ընթացքում)։*

5. «Ամենեքին յիւրաքանչիւր տեղւոջ» միասին աճելու ընթացքը *(Որո՞նք են դեպի միություն ընթանալու պատեհությունները՝ «յիւրաքանչիւր տեղւոջ»։ Ուշադրության առնել այն մարզերը, ուր եկեղեցիները շարունակում են «անջատաբար անել» այն գործերը, երբ քրիստոնեական գիտակցությունը մղում է նրանց «միասին» անել։ Հաշվի առնել ինստիտուցիոն աղդակները, որոնք միմյանցից օ-*

տարացնում են համայնքներին, որոնք այլապես համաձայն են Հավատո և Կարգի խնդիրներում։ Ուսումնասիրել հատկապես այն ինստիտուցիոն ազդակները, որոնք արգելակում կամ առաջ են մղում միությունը «ամենեցուն՝ յիւրաքանչիւր տեղւոջ»։ Քննել այն դերը, որ ցեղային և ազգային ազդակները խաղում են՝ բաժանելով եկեղեցիներին միմյանց մեջ և միմյանցից։ Քննել պայմանադրական բարոյականության, միջ-համայնական մրցակցության, քաղաքական ճնշումների և բնակչության տեղաշարժության ազդեցությունը քրիստոնեական միության վրա։ Ուսումնասիրել, թե ի՞նչ աստիճան տեղական եկեղեցական խորհուրդների գործունեությունը օգնում է լուծելու անմիության հարցը։ (Ուշադրության առնել ցանկությունը եկեղեցիներում այն տարրերի, որոնք անհամբեր սպասում են տեսնելու եկեղեցիների միությունը)։

Մոնրեալի Հավատո և Կարգի համաժողովը հանգամանորեն զբաղվում է օրակարգի այս հինգ հիմնական և կարևոր հարցերի քննությամբ, և ընդունում համապատասխան որոշումները։

1963 թվականի հուլիսի 12—25-ին Մոնրեալում գումարված Հավատո և Կարգի համաշխարհային չորրորդ ժողովը խոստումնալից նոր քայլ է եկեղեցիների համագործակցության և միության ճանապարհի վրա։

ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Հուլիսի 4-ին, հինգշաբթի, «Տօն սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ»։ Օրվա մեծ տոնի կապակցությամբ, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը և քարոզեց «Անճառելի շնորհօք լցեալք ի յիշատակի սուրբ վարդապետին» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Հոգևոր Ճեմարանի ուսանողությունը և հավատացյալների մի ստվար բազմություն։

* * *

Հուլիսի 5-ին, ուրբաթ, Բաքու մեկնեց Մայր Տաճարի ավագ լուսարար հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը, որը կիրակի, հուլիսի 7-ին, սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում։

Տ. Մեսրոպ վարդապետը հուլիսի 9-ին վերադարձավ Մայր Աթոռ։

* * *

Հուլիսի 7-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց Ամերիկայից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած արժանապատիվ Տ. Վարդան քահանա Մկրյանը «Այնպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ» բնաբանով (Ղուկ. ԺԵ 10)։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էր նաև ամերիկահայ ուխտավորների խումբը։

* * *

Հուլիսի 13-ին, շաբաթ, Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Ալեքսի Պատրիարքի եպիսկոպոսության 50-ամյակի հոբելյանական հանդիսության հանուն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի մասնակցելու համար, Մոսկվա մեկնեց Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ և Մայր Տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Սրբազան հորն ուղեկցում էր հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանը։

* * *

Հուլիսի 22-ին, երկուշաբթի, «Յիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։ Հավարտ սուրբ պատարագի տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն «Վասն համօրէն ննջեցելոց»։

* * *

Հուլիսի 24-ին, շաբաթ, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը մեկնեց Չեխոսլովակիայի Կարլովի-Վարիի առողջարանը՝ հանգստանալու համար։

Վեհափառ Հայրապետին ընկերանում էր հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը։

Երևանի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի միաբանները։

Նորին Ս. Օծության ճանապարհեց նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

* * *

Հուլիսի 26-ին, ուրբաթ, Լենինական և ապա Թբիլիսի մեկնեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը՝ պատարագելու և քարոզելու համար։ Հոգեշնորհ հայր սուրբը հուլիսի 28-ին, կիրակի, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում պատարագեց և քարոզեց «Որք արժանի եղէք տեսանել մարմնով զՈրդին Աստուծոյ յայտնապէս» բնաբանով։ Իսկ օգոստոսի 4-ին հայր սուրբը պատարագեց և քարոզեց Թբիլիսիի Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցում։

Մեսրոպ վարդապետը Մայր Աթոռ վերադարձավ օգոստոսի 8-ին։

* * *

Հուլիսի 28-ին, կիրակի, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ԼԻՈՆԻ ՀԱՅՈՑ ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄԸ

Հունիսի 29-ին և 30-ին, շաբաթ և կիրակի օրերին, կատարվել է Լիոնի հայոց Ս. Հակոբ նորակառույց եկեղեցու օծման հանդիսությունը, խուռներամ բազմության ներկայությամբ։

Հանդիսության նախագահել է Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը։

Հանդիսության ներկա են եղել Լոնդոնի հայոց հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Պսակ եպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Գյուտ վարդապետ Նագաշյանը, Լիոնի, Դեսինի, Վալանսի և Մարսելի եկեղեցիների քահանա հայրերը։

Լիոնի հայ գաղութը մոտ 50 տարիների պատմություն ունի։ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, առաջին հայ գաղթականները հաստատվում էին այս հյուրընկալ հողի վրա, և Ավենյու Բերտլո փողոցում կառուցում փայտաշեն իրենց առաջին աղոթքի տունը՝ Ս. Աստվածածինը, որը դառնում էր լույսի, հավատքի տաքուկ բույնը հայ ժողովրդի գաղթական բեկորների։

Անցնող տարիների ընթացքում, սակայն, Լիոնի հայ գաղութը մեծանում էր և կարիք էր զգացվում ավելի շքեղ և մեծ եկեղեցու և սրահի շինության։

1954 թվականին կատարվում էր, համաժողովրդական հանգանակությամբ գնված հողամասի վրա, Լիոնի հայոց նոր եկեղեցու հիմնադրության սրտառուչ արարողությունը՝ ազգային-եկեղեցական վարչության նախաձեռնությամբ։

Անմիջապես կազմվում է եկեղեցու շինության հանձնաժողով, որի աշխատանքներին իրենց մասնակցությունն էին բերում նաև տիկնանց և երիտասարդաց միությունները և անհատ. նվիրատուներ։

Սակայն եկեղեցին կառուցվում էր ժողովրդի առատաձեռն նվիրատվությամբ։

1963 թվականին ավարտված լինելով ժողովրդի մեծ զոհողություններով շինված եկեղեցու կառուցումը, հունիսի 29-ին, շաբաթ օր, ժամը 5-ին, կատարվում էր եկեղեցու «Ինքնացէք»-ի արարողությունը և առաջին անգամ պաշտվում էր այնտեղ երեկոյան ժամերգությունը՝ «Լոյս Զուարթ»-ի անուշ և հոգեպարար արձագանքների մեջ։

Կիրակի, հունիսի 30-ին, սուրբ պատարագի ընթացքում, կատարվում էր նորակառույց եկեղեցու օծումը, հանդիսադրությամբ հայրապետական պատվիրակ սրբազանի, մասնակցությամբ հոգևորական դասի և ի ներկայություն օտար կրոնական, քաղաքային և զինվորական իշխանությանց բազմաթիվ ներկայացուցիչների և Փարիզից, Լիոնից, Դեսինից, Վալանսից, Մարսելից եկած ժողովրդի խուռն բազմության և ազգային-եկեղեցական մարմինների ներկայացուցիչների։

Եկեղեցու օծման արարողությունից հետո, պատարագիչ սրբազանը, ի լուր ժողովրդյան, ընթերցում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 17 հունիս թվակիր շնորհավորական պատգամը, որն ունկնդրվում է մեծ երկյուղածությամբ և խանդավառությամբ.

«Ուրախ է Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, ուրախ է նաև Ձեր Հայրապետը։

Ջերմապես կշնորհավորենք և կօրհնենք Լիոնի հավատացյալ ժողովուրդը նորակառույց եկեղեցվո օծման առթիվ։ Թող Աստված հավետ անսասան և պայծառ պահե ձեր աղոթքի տունը, միշտ խաղաղ ու արևոտ օրերով, տիրախնամ ասպետական Ֆրանսայի լուսավոր երկնակամարին ներքև։

Մեր օրհնությունը նաև Ձեզդ Սրբազնության, եկեղեցական վարչության, շինության

ճանձնախումբին, տիկնանց և երիտասարդաց միությանց, Լիոնի քահանա հայրերուն և բոլոր բարեպաշտ նվիրատուներուն:

«Երանի՜ եկեղեցի շինողաց»:

Կեցցե՛ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին:

Կեցցե՛ ֆրանսահայ ժողովուրդը»:

Այնուհետև հայրապետական պատվիրակ սրբազանը իր քարոզում ասում է.

«Այսօր պատմական թվական մըն է Լիոնի հայության համար, վասնզի տասը տարիներու մեր հույսերը, մեր ակնկալությունները վերջապես արդյունք մը տվին։ Այսօր աղոթքներով, շարականներով և Ս. Մյուռոնի օգնությամբ օծեցինք եկեղեցին, որ ամենեն առաջ Աստուծո տունն է, հետո մեր ազգային տունն է, լեզվին, մշակույթին տունն է, ինչպես նաև ձեր տունն է։ Հոս պիտի մկրտվին ձեր զավակները և ձեր ննջեցյալները պիտի արժանանան Աստուծո աղոթքին։ Սակայն, նյութական շենքը չի բավեր։ Ասկե ետք պետք է որ հավատքով, հույսով և համերաշխությամբ կերտենք նաև հոգևոր ու բարոյական շենքը։ Աստված պայծառ ու համերաշխ պահե Ֆրանսայի սուրբ եկեղեցիները և այս եկեղեցին։ Ֆրանսայի, ազատության, եղբայրության և հավասարության այս գեղեցիկ երկրին մեջ, մեզի պատեհություն տրված է զարգանալու ամեն գետնի վրա։ Աշխատինք օգտվիլ մեզի ընծայված բոլոր առավելություններեն»։

Իր քարոզի վերջում, սրբազանը մասնավոր շնորհակալություն է հայտնում թե՛ անհատներին և թե՛ կազմակերպություններին, որոնք իրենց սրտագին մասնակցությունն են հանդես բերել եկեղեցու շինության։

Լիոնի հայոց նորակառույց եկեղեցին կոչվել է Ս. Հակոբ, ի հիշատակ հանգուցյալ Հակոբ Հակոբյանի, որի որդին՝ փարիզաբնակ Կարապետ Հակոբյանը, եկեղեցու շինության համար նվիրել է տասը միլիոն հին ֆրանկ, մոտ 20 հազար դոլար, այսինքն ծախսերի մեկ տասներորդը։

Նորակառույց եկեղեցին ընդարձակ է և գեղեցիկ, շինված հայկական ոճով։ Ունի ընդարձակ սրահ՝ եկեղեցու ետևի մասում, դրադարան, սենյակներ և եկեղեցականների բնակության համար հարկաբաժիններ՝ ժամատուն։ Եկեղեցու ճարտարապետները եղել են Արմենակ Հակոբյանը, Մյուզիե և Շահբազով։

Սուրբ պատարագից հետո, Լիոնի պանդոկներից մեկում, տեղի է ունենում մեծ ընդունելություն, որին մասնակցում են շուրջ 200 հոգի հրավիրյալներ։ Խանդավառ մթնոլորտի մեջ արտասանվում են ճառեր և կատարվում են բարեմաղթություններ եկեղեցու պայծառության, Լիոնի հայ գաղութի բարգավաճման, Ս. Էջմիածնի անսասանության և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կենաց արևշատության համար։

Տեղական բոլոր օտար թերթերը, ինչպես նաև ձայնասփյուռն ու հեռուստացույցը հանգամանորեն անդրադարձել են հայ եկեղեցու շինության և օծման հանդիսություններին, ջերմ գնահատական տողեր նվիրելով Լիոնի հայ համայնքին, հայ ժողովրդին և Հայ Եկեղեցուն։

1963 թվականի հունիսի 30-ը անմոռանալի պատմական մի օր է հանդիսացել մասնավորաբար Լիոնի հայ գաղութի և ընդհանրապես Ֆրանսայի ամբողջ հայության համար։



Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ*

Դ

ՏԱԳՆԱՊԻ ԴԱՐԸ

1. ԱՂԵՏՆԵՐՈՒ ՑԱՆՑԻՆ ՄԵՋ

Դարը, զոր անցյալ գլուխին մեջ տեսանք, հայ ժողովուրդին և իր եկեղեցիին համար եղավ նաև բացառիկ տագնապներու դար մը։ Հայ ժողովուրդի պատմության արձանագրած մեծ ճգնաժամերեն մեկն էր այս դարումը, երբ փոթորիկներ անցան Հայոց աշխարհին վրայեն, քարուքանդ ըրին ամեն բան իրենց անցած շրջաններուն մեջ, հոգերով բեռնավորեցին հայ ժողովուրդը, հոգեր կտակելով նաև հաջորդ դարերուն։

Ասպատակությունները, որոնց ձեռնարկեր էին Ջալալի կոչված ապստամբները Փոքր Ասիո զանազան շրջաններուն մեջ և որոնց անդրադարձանք անոնց պատճառով Պոլիս խուժող հայ բազմություններու վրա խոսելու ժամանակ, մեկն էին այն մեծ փոթորիկներեն, որոնց երբևիցե թատր եղած է հայ հողը։ Բայց անոնք կանգ չառին, շարժման ղեկավարներուն ասպարեղեն չքանալե հետո ալ, այլ շարունակվեցան դեռ երկար ժամանակ, զանազան կետերու վրա, հետզհետե հայտնը-վող պետերու ղեկավարության տակ, ու պատճառ եղան, որ դեռ երկար տևե հայ շրջաններու մեջ բռնկած զարհուրանքը։

Ժամանակակից երեք հայ հեղինակները, որոնք Հայոց աշխարհը ճանչցան դարուն սկիզբը՝ Դավրիժեցին, Դարանաղեցին և Սիմեոն Լեհացին, կլրացնեն զիրար, ահավոր պատկերը տալու համար այն դժնդակ կացության, որուն մատնված էր հայ ժողովուրդը։ Եթե Սիմեոն Լեհացին հայ շրջաններե իր անցքին ժամանակ աղետներուն թողած հետքերն է միայն, զոր կմատնանշե, Դավրիժեցին ու Դարանաղեցին իրենց աչքերով տեսան աղետը և զայն պատմեցին կենդանի գույներով։ Անոնք եթե մեզ լիովին իրազեկ չեն ըներ Ջալալիներու շարժման շարժառիթներուն և անոր ներքին ծալքերուն, գոնե մեզ կուտան ճշգրիտ պատկերը ավերածությանց, որոնց մատնվեցան հայ շրջանները շարժման երեսեն։

Միայն ջալալիներու ասպատակությունները չէին սակայն, որ քարուքանդ ըրին հայոց աշխարհը և հայ ժողովուրդը հոծ խումբերով պանդխտության հանեցին, ամայացուցին շատ մը շրջաններ և անստույգ կացություն մը ստեղծեցին մնացյալ շրջաններուն մեջ։ Անոնց շահատակությունները դեռ վերջացած

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի № № Թ-ից, ԺԲ-ից և 1963 թվականի № № Ա-ից, Բ-ից, Գ-ից, Դ-ից, Ե-ից և Զ-ից։

իսկ չէին, երբ Թուրքիոյ հայկական շրջանները թատր դարձան նոր փոթորիկներու, որոնք եկան ավելի ևս ընդարձակել ավերածությունները և որոնք հետևանքն էին այդ հողամասերուն վրա մղված պատերազմներուն։

Շահաբաս եկավ լրացնել Թուրանի կես թողածը։

Նվազ աղետաբեր չեղավ հայ ժողովուրդին համար արշավանքը, զոր այս անգամ Թուրքերը իրենք կատարեցին Շահաբասի դեմ։ Հայ հողն էր, որ կտրորվեր անգամ մը ևս, և հայ ժողովուրդն էր, որ կքամվեր վերստին, ինչպես պատահեր էր ու պիտի պատահեր ամեն անգամ, որ Թուրքիոյ արևելյան այդ նահանգները թատր դառնային արշավանքներու և պատերազմներու։

Լուծը, զոր հայ ժողովուրդի երկու հատվածները կկրեին զույգ բռնապետությանց տակ, իր կարգին կքամեր հայ ժողովուրդի արդեն իսկ սպառած կորովը։ Հարկապահանջությունը ահավոր համեմատություններ կստանար, բռնի իսլամացումներու թիվը կաճեր, Հայ Եկեղեցին նահատակներ կարձանագրեր։ Կարծես թե պետական իշխանությանց ճնշումը բավական չըլլար, հայ շրջանները կկեղեքեին անպատիժ տեղական հարբստահարիչներն ալ, ամեն մեկը սուլթան մը դարձած էր իր շրջանին մեջ, և ամեն մեկը տուրքերու և կողոպուտի իր ձևն ու մեթոդը հնարած էր։ Եվ ասոնց պակաս թողածը կլրացնեին, ավա՜ղ, հայ տզրուկները՝ միջնորդ դառնալով հարստահարող փաշային և անոր զոհերուն միջև, և իրենց կարգին տոկոսներու բեռան տակ խեղդելով իրենց թշվառ ազգակիցները։

Հայ ժողովուրդը կոչված էր դժնդակ քննություն մը անցնել պատմության առջև։ Եվ այդ քննությունը անցուց ան պատվով։ Ան կրցավ ոչ միայն դիմանալ բոլոր փորձությանց և աղետներուն, զորս դարը իր դեմը հանեց, այլև փորձեց նոր հորիզոն բանալ իրեն։ Արդարև, ի հեճուկս այդ աղետներուն և այն տառապանքներուն, զորս կկրեր Թուրք և պարսիկ լուծերուն ներքև, ի հեճուկս կաթոլիկ քարոզությանց, որոնք կփորձեին իր հոգին ճեղքել այս դարուն, ու նաև այն դեղևումներուն և սայթաքումներուն, զորս ունեցան իր հոգևոր պետերեն շատերը, հայ ժողովուրդը անվկանդ մնաց, շարունակեց վազել լույսին ետևեն և իր հոգին պատրաստ ըրավ այն մեծ մաքառումին, զոր իրեն պիտի հարկադրեր հայկական դատը։ Այս դարուն էր, որ հայ ժողովուրդը պատրաստվեցավ ազատագրության մեծ պայքարին համար։

Դարուն բոլոր աղետները կուգային արձագանք գտնել Պոլսո մեջ։ Ոչ միայն անոր համար, որ օսմանյան պետության մայրաքաղաքն էր Պոլիսը և երկրին որևէ մեկ կետին վրա տեղի ունեցած դեպք մը իսկույն իր անդրադարձումը կունենար կեդրոնին մեջ ալ բովանդակ բնակչության համար, այլ նաև այն պատճառով, որ ամեն մեկ աղետ հայ քարավան մը կբշեր Պոլիս ու զայն կխառներ մայրաքաղաքի հայության, ամեն անգամուն ալ հոգեր ստեղծելով Պատրիարքական Աթոռին համար։ Տագնապը, զոր ամբողջ դար մը անցուց Պոլսո Աթոռը և բախտախնդիրներու ամբողջ շարան մը անոր վրա բերավ բազմեցուց, հետևանքն էր այն զարհուրելի ճգնաժամին, զոր հայ ժողովուրդը կապրեր զույգ լուծերու տակ։

Աղետները իրենց հետ Պոլիս քաշեցին բերին տարբեր հոգեր ալ։ Անոնց ստեղծած շփոթության հետևանքով էր, որ մարդոսները հաջողեցան Պոլիսը կայան ընել իրենց ու հոն ուռկանը ձգել իրենց առաջին որսերը։ Պոլիսը ամբողջ դար մը թատր եղավ ներքին վեճերու դավանական այդ արշավանքին երեսեն, արկածախնդիրներու ախորժակը գրգռեց Պատրիարքական Աթոռը իրարմե հափշտակելու, և մնացորդները մղեց խտրություն չդնելու պայքարի զենքերուն միջև։ Բայց նույն այդ Պոլսո մեջ հետզհետե խմորվիլ սկսավ մեծ ճիգը, որ մտավոր երկունքի մը հողը պիտի հերկեր և սերունդները պիտի վարակեր նոր հուզումներով։ Պոլիսը ընդունակ պիտի դառնար տակավ այս կերպով դեր ստանձնել հայ վերածնունդին մեջ։ Ան պիտի կապվեր հայկական դատին։

2. ՏԱԳՆԱՊԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՎՈ ԾՈՑԻՆ ՄԵՋ

Ամեն աղետ, որ հայ ժողովուրդին կբերեին դարերը, կանդրադառնար նաև Հայ Եկեղեցվո վրա։ Դառնության բաժակը ան ևս կքամեր հայ ժողովուրդին հետ, ամեն անգամ որ հայոց հողերը արշավանքներու թատր կհանդիսանային կամ երբ հայ ժողովուրդը կենթարկվեր այս կամ այն լուծին։ Անոր հետ մեկտեղ լուծի տակ կմտներ նաև Հայ Եկեղեցին։

Հայ Եկեղեցին ևս տագնապով կսկսեր այս դարը։ Երբ դարը աչքերը բացավ, Շահաբաս արդեն պատմության մեջ սկսած էր խաղալ իր դերը, դեր, որ եթե իրեն փառք շահեցուց պարսիկ ժողովուրդի աչքին, պատուհաս մը եղավ հայ ժողովուրդին համար, և միևնույն ատեն փորձության դառն շրջան մը բերավ Հայ Եկեղեցիին։ Պարսիկ լուծը սկսավ ճզմել Հայ Եկեղեցին, հանձին անոր հոգևոր կեդրոնին։

Ու Հայ Եկեղեցվո չար բախտեն, Լուսավորչի Աթոռին վրա իրենց կոչումին արժանի գեմքեր չկային այդ դժբախտ պահուն։ Խոր-

վությանց բուն մըն էր այդ միջոցին Էջմիածինը։ Պարսիկ իշխանավորներու անհագ որկորը հագեցնելու անկարողության մեջ, Հայ Եկեղեցվո պետերը շվարած էին։ Շատ դյուրին կսայթաքի շվարած մարդը։

Ժամանակակից երեք աղբյուրները, զորս հիշեցինք, ինչպես նաև լրացուցիչ նյութեր ձեռագիրներու հիշատակարաններուն և մանր ժամանակագրությանց մեջ, Ղրիվ կպարզեն մեզ սրտաճմլիկ պատկերը, զոր Հայ Եկեղեցին կներկայացներ դարուն սկիզբը։ Շփոթության, անստուգության, անզորության շրջան մըն էր այդ, որ չէր կրնար չմոլորեցնել ու չգայթակղեցնել տկար հոգիով մարդիկը։

Սայթաքումներու դար մը ևս եղավ ուրեմն ալեկոծումներով լեցուն այդ դարը։ Եվ ալեկոծությանց պահուն շատերը մոլորեցան Հայ Եկեղեցվո պետերին։

Սխալ պիտի ըլլար կարծել՝ սակայն, թե բոլոր սայթաքողները միևնույն չափով պատասխանատու են պատմության առջև։ Եթե Հայ Եկեղեցվո առաջնորդներեն ոմանք զոհն եղան իրենց փառամոլության և ընչաքաղցության, կամ հոգեկան ուժե զուրկ եղան խայծերեն չհրապուրվելու համար, եղան դեմքեր ալ, որ հայ ժողովուրդի փրկությունը պարզապես Եվրոպայեն սպասեր էին ու միամտությունն ունեցան հավատալու, թե պապերուն ձեռքն է Եվրոպայի խղճմտանքին բանալին։ Պատմությունը մեղավոր կճանչնար զանոնք բոլորն ալ շարիքին համար, զոր հասցուցին հայ ժողովուրդին, բայց պատմիչին պարտքն է աստիճան դնել մեղքե մեղք։

Հայ Եկեղեցին խաղաղություն չճանչցավ այս խռովահույզ դարուն մեջ։ Զարհուրանքը, որուն ենթակա էր հայ ժողովուրդը զույգ լուծերու տակ, Հռոմի արշավանքը, որ ահավոր չափերով աշխուժացած էր այդ դարուն, միսիոնարներու ասպատակությունը Հայ Եկեղեցվո կեդրոններուն շուրջ և զանազան գաղութներու մեջ, արկածախնդիրներու շարանը, որ կուգար բազմիլ այս դարուն նվիրապետական Աթոռներու վրա, և մանավանդ պայքարները, որոնք կմղվեին հայ ժողովուրդի ծոցին մեջ իրարու ձեռքե հափշտակելու համար այդ Աթոռները, անդորր պահ մը չտվին Հայ Եկեղեցիին այս բովանդակ դարուն ընթացքին։

Պատկերը ավելի ահավոր կդառնար մանավանդ անոր համար, որ ամեն բան իր Եկեղեցիեն կսպասեր հայ ժողովուրդը։ Անոր վրա էր իր հույսը, որպեսզի իր տառապանքը վերջ գտնե. մինչ հոգևորականները, որոնք անոր գլուխն էին, իրենք նոր հոգեր կբերեին հայ ժողովուրդին երկու լուծերուն ալ ներքև։

... Ճակատագրական այդ պահուն, երբ քաղաքական փոթորիկները կալեկոծեին. նաև Հայ Եկեղեցին և երբ Հռոմ իր ամենեն զարհուրելի հալածանքներեն մեկն էր սկսած Հայ Եկեղեցվո դեմ, Պոլսո Աթոռը դժնդակ ճգնաժամ մը կանցներ ինքն ալ, գլորվելով ինք ևս տագնապե տագնապ։

Յ. ՊՈԼՍՈ ԱԹՈՌԸ ԿՌԻՎՆԵՐՈՒ ԲԵՄ

Ալեկոծ պահեր հաճախ ունեցած է Պոլսո Աթոռը իր գոյության հինգ դարերուն ընթացքին։ Բայց ոչ մեկ ժամանակ այնքան փոթորիկներով շրջապատված է այդ Աթոռը, որքան սույն դարուն, զոր տագնապի դար խորագրեցինք սկիզբեն։

Ամբողջ քառասնամյակ մը (1600—1639) Պոլսո Պատրիարքական Աթոռը պժգալի կռիվներու թատերաբեմ կդառնա։

Առաջինը այն դեմքերեն, որ տագնապի դարը բացին Պոլսո Պատրիարքական Աթոռին վրա, Հովհաննես Խուլ կոչվածն է։ Շատ բան չենք գիտեր իր կյանքին ու իր գործունեության մասին։ Իր պատրիարքության տարիները կհատկանշվին այն զզվելի պայքարներով, զորս բարձրաստիճան հոգևորականներ իրարու դեմ մղեցին, Աթոռը իրարու ձեռքե հափշտակելու համար։

Երկրորդը այդ դժբախտ շրջանին պատրիարքներեն, որ Հայ Եկեղեցվո պատմության մեջ այլապես գեղեցիկ էջեր պիտի թողուր, Գրիգոր Կեսարացին է, զոր ճակատագիրը բերավ սակայն Պոլսո Աթոռին վեճերուն խառնեց և մխրճեց տագնապի քառասնամյա ալեկոծությանց մեջ։ Գրիգոր Կեսարացին մեկն էր արդարև այն կարկառուն դեմքերեն, որոնք կրնային պատիվ բերել որևէ դարու, իրենց մտավոր ձիրքերով ու Հայ Եկեղեցվո հանդեպ իրենց նախանձախնդրությամբ։ Իր հոգևոր դաստիարակությունն ստացած դարուն ամենեն մեծ գիտնականին՝ Սրապիոն Ուռհայեցիի մոտ, ինքն ալ իր կարգին սերունդ հասցուց, ու Հայ Եկեղեցվո պարգևեց այն զմայլելի դեմքը, որ Մովսես Տաթևացի կաթողիկոսը պիտի հանդիսանար։

Խոսելով Սրապիոն Ուռհայեցիի հասցուցած սերունդին վրա, ժամանակակից Դավրիժեցին կըսե, թե մեծ վարդապետին ձեռնասուններեն «Կեսարացի Գրիգոր վարդապետն՝ այր գիտնական նրբից և արտաքնոց, և հաղթող ախոյեան ընդդէմ մաքառողաց ճշմարտութեան, եթէ մերասերից և եթէ այլոց ազգաց»[341], հիշատակելով այլուր, թե «էր այր ահարկու, և յոյժ խրոխտ և դժուարահաւան»[342]։

[341] Առաքել Դավրիժեցի, էջ 11։

[342] Անդ, էջ 287։

Գրիգոր Կեսարացին ծնած էր շուրջ 1570-ին, և դեռ վարդապետ, Պոլսո պատրիարք ընտրված 1601-ին, հաջորդելով Հովհաննես Խուլի, որ տարի մը միայն պաշտոնավարած էր։ Եվ մինչդեռ իր նախորդը՝ Հովհաննես Խուլ իր հոգին այնքան ածան պիտի ծախեր Հռոմի, Հայ Եկեղեցին փորձելով դաշնահարել կռնակեն, Գրիգոր Կեսարացին տեր կանգնեցավ հայրենի ավանդություններուն և ոչ մեկ խոչընդոտի առջև չկասեցավ պաշտպանելու համար զանոնք։

Թե որքան բուռն էր Գրիգոր Կեսարացիի նախանձախնդրությունը դեպի Հայ Եկեղեցվո շահերը, ցույց կուտա անոր կշտամբականը, զոր ուղղած է Մելքիսեդեկ կաթողիկոսին, հավանաբար 1614-ին, Հռոմի հետ մերձեցման մը ի նպաստ անոր կատարած փորձերուն և առհասարակ անոր ապերասան գործերուն առթիվ[343]։

Կեսարացիի մահը արձանագրելու ժամանակ Օրմանյան կգրե. «Եկեղեցական և ազգային խորին գիտութենե զատ, հմուտ եղած է համարողականին և երկրաչափականին, գրած է Թուականք և պատմութիւնք, Ադամեն մինչև յուր ժամանակը, հայերեն գիրով և լեզվով երկրագունդ մը շինած է, հորինած է քերթվածներ, գանձեր և տաղեր, բայց ամենեն վեր է յուր ազգային եկեղեցական պաշտպանության համար ամուր համոզումը և անխոնջ ջանքը, որով հաղթական կերպով մաքառեցավ լատինամիտ և լատինասեր կուսակցության դեմ։ Իրեն հիշատակին փառավոր վկայություն մը եղավ եկեղեցվո մեջ թաղվիլը»[344]։ Արդարև, ան թաղված է Ղալաթիո եկեղեցին։ Իր ոսոխներուն մեջ ան էր, որ չդավաճանեց իր ժողովուրդին։ Եվ սակայն առանց ամոթալի կռիվներուն, որոնք Պոլիսը գայթակղության թատր դարձուցին իրենց, և որոնք իրենց հորձանքին մեջ քաշեցին Գրիգոր Կեսարացին ալ, շատ ավելի տարբեր ըլլար թերևս այս վերջինին արդասիքը։

Բավական խորհրդավոր է կյանքն ու գործունեությունը արկածախնդրության երրորդ հերոսին, որ պիտի գար հայտնվիլ հանկարծ Պոլիս և գործոն մաս պիտի առներ Պատրիարքական Աթոռին համար մղված պայքարներուն մեջ։ Զաքարիա Վանեցին էր, ծանոթ Զաքե, Զաքեոս, Զաքիկաս անուններով ալ։ Իր կենսագիրը զայն 1603-ին կգտնե Պոլիս, ուր, դեռ վարդապետ, ուսուցչություն կընե ան և ուրկե 1606-ին Վան դառնալով, առաջնորդ կընտրվի Վարագա ուխտին և Վանի, «բայց հազիվ երկու տարի պաշտոնավարելեն ետք՝ Վանի ջոջերուն հակառակության կրախի ու կիյնա պաշտոնեն»[345]։

Զաքարիայի խորհրդավոր կյանքը կսկսի այն օրեն, երբ ծառայության մեջ կմտնե իր հոգին վաղուց խաթարած հոգևորականի մը՝ Մելքիսեդեկ կաթողիկոսին մոտ, միջնորդ հանդիսանալով Հռոմի պապին ուղղած անոր քծինքներուն։

Կարծողներ կան, որ Զաքարիա ինքն իսկ հորինած ըլլա դավանության թուղթը, զոր Մելքիսեդեկ կաթողիկոսի անունով ներկայացուց պապին։ Այս կարծիքը կհիմնվի այն հանդիմադրին վրա, զոր Գրիգոր Կեսարացի 1614-ին ուղղեց կաթողիկոսին, կշտամբելով զայն իբր դավանափոխ։ Մելքիսեդեկ պետք է չքմեղանք հայտնած ըլլա, թե իրմե չի բխիր դավանության այդ թուղթը, այլ Զաքարիա վարդապետի դարբնածն է, որպեսզի Կեսարացի գրե անոր այդ մասին իր մեղադրականին մեջ[346]։

Զաքարիա մեկն էր այն պատրիարքներեն, զորս Հռոմ հաջողեցավ իր ուռկանը ձգելու։ Թե երբե՞ն ի վեր է, որ կթվագրվի անոր «դարձը», ստույգ տվյալներ չունինք։ Հայ կաթոլիկ հեղինակներու համաձայն, ան Հռոմի շահված էր դարուն սկիզբեն, և իր այցին ժամանակ Հռոմ 1611-ին, իբրև Մելքիսեդեկ կաթողիկոսի նվիրակ, արդեն ան Հռոմինն էր։

Պոլսո Աթոռը հուզող այդ տխուր վեճերուն իր մասնակցությունը բերելու եկավ նաև Հայ Եկեղեցվո պատմության ամենեն տխուր դեմքերեն մեկը, որ փորձության այդ տասնամյակներուն նախախնամական դեր պետք էր կատարեր այլապես և որ պահ մը մաս առավ, ավա՜ղ, Պոլսո Աթոռին շուրջ մղված կռիվներուն մեջ։ Գրիգոր Դարանաղեցին էր ան, ծնած Կամախ 1576-ին, փոքր տարիքեն աբեղա ձեռնադրված և պահ մը մնացած Երևան, Էջմիածին, Բաբերդ։ Փոքր Ասիան ալեկոծող դեպքերը զայն նետեր էին Կաֆա, ուր չէր կրցած երկար մնալ և 1606-ին եկեր էր Պոլիս, իր հայրենակիցները գտնելու, որոնք աղետներեն խույս տալով, եկած հաստատված էին Պոլսո զանազան թաղերը և Ռոդոստո ու շրջակաները։ Իրեն կվիճակվի իր հայրենակից կամախեցիները երկիր առաջնորդել 1610-ին։ 1612-ին դարձյալ Պոլիս կդառնա, անկե Երուսաղեմ անցնելու դիտավորությամբ։ 1622—1625 թվականներուն ան առաջնորդն է Ռոդոստոյի, ուրկե հայրենիք և անկե 1627-ին Երուսաղեմ կանցնի կրկին, 1628-ին Կոստանդնուպոլիս գալու և գործոն

343 Գարեգին վարդապետ Սրվանձտյանց, «Թորոս աղբար», Բ, էջ 288—289։

344 «Աղբատատում», Բ, էջ 2432։

345 Հ. Գրիգորիս Գալեմքյարյան, «Կենսագրություններ երկու հայ պատրիարքներու», էջ 42—43։

346 Գարեգին վարդապետ Սրվանձտյանց, հիշված աշխատությունը, էջ 288—293։

մաս առնելու համար Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցվո կառուցման մեջ։ Հետո կդառնա Ռոդոստոյի իր առաջնորդության, այդ պաշտոնին վրա փակելով աչքերը 1643-ին, բարի անուն մը ձգելով ետին, և այն թանկագին ժամանակագրությունը, ուր կպատմե մոտ կես դարու (1595—1640) դեպքերը, անգնահատելի աղբյուր մը ընծա թողելով հայ բանասիրության։

Դարուն այս առաջին քառասնամյակը Պոլսո մեջ կբանա սկիզբը պժգալի դավանական վեճերու, զորս հետզհետե պիտի գար գրգռել Հռոմ իր գործակալներուն ձեռքով։

Հայ Եկեղեցին դժնդակ ճգնաժամ մը կանցներ։ Զորս կաթողիկոս միևնույն ժամանակ Մայր Աթոռին վրա, և երեք պատրիարք Պոլսո մեջ, որոնք շորս քառամյակ շարունակ իրարու ձեռքե կխլեն Աթոռը։ Այս պայմաններուն մեջ, Հայ Եկեղեցին ի՞նչ՞ուժ կունենա՝ դիմանալու իր վրա խուժող ալիքներուն դեմ։

Հայ Եկեղեցվո համար տագնապով սկսող այս դարը աշխուժացուց Հռոմը։ Պղտոր էին ջուրերը, ինչպես Մայր Աթոռին, նույնպես Պոլսո մեջ։ Ամենեն հարմար պահն էր Պոլսո վրա գրոհ տալու, ու հոն իրականացնելու Հավատո տարածման ժողովին առաջին հունձքը։

Որդը, որ Հայ Եկեղեցին սկսած էր կրծել Պոլսո մեջ, վարակելու փութացեր էր ուրիշ հայ գաղութներ ալ։ Տագնապի այդ դարուն անպաշտպան էին հայ գաղութները, ու լավագույն պահն էր խորտակելու հայրենի ավանդությունները անոնց ծոցին մեջ։

Լվովի թեմը մեկն էր այն հայ գաղութներեն, որոնք երեք դար տոկալե հետո, կոչված էին թատերաբեմ հանդիսանալու մարդորսներու ասպատակությանց, ճիշտ այն օրերուն, երբ Պոլիսը ինքն ալ մտած էր մարդորսներու ցանցին մեջ։ Ու զարմանալի չէ, եթե Պոլսո Աթոռին տագնապը իր թաթը երկարեց մինչև Լվով և մասնակցեցավ հոն գլուխ ցցող գայթակղությանց։

Եվ ուշագրավ է, որ ամենեն ճարպիկ գործակալները, զորս ջոկած էր Հռոմ հայ ժողովուրդը իր փարախը բերելու համար, և որոնք Լեհաստան պիտի փութային ճակատագրական դեր կատարելու համար հոն, իրենց ստաժը Պոլսո մեջ ըրեր էին։

Լվովի թեմին ճգնաժամը կխորանա։ Հայ հոգևոր պետերու միամտությունը զայն ի նպաստ Հայ Եկեղեցվո լուծելու՝ հօդս կցնդի։ Հռոմ, անգամ մը իր ճիրանը ձգած, որսը չի փախցներ այլևս իր ձեռքեն։ Լվով կխուժեն իր ամենեն ճարպիկ գործակալները ու գլուխ կհանեն բռնի միությունը։ Հայ Եկեղեցվո պատմությունը ավելի պատշաճ որակում չէր կրնար տանել քան այս մեկը։

Աշխատ[illegible] պատնվեցավ Լվովի թեմը, ամենեն դժվա[illegible] վիճներեն մեկն էր Հայ Եկեղեցվո պատմ[illegible]ն։ Ան դաս մըն էր միաժամանակ բ[illegible] համանակներու համար։

Շատ մը տագնապներ պիտի խնայեր իրեն Պոլիսը, եթե սերտած բ[illegible]ար ինքն ալ այդ դասը։ Պատրիարքներեն շատերը, որոնք եկան բազմիլ իր Աթոռին վրա, ոչ իսկ ուզեցին գիտնալ Լվովի թեմին մեջ պատահածները։

4. ՀԱՆՈՒՆ ՀԱՎԱՏՈ ԾԱՎԱԼՄԱՆ

1623 թվականը նոր գլուխ մը կբանա Հայ Եկեղեցվո պատմության մեջ։ Այդ տարին էր, որ Գրիգոր ԺԴ պապը կհիմներ Հավատո տարածման ժողովը, որուն մասնավոր խնամքին հանձնվեցավ այնուհետև եկեղեցիներու միության հոգը։ Այդ հոգը իրեն դրոշ ունենալով, Հռոմ հաղթական արշավի մը պիտի ձեռնարկեր դեպի Արևելք, և այդ արշավին թիրախ պիտի դարձներ առաջին հերթին հայ ժողովուրդը։ Ու հայ ժողովուրդի միամտությունը պիտի դյուրացներ հաճախ իր կարգին կաթոլիկ քարոզչության թափանցումը իր ծոցեն ներս։

Հռոմ աչքերը Պոլսո հառեց առաջին իսկ պահեն։ Հորմեհետե Կիլիկիո մեջ իր ստեղծած կուվանը իսպառ չքացած էր և Կիլիկիո մեջ մնացած Կաթողիկոսությունը, զոր իրեն շահելու փորձերը միշտ կշարունակեր Հռոմ, իր երբեմնի հեղինակությունը չուներ, անհրաժեշտ էր ամուր կուվան մը ապահովել։ Ունիտոռները, որոնք կշարունակեին գործել Արևելյան Հայաստանի մեջ, չէին կրնար կատարել այն միևնույն դերը, որպիսին ի վիճակի էր օսմանյան մայրաքաղաքին մեջ ստեղծվելիք կուվան մը։

Հռոմի ուրվականը միշտ կքալեր այսպես հայոց ետևեն։ Ան կհետապնդեր հարմար պահն ու խոցելի կետը։ Ամենեն հարմարը այն պահն էր, երբ հայ ժողովուրդն ու իր Եկեղեցին տագնապի շրջան մը կանցնեին, ու խոցելի կետը Պոլիսն էր, ուր հինեն կաթոլիկ կորիզ մը միշտ կշնչեր, և ուր կաթոլիկ տարրեր ալ սպրդած էին Ղրիմեն եկող հայ գաղթականության հետ մեկտեղ։

Մարդորսության փորձերը ոչ մեկ տեղ այնքան աղմկալից չէին եղած, որքան Պոլսո մեջ։ Ու շատ ալ բնական էր այդ։ Իր պապերու հավատքին հավատարիմ մնալ համառող զանգվածի մը և իր ծոցը դավով սպրդած գործակալներու պայքարը չէր միայն անորը։ Այս վերջիններու ետին հզոր Հռոմը կար և անոր ալ կողքին Ֆրանսան, որոնք շահագրգռված էին Կաթոլիկ Եկեղեցվո հարած տեսնելու հայը, իրենց կրոնական և քաղաքական շահերու համար։

Նույն այս դարեն կսկսի Ֆրանսայի ուղղակի դերը այն սադրանքներուն մեջ, որոնց ձեռնարկեց Հռոմ ճեղք բանալու համար հայ ժողովուրդի ծոցեն ներս, սկսելով նույնիսկ Պոլսեն։ Դարուն վերջերն է սակայն, որ այդ դերը ավելի գործոն կդառնա, որպեսզի հաջորդ դարուն սկիզբը այլևս ուղղակի մաս առնե Ֆրանսան Հայ Եկեղեցվո մատնված տագնապներուն մեջ, ասպետի իր պատմուճանը նետե վրայեն, ու հանդիսանա տխուր դերակատարներեն մեկը հայ ժողովուրդն ու իր Եկեղեցին խոովող դառն ճգնաժամին։

Մյուս կողմե, հայ զանգվածը անուղղակի պաշտպան մը ուներ իրեն, հանձին Թուրք պետության, որուն շահերուն երբեք չէր գար, որ օտարներ պատրվակներ ստեղծեին իրենց՝ Թուրքիո գործերուն միջամտելու համար։

5. ՊՈԼՍՈ ԱԹՈՌԸ ՄԻՍԻՈՆԱՐՆԵՐՈՒ ՃԱՆԿԻՆ ՄԵՋ

Միսիոնարներու արշավանքին հետ Պոլսո վրա, Պատրիարքական Աթոռին համար տագնապի նոր շրջան մը կբացվի։

Եոյակ պատրիարքներեն հետո, որ ամբողջ քառասնամյակ մը (1600—1639) զզվելի պայքարներու թատերաբեմ դարձուցին Պոլսո Աթոռը, երկու տասնամյակ ան ասպարեզ կդառնա արդեն կաթոլիկ արշավանքին։ Այդ շրջանին է, որ Պատրիարքական Աթոռը Դավիթ Արևելցիի ձեռքեն կհափշտակեն հաջորդաբար միսիոնարներու երեք խամաճիկները՝ Կիրակոս Երևանցի, Խաչատուր Գաղատացի և Թովմաս Բերիացի, երկու ճակատներու բաժնելով ազգը, և հակառակ որ Դավիթ Արևելցին, նվիրակ էջմիածնի, հայադավանության ջերմ պաշտպան և հետևող Գրիգոր Կեսարացիի, միշտ կհաջողեր Աթոռ դառնալ վերստին, միսիոնարներու ճանկն ինկած խմբակը կրկին զայն կբշեր Աթոռեն, իր խրտվիլակը բազմեցնելով անոր տեղ։

Լատինամիտ հոսանքը զենքերը վար չէր դրած սակայն։ Հովհաննես Խուլի ցանած սերմերը դեռ կշարունակեին խլրտիլ։

Հաջորդ պատրիարքը, Խաչատուր Սեբաստացին (1642—1643), ձեռնասունը Գալանոսի, արդեն միսիոնարներուն ճանկն է։ Լատինական խմբակը ցնծության մեջ է, հաջողած ըլլալով Խաչատուրը բերել Կիրակոս պատրիարքին տեղը։ Գաղղիո դեսպանը հատուկ պատգամավորով մը կշնորհավորե նոր պատրիարքը, իսկ Պրոպագանդայի գահերեցը խնդակցության գիր մը կուղղե անոր։ Սակայն «Խաչատուրի պատրիարքությամբ լատինասերներուն զգացած ուրախությունը շատ կարճատև եղավ, վասնզի Հռոմի նամակները դեռ Կոստանդնուպոլիս չհասած, Դավիթ Արևելցին հապճեպ հասավ Հալեպ, ուր վտարված էր Կիրակոսի օրով, պետք եղած միջոցները գործածեց և պատշաճ վճարումներն ալ ըրավ, և կրցավ Խաչատուրը գահընկեց ընելով, նորեն գրավել Պատրիարքական Աթոռը, ուակից իբր տարիուկես առաջ հեռացված էր։ Դավիթի պատրիարք ըլլալը՝ գործերուն ուղղության փոփոխությունն էր»[347]։ Արդարև, լատինական խմբակը պահ մը ցիրուցան եղավ, ու Գալանոսի սադրանքները անպտուղ սկսան դառնալ։

Խաչատուրի Պոլսո պատրիարքության ակնարկելով է, որ Բաբգեն կաթողիկոս կգրե. «Խաչատուրի Կ. Պոլսի պատրիարքութենեն ունինք ուրեմն լատինասեր կուսակցության գործիչի մը հիշատակը։ Այս ալ մեկն է մեր այն հոգևորականներեն, որոնք ոչ միայն ուսման և եկեղեցական կարգապահության համար Հռոմ դարձուցած էին իրենց աչքը, այլ նաև հայ ժողովուրդի ազգային ազատագրության տեսիլով»[348]։

Թովմա Բերիացին էր սակայն, որ պիտի գար Պոլսո Աթոռը խառնակության բույն դարձնել։

Օրմանյան ժէ դարուն Պոլսո Աթոռը խոովող դժբախտ դեպքերեն մեկը կնկատե բռնակալ պատրիարքությունը Թովմա Բերիացիի, «որ ազգին կամքին հակառակ, կաշառքի զորությամբ և պետական բռնությամբ իշխանությունը ձեռք անցուցած, կեղեքմանց և անիրավությանց կձեռնարկեր, հանձնառու եղած գումարները ճարելու համար։ Մասնավոր պարագա մը դժգոհությունը կավելցներ, զի Թովմաս ձեռք ձգած հրովարտակին մեջ Երուսաղեմն ալ իբր իրեն ենթարկյալ անցնել տված էր»[349]։

Պոլսո Աթոռին այս զույգ տասնամյակը կխորհրդանշե կաթոլիկ միսիոնարներու առաջին հունձքը։ Անոնք հաջողած են արդեն երեք համախոհներ մարդել հայ հոգևորականության շարքերեն և դանոնք բազմեցնել Պատրիարքական Աթոռին վրա։

Գայթակղությունները, որոնց առիթ կուտան այս կերպով, հեռու են սակայն զանոնք վհատեցնելե։ Ամեն ձախողութենեն հետո ավելի հանդուգն կդառնան անոնք։

6. ՏԱԳՆԱՊԻ ՆՈՐ ՏԱՐԻՆԵՐ

Դավիթ Արևելցիի վերջին պատրիարքութենեն հետո, որ փակվեր էր 1651-ին, պահ մը անգլուխ մնաց Պոլսո Աթոռը։ Ալեկոծությանց տասնամյակի մը կհաջորդեր տագնապի ու-

347 «Ազգապատում», Բ, էջ 2468։

348 Բաբգեն Ա աթոռակից կաթողիկոս, «Պատմություն կաթողիկոսաց Կիլիկիո», Անթիլիաս, 1939, էջ 380։

349 «Ազգապատում», Բ, էջ 2519—2521։

րիշ տասնամյակ մը, շարունակելով միշտ խոով պահել Պոլսո Աթոռը, որ փոթորիկներու մեջ անցուցեր էր դարուն առաջին կեսը, առանց պահ մը խաղաղություն գտնելու։

Պոլսո Աթոռին այդ անգլուխ վիճակն էր, որ Եղիազար Այնթապցիին ախորժակը ևս սրեց անոր տիրանալու, երբ 1651-ին Պոլիս կուգար Երուսաղեմի Աթոռը իրեն ապահովելու համար[350]։

Շատ չտևեց Եղիազարի պատրիարքությունը, հազիվ մեկ տարի (1651—1652)։ Հովհաննես Մուղնեցին, որ 1652-ին հաջորդեց Եղիազարին, հավանաբար Փիլիպոս կաթողիկոսին մարդն էր և անոր թելադրությամբ էր, որ անվանվեցավ պատրիարք։ Երեք տարիներու իր պատրիարքությունը (1652—1655) անշշմար կթողուն ժամանակակից աղբյուրները։

Պոլսո Աթոռը տեղակալներուն ձեռքը մնաց քանի մը տարի։ Եվ ահա 1657-ին, թատերաբեմին վրա դարձյալ հայտնվեցավ համբավավոր Թովմա Բերիացին, որ վերադարձած էր Հռոմեն, ու դավերով և կաշառքներով տեղակալներուն ձեռքեն հափշտակեց Աթոռը և 18 ամիս անվանական պատրիարքություն մը ընելե և Աթոռը նոր տագնապներու մատնելե հետո, եղերական մահով մը չքացավ ասպարեզեն 1658 օգոստոս 1-ին։

Տեղակալները, այս անգամ արդեն թվով 24, կրկին ձեռք կառնեն Աթոռին ղեկը։ Բայց երկու տարի չանցած, ասպարեզ կուգա դարուն ամենեն հայտնի դեմքերեն մեկը՝ Մարտիրոս Կաֆայեցին, կարճ ժամանակ մը նստելու համար Աթոռին վրա (1659—1660)։

Տասնամյա այս տագնապի շրջանն է, որ Կոստանդնուպոլսո Աթոռը անիշխանության կմատնե ավելի ևս, և խեղկատակությանց ու գայթակղությանց նոր շրջան մը կբանա։

Պոլսո Պատրիարքական Աթոռին համար տագնապի տարբեր շրջան մը կբացվեր ԺԷ դարու երկրորդ կիսուն, խեղկատակությանց շրջանը։ Այս անգամ ալ անուս և տգեղ տերտերներ են, որ կուգան իրարու ձեռքե հափշտակել Աթոռը։

«Այլևս ճշմարտությունը և արժանիքը չէր որ կառաջնորդեր ազգային-եկեղեցական գործերուն՝ Կ. Պոլսի մեջ,— դիտել կուտա Բարգեն կաթողիկոս,— այլ զրպարտությունը, մատնությունը, և ամենեն վեր՝ կաշառքը։ Պետական ամենեն բարձր պաշտոնատարներու համար, իրենց զոշաքաղությունը հագեցնելու միջոց մը եղավ Պատրիարքական Աթոռի շուրջ գոյացած պառակտումը։

Պատրիարքական խիլան հայտնապես դրամով կվաճառվեր, և ասկե օգտվեցան կարգ մը անզգամ ու անարժան մարդիկ և հափշտակեցին պատրիարքական տիտղոսը և իշխանությունը»[351]։

Կոստանդնուպոլսո Աթոռին անցուցած դժնդակ պահերը ԺԷ դարուն չէին կրնար շգրգռել սքեմ կրող զանազան բախտախնդիրներու ախորժակը, տիրանալու համար Պատրիարքական Աթոռին։ Ողորմելի տերտերներու ևս ախորժակը սրվեցավ. անոնք ԺԷ դարու վերջին քառորդին Պատրիարքական Աթոռը հափշտակեցին և զայն խլեցին իրարու ձեռքե։ Ադոնցմե հիշենք Հովհաննես Ամասիացի «Թոփալ երեց» կոչված տերտերը, որ տարի մը պատրիարքություն ըրավ (1674—1675), Անդրեաս Ստամպոլցի «դժոխքի սանդուղք» (ջեհեննեմ վերդիվենի) մականվանյալ քահանան, որ նույնպես տարի մը Պատրիարքական Աթոռը բազմեցավ (1675—1676), Կարապետ Կեսարացի «Կրպո» հորջորջյալ տգետ տերտերը, որ հնգիցս նստավ Աթոռը (1676—1679, 1680—1681, 1681—1684, 1686—1687 և 1688—1689), Սարգիս էքմեքչին, որ հացագործ աշխարհական մըն էր և իսկույն քահանա ձեռնադրել տվավ ինքզինքը, որպեսզի գրավե Աթոռը, Կրպո պատրիարքի առաջին երկու պատրիարքությանց միջև, Թորոս Ստամպոլցին, նույնպես անարժեք տերտեր մը, որ «մորոս» հորջորջված է, և ուրիշներ։ 1689 թվականի սկիզբը աշխարհական երևելիները այս անգամ ալ իրենք պիտի հափշտակեին Պատրիարքական Աթոռը։

Կոստանդնուպոլսո Աթոռին շուրջ մղված պայքարները երբեմն այնպիսի սուր համեմատություններ կառնեին, որ Աթոռը երկար ատեն թափուր ալ կմնար։ Նման պահերու «ազգին ղեկը» ձեռք կառնեին «աշխարհական տեղակալները», իրենց կարգին մեյմեկ պատուհաս դառնալով։ Դավիթ Արևելցիի երկրորդ պատրիարքությենեն հետո, օրինակ, 1649—1650 ամբողջ 11 ամիս աշխարհական տեղակալները վարեցին պատրիարքական գործերը։ Թովմա Բերիացիի օրով, 1657-ին, 24-ի բարձրացած էր արդեն աշխարհական տեղակալներու թիվը, և անոնք էին, որ ազգին գործերը կվարեին Աթոռին վրա գտնված անոր երկու տարիներուն ալ (1657—1659)։

Դավիթ Արևելցիի օրերեն կսկսի ուրեմն «աշխարհական տեղակալ»-ներու դրությունը։

1641 թվականին Կոստանդնուպոլսո Ս. Սարգիս եկեղեցվո մեջ ընդօրինակված «Ցայսմաւուրք»-մը, որ հետագային պահված է Արգնիի Բարձրահայաց վանքը, շատ շահեկան հիշատակարան մը ունի, ուր կպատմվի, թե ինչ պայմաններու տակ աշխարհական տեղակալներ կուգային վարել պատրիարքա-

350 «Ազգապատում», Բ, էջ 2474։

351 Բարգեն Ա աթոռակից կաթողիկոս, հիշված աշխատությունը, էջ 306։

կան պաշտոնը։ Հիշատակարանը կըսե. «Եւ պատճառ կականիս հառաչանս այժմեան ժամանակիս մարմնասէր և փառամոլ առաջնորդ անուանեալքն են, որ ոչ խնայելով ի գառինս, այլ գուն գործեալ միշտ ի փողոտել արագին։ Եւ ես այսմ արքայանիստ մայրաքաղաքիս պատրիշ պատրիարգունք անուանեալքն, յաճախեալ ի շարիս..., ուսան զգործս... կաշառաւք և տոկոսիւք խլել յիրեարաց [զպաշտօն], և աւր ըստ աւրէ յաւելուլ զդիմոսական հարկն, այնչափ եղև. որ եկեղեցիք սուրբ մայրաքաղաքիս յետին շուառութեան հասեալ, ի տանց և յիշատակաց, ի զարդուց և յայլ զգեստուց կողոպտեալ և պարտք Պատրիարքարանին ՁՈ զուրուշն հաւեալ, այնչափ ատելի և գարշ գտան ի տեսիլ ռայմկին, որ մինչ առ կայսրն բողոք կալեալ, և զմիտս Թագաւորին հաճեցեալ խէրրի շէրիֆ ընկալան, թէ ամենևին... անուն ոչ պատրիկ լիցի և ոչ ի քաղաքն անգամ մտցի...»[352]։

«Աշխարհական տեղակալ»-ներու դրութիւնը շարունակվեցաւ դարուն երկրորդ կիսուն ալ[353]։ Անոնցմէ շատերը հականէ հանվանէ հիշատակված են տարեգրութեանց մէջ։ Բացի Ռուհիջան Վանեցիէն, որ տասնյակ տարիներ տիրական դեմք մը հանդիսացաւ մայրաքաղաքին մէջ, ուրիշ անուններ ալ հասած են մեզի, շատերը հիշված իրենց արհեստներովը, ինչպես Խանճի Սեֆեր, Արայիճի Շեհրի, Էքմեքճի Պեկլեր, Քերեստեճի Գրիգոր, Յաղճի Հարութիւն, Հաճի Կոստիկ, Սիմեոն երեց, Քյուրքճյու-օղլու երեց, Պոտուռ Սիմոն, Մկրտիչ, Մուրադ, Էխթիկ, Հարութիւն Պալի, Ֆերհատ-օղլու և այլն։

Տեղակալներու դրութիւնը, իր կարգին, խառնաշփոթութեանց դուռ կբանար ազգին մէջ։ Թաղերու երևելիները մրցման մէջ էին իրարու հետ՝ կացութեան տեր դառնալու և իրենց ուզածը բերել նստեցնելու համար։

Տեղակալներով ազգին գործերը վարելու այս դրութիւնը դարուն հետ ալ վերջ գտաւ։ «Ազգին երևելիները» տարբեր ձևեր ունեցան հետագային «ազգ»-ին տիրելու համար։

(Շարունակելի)

352 Դարեգին եպիսկոպոս Սրվանձտյանց, «Թորոս աղբար», Բ, էջ 400—401։

353 «Ազգապատում», էջ 2512—2513։



Ա. ՆԱԶԻԿՅԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՏԱՂԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ

Խաղաղության համաշխարհային խորհրդի որոշմամբ, 1963 թվականի հոկտեմբերին, ամբողջ առաջավոր մարդկությունը նշում է հայ մեծ բանաստեղծ Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակը։

Սայաթ-Նովան հանճարեղ գուսան էր. նա հորինել է երգեր, երգերի եղանակներ, կատարել է իր երգերը երաժշտական գործիքի նվագակցությամբ։ Նա բանաստեղծ էր, երգահան և երգիչ միաժամանակ։

Սայաթ-Նովայի ծննդյան անունն է Արութին (Հլսրություն), ազգանունը՝ Սայադյան։ Նովա նրա բանաստեղծական անունն է, ըստ իմաստի նշանակում է երգի արքա։

Սայաթ-Նովան իր երգերը գրել է հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն լեզուներով։ Նա գիտեր և պարսկերեն։

1852 թվականին Մոսկվայում լույս տեսավ Գ. Ախվերդյանի կազմած ժողովածուն «Սայաթ-Նովա» վերնագրով[1], որը լայն արձագանք գտավ և՛ Անդրկովկասում, և՛ Ռուսաստանում, և՛ Արևմուտքում։

Մի քանի տարի հետո Գաբրիել վարդապետ Այվազյանցի խմբագրությամբ լույս տեսնող «Մասյաց աղավնի» (La colombe du Massis»)

[1] «Գուսան Ա. Սայաթ-Նովա, լուս գցած աշխատասիրությունով Գեորգեայ Ախվերդեանի», Մոսկվա, 1852, 172 էջ։

հայ-ֆրանսերեն հանդեսը, որը հրատարակվում էր Փարիզում 1855—1858 թվականներին, անդրադառնում է սույն գրքին։

Այս հանդեսի 1855 թվականի առաջին տարվա 7-րդ և 1856 թվականի երկրորդ տարվա 2-րդ համարներում մենք հանդիպում ենք Սայաթ-Նովայի մասին առաջին խոսքին, արևմտահայերեն և ֆրանսերեն լեզուներով։

Հանդեսը տպագրել է Գ. Ախվերդյանի գրքի «Յառաջաբան»-ը, այն արևմտահայերենի փոխադրած։

Ահա թե ի՛նչ է գրված «Մասյաց աղավնի» հանդեսի 1855 թվականի առաջին տարվա 7-րդ համարի 170-րդ էջում.

«... Լեզուին քանի մը դարձուածքը Պոլսեցոց ականջին խորթ ու խորշելի կրնար գալ և որ մեծն է՝ անով իմաստն ալ դժուար հասկըցուիլ, ու գրուածքին յարգը չճանչցուիլ. ուստի և յանձն առինք մեր սովորական ռամկօրէնին վերածել ու գրեթէ թարգմանել այն յառաջաբանին գլխաւոր խօսքերը։ Բայց որպէս զի բնագրին յատկութիւններն ու տեղ տեղ գեղեցկութիւններն ալ անծանօթ չմնան ընթերցողաց, այս անգամ ծանօթութեան մէջ կը դնենք բնագիրը ամբողջ. իսկ ուրիշ ատեն զանց կ՚ընենք բնագիրն ու միայն նշանաւոր խօսքերը մէջ կը բերենք»։

Այս հոդվածի երկրորդ մասը լույս է տեսնում սույն հանդեսի 1856 թվականի երկրորդ

տարվա 2-րդ համարի 37—42 էջերում, հայերեն և ֆրանսերեն զուգահեռ տեքստերով։

Այստեղ հոդվածը ընդհատվելով, մեջ է բերվում Սայաթ-Նովայի «Արի ինձ անգամ կալ» բանաստեղծությունը արևմտահայերենի փոխադրված՝ «Եկուր ինձ ականջ դիր» վերնագրով։ Այնուհետև բերվում է դրանցից յուրաքանչյուրի ֆրանսերեն թարգմանությունը՝ «Viens me prêter l'oreille» բուն բնագրով, «Homme! prête à ma voix une oreille attentive» արևմտահայերեն տեքստի ֆրանսերեն թարգմանությամբ։

Ենթադրում ենք, որ «Արի ինձ անգամ կալ» բանաստեղծության երկու տարբերակներն էլ թարգմանած լինի ֆրանսերենի խորեն վարդապետ Գալֆայան Նարպեյը, քանի որ նա խմբագրական կազմումն էր և այդ ժամանակ կատարել է շատ թարգմանություններ ֆրանսերենից, ինչպես «Դաշնակը Լամարթինեայ» գիրքը, տպագրված Փարիզում 1859 թվին։

Հետագայում, Սայաթ-Նովայով և նրա տաղերի թարգմանությամբ զբաղվում է Մինաս Չերազը Լոնդոնում։

Մինաս Չերազը Լոնդոնում հրատարակում է «Armenia—L'Arménie» թերթը (1889 թվականի նոյեմբերի 15-ից 1906 թվականը, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով)։ Նա շնորհակալ գործ է կատարում հայ ժողովրդին ու մշակույթը օտարներին ներկայացնելու համար։ Նա շատ զեկուցումներ է կարդում հայ գրականության, հայ դատի մասին զանազան ամբիոններից և գրում իր թերթում։

«Լ'Արմենի» թերթի հրատարակության դերի մասին այն ժամանակ Ռ. Պատկանյանը գրել է. «Թերթիդ ազդեցությունը շատ մեծ է. սույն տեսակ ձեռնարկություններն միայն քու գրչիդ կու տան ամենամեծ կարևորություն և հավատ կընծայեն. ուրեմն քեզ բավ լքանել պետք չէ. վստահ եղիր, քեզ բամբասողներին ոչ ոք հավատ չի ընծայեր, թե հայ լինի նա և թե օտարազգի. եթե գործը կանոնավոր կերպարանք ստանա, անշուշտ դարձյալ դու կլինես ազգիս ներկայացուցիչներեն մին, եթե չասեմ գլխավորը»[2]։

Չերազը Լոնդոնում անդամ էր Արքունի ասիական ընկերության («Royal Asiatic Society») և նրանց ժողովում զեկուցում է կարդացել հայ աշուղների մասին, մասնավորապես Սայաթ-Նովայի կյանքի մասին և կարդացել նրա բանաստեղծությունների շորսի թարգմանությունը[3]։

Այդ նույն զեկուցումը հետագայում Չերազը տպագրում է «Լ'Արմենի» թերթի 1893 թվականի 59-րդ համարում, ուր կան նաև հետևյալ երեք բանաստեղծությունները ֆրանսերենի թարգմանված. «Loué parmi tous les instruments de musique» («Ամեն սազի մեջըն գոված»), «Viens m'écouter...» («Արի ինձ անգամ կալ») և «J'ai parcouru le monde entier...» («Թամամ աշխարս պրտուտ էկա») սկզբնատողերով[4]։

Մինաս Չերազի կողմից թարգմանված այս բանաստեղծությունները հետագայում նա զետեղել է իր «Poètes Arméniens» գրքում[5]։

Այս գրքի 115—139 էջերը նվիրված են Սայաթ-Նովայի կյանքին։ Ժողովածուում տեղ են գտել նաև բանաստեղծություններ։ Երեք բանաստեղծությունները նույնն են, ինչ որ «Լ'Արմենի» թերթում, միայն ավելացված է «Je ne soupirerai pas dans ce monde» («Աշխարումըս ախ չիմ քաշի») բանաստեղծությունը, նույնպես արձակով։

Այս ժողովածուն մեծ ուշադրության է արժանացել շատ եվրոպացիների կողմից[6]։

Չերազից հետո Սայաթ-Նովայի տաղերի թարգմանությամբ զբաղվել է Արշակ Զոպանյանը Փարիզում։ Նա հրատարակել է «Les trouvères arméniens» («Հայ աշուղներ») գիրքը, որտեղ Սայաթ-Նովայից կան չորս բանաստեղծություններ թարգմանված ֆրանսերենի։

Հայ մշակույթը օտարներին ծանոթացնելու գործում Զոպանյանի կատարած դերի մասին մենք ավելորդ ենք համարում խոսել։ Միայն կարելի է մեջ բերել Գրիգոր Զոհրապի գնահատականը Մկրտիչ Պարսամյանի բերանով Արշակ Զոպանյանի գրական գործունեության 65-ամյակին նվիրված հոբելյանական հանդեսին Փարիզում, 1950 թվականի մայիսի 14-ին[7]. «Միսմինակդ ըրիր ինչ որ շատեր միացած չէին կրնար ընել. մինակդ գրական վաստակդ՝ միշտ ազգային կյանքով առլցուն որքան արվեստական կատարելությամբ ճոխացած՝ վաստակեցար։ Եվ որ ամենեն հարգելին է քու աշխատությանդ մեջ, դուն հիանալի երկյուղածությամբ մը նվիրեցիր ինքզինքդ, փշրանքներն ու նշխարները հավաքելու մեր գրական անցյալին, միշտ անոր որ ամենեն մոռցվածը և լքվածն էր»[8]։

---

[2] Ալպոյանեան Արշակ, «Մինաս Չերազ, իր կյանքը և գործը իր 60-ամյա հոբելյանին առթիվ», Կահիրե, 1927, էջ 269։

[3] „Journal of the Royal Asiatic Society", 1893, July, p. 497—508.

[4] „L'Arménie", 1893, sept. 1er, p: 2—3.

[5] Tchéraz M., „Poètes Arméniens", Paris, Leroux, 1913, XI, 155 p.

[6] Նույնի առաջաբանը։

[7] «Հոբելյան հայ մեծանուն բանաստեղծ Արշակ Զոպանյանի 65-ամյա գրական գործունեության», Փարիզ, 1950, էջ 57։

[8] „Les trouvères arméniens", trad. par A. Tchobanian, Paris, 1906, 297 p.



ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

Ա. ԳԵՆՑԱՂՈՎԱՅԻՆ ԲԱՆԴ

«Մասեաց աղաւնի» հանդեսի 1856 թ. № Բ-ի 37-րդ էջը Գ. Ախվերդյանի՝ Սայաթ-Նովային նվիրված առաջաբանով:

Ա. Զոպանյանը թարգմանել է չորս տաղ հետևյալ սկզբնատողերով. «Loué parmi les instruments» *(«Ամեն սազի մեջն գոված»),* «Prête-moi l'oreille,» *(«Արի ինձ անգամ կալ»),* «J' ai un mot de supplication à te dire» *(«Մի խոսկ ունիմ իլթիմազով»),* «Je suis comme un rossignol exilé.» *(«Ցիս մե ղարիբ բուլբուլի պես»), նույնպես արձակով:*

Սայաթ-Նովայի ֆրանսերենի չորրորդ թարգմանիչն է ժամանակակից հայ գրող և «Notre voix» *(«Մեր ձայնը») ֆրանսերեն թերթի խմբագիր Ժ. Հեքիմյանը: Այս թերթը հայրենասիրական մեծ գործ է կատարում ֆրանսերեն խոսող հայ երիտասարդության շրջանակում մասսայականացնելու Սովետական Հայաստանի մշակույթի, գիտության և արվեստի նվաճումները, ինչպես նաև սպորտային կյանքը:*

Թերթի 1963 թվականի 83-րդ համարում[9] *զետեղված կան Սայաթ-Նովայի կենսագրությունը և մի բանաստեղծություն՝* «Ce que j'ai de vie» *(«Քանի վուր ջան իմ») և 84-րդ համարում*[10] *կա* «De naissance tu as raison» *(«Դուն էն գելխեն իմաստուն իս») սկզբնատողերով:*

Սայաթ-Նովայի առաջին անգլերեն թարգմանիչը նշանավոր հայասեր ամերիկուհի օրիորդ Ալիս Բլեկուելն է: Նա թարգմանել է «I sigh not, while thou art my soul» *(«Աշխարումըս ախ չիմ քաշի») բանաստեղծությունը:*

1895—1896 թվականների կոտորածներից հետո, հայ գաղթականության մի մեծ հոսանք անցնում է Ամերիկա: Հայ երիտասարդությունը այստեղ մեծ ջանք է թափում հայությանը և հայ դատը ամերիկացիներին ծանոթացնելու գործում: Ահա իրենց այս իդեալների թարգմանիչն էր ազատասեր օրիորդ Բլեկուելը, որն այդ թվականներին «Women's journal»*-ի խմբագիրն էր: Նա մեծ աշխատանք էր ծավալում կնոջ իրավունքի, ինչպես նաև ճնշված ազգերին պաշտպանելու ուղղությամբ, և՛ իր ժուռնալի միջոցով, և՛ այլուր:*

Նա սկսում է հետաքրքրվել հայության ճակատագրով և թարգմանում է շատ հայ գրողների: Առաջին բանաստեղծությունը, որ նա թարգմանում է, Ռ. Պատկանյանի «The tears of Araxes» *(«Արաքսի արտասուքը») բանաստեղծությունն է:*

Բլեկուելը Սայաթ-Նովայի «I sigh not, while thou art my soul» *բանաստեղծությունը թարգմանել է Մինաս Չերազի ֆրանսերեն տեքստից: Այդ մենք տեսնում ենք նրա Չերա-*

---

[9] „Notre voix", Paris, 1963, mars, No. 83, p. 2.

[10] „Notre voix„, paris, 1963, mai, No 84, p. 3.

զին գրած նամակից, 1893 թվակոնի դեկտեմբերի 25-ին, Դորչի տրից[11]. «Մեծ հաճույքով և հետաքրքրությամբ կարդացի Լ'Արմենիի Ձեր ուղարկած համարները։ Անգլերենի եմ թարգմանել Նարպեյից երկու, Դուրյանից մեկ, Պատկանյանից երկու բանաստեղծություն և Սայաթ-Նովայի տաղերից մեկը, որը թարգմանված է Ձեր կողմից։ Մեծ հաճույք եմ զգացել այս բանաստեղծությունները թարգմանելով անգլերենի...»։

Հետագայում, 1896 թվականին, Բլեկուելը Բոստոնում հրատարակում է «Armenian poems» («Հայ բանաստեղծություններ») գիրքը[12]։

Այս գիրքը իր մեջ ընդգրկում է 6 հայ մեծ գրողների՝ Ռ. Պատկանյանի, Մ. Պեշիկթաշլյանի, Պ. Դուրյանի, Մ. Նալբանդյանի և Նարեկացու գործերը և տասը առանձին հայ գրողների գործերը։ Ընդամենը կա 60 բանաստեղծություն։

Ահա այս գրքի 119—120 էջերումն է տեղավորված Սայաթ-Նովայի մեկ բանաստեղծությունը՝ «I sigh not, while thou art my soul».

Այս նույն բանաստեղծության երկրորդ և երրորդ տունները ուրիշ առթիվ մեջ են բերված Ադամ Բաֆֆու կողմից «Armenian history, culture and characteristics» հոդվածում, որը տրված է Buxton -ի գրքի 247—248 էջերում։

Օրիորդ Բլեկուելի գիրքը լույս է տեսնում երկրորդ անգամ 1917 թվականին, նոր հեղինակների հավելումով[13]։



«Մասեաց աղաւնի» հանդեսի 1856 թ. № Բ-ի 42-րդ էջը Սայաթ-Նովայի «Արի ինձ անգաճ կաչ» տաղի արևմտահայերեն և ֆրանսերեն կուգահեռ տեքստերով։

Բլեկուելը թարգմանել է նաև 1906 թվականին առաջավոր ռուս գրողներին, ինչպես, օրինակ, Գորկու «Մրրկահավի երգը» («The song of the storm-finch»), Նեկրասովից, Նադսոնից, Դոբրոլյուբովից և ուրիշներից[14]։

Բլեկուելը իր թարգմանությունների մասին հետևյալն է ասում իր գրքի առաջաբանում. «Իմ հայոց լեզվի իմացությունը չի անցնում հայերեն այբուբենից այն կողմ։ Այս թարգմանությունները արձակ ինձ հրամցված են անգլերենից կամ ֆրանսերենից իմ հայ բարեկամների կողմից» (Հովհ. Խեչումյան, Մ. Ձերաղ) և այլն։

Սայաթ-Նովայից անգլերեն լեզվով թարգմանություններ է արել նաև հայտնի նկարիչ, գրականագետ, թարգմանիչ օրիորդ Ջաբել Բոյաջյանը։

Բոյաջյանը 1895 թվականի կոտորածներից հետո ապաստան է գտնում Անգլիա և այն-

[11] Armenia"—L'Arménie", 1896, London, july st p. 2.

[12] „Armenian poems", rendered into english verse by *Alice Stone Blackwell*, Boston, 1896, 142 p.

[13] *Buxton N.*, „Travel and politics in Armenia", London, 1914, 274. p.

[14] „Songs of Russia", rendered into English verse by *Alice Stone Blackwell*, Chicago, 1906. 62 p.

տեղ մեծ աշխատանք է ծավալում հայ գիրն ու գրականությունը ծանոթացնելու գործում անգլիախոս ժողովուրդներին։

1916 թվականին, Լոնդոնում, օրիորդ Բոյաջյանը իր թարգմանությամբ գունավոր նկարազարդումներով լույս է ընծայում «Armenian poems and legends» («Հայկական բանաստեղծություններ և առասպելներ») մեծածավալ գիրքը[15]։

Այս ժողովածուի մեջ նրա կողմից թարգմանված են հետևյալ հինգ տաղերը. «Without thee what are song and dance to me?» («Առանց քիզ ինչ կոնիմ սոյբաթն ու սազը»), «I beheld my love this morning» («Էսօր իմ յարին տեսա»), «Thy voice is soft» («Զենրտ քաղցրը ունիս՝ լամզով կու խոսիս»), «I have a word I fain would say» («Մե խոսկ ունիմ իլթիմազով») և «Thou art so sweet» («Շատ սիրուն իս») բանաստեղծությունը։

Այս նույն ժողովածուն նույնությամբ վերահրատարակվել է 1958 թվականին, բացառությամբ մի բանաստեղծության, որը նվիրված է օրիորդ Բոյաջյանի կողմից Շեքսպիրին։

Բոյաջյանի թարգմանությունները կատարված են բնագրից, որովհետև նա լավ գիտեր հայոց լեզուն։ Բոյաջյանը կարողացել է պահպանել բնագրի հարազատությունը, ոճը և ռիթմը։

Օրիորդ Զ. Բոյաջյանը հայրենասեր և ակտիվ քաղաքացի է։ Նա բողոքել է պատերազմի դեմ ու գրչով պայքարել է խաղաղության համար։ Ահա թե ինչո՛ւ է նա մեծ սիրով թարգմանել հանճարեղ Սայաթ-Նովայից հինգ բանաստեղծություն։

Սայաթ-Նովայի մասին գերմաներեն լեզվով գրել և թարգմանել է գերմանացի հայագետ Արտուր Լայստը։

Նա մեկն է այն գերմանացի հայագետներից, որոնք սիրել են հայ ժողովրդին և նրա գրականությունը։ Նա աշխատակցել է «Armenische Bibliothek»-ի հրատարակիչ Աբգար Հովհաննիսյանի հետ և անձամբ գտել և թարգմանել է հայ գրողների գործերը։

Դեռ 1884 թվականին նա հոդված է գրել Գ. Սունդուկյանի պիեսների մասին «Magazin fuer die literatur des auslandes»-ի մեջ, որը նույն ժամանակ ռուսերենի է թարգմանվել «Кавказ» ամսագրում[16]։

Իր «Հիշողություններ 80-ական թվականներին» հոդվածում խոսում և բնութագրում է շատ գրողների, ինչպես, օրինակ, Սունդուկյանին, Պ. Ադամյանին, Մ. Պեշիկթաշլյանին, Ռ. Պատկանյանին, Շիրվանզադեին, Բաֆֆուն և դեռ շատ ուրիշների։

Սայաթ-Նովայի կյանքի և բանաստեղծությունների մասին խոսք է ասված Լայստի «Litterarische Skizzen» («Գրական էսքիզներ») գրքում[17]։ Այս գիրքը «Armenische Bibliothek» սերիայի 2-րդ գիրքն է, որ գրված և թարգմանված է Լայստի կողմից։ Գիրքն սկսվում է աշուղների մասին ներածականով, իսկ 10-րդ էջից առանձին տրված են Սայաթ-Նովայի կյանքն ու բանաստեղծություններից հատվածներ։ Այստեղ լրիվ թարգմանված է «Kein Instrument freut so das Ohr» («Ամեն սազի մեջքն գոված») բանաստեղծությունը։

Հետագայում, 1898 թվականին, Լայստը հրատարակում է իր երկրորդ գիրքը հայ գրողների գործերից, «Armenische Dichter» վերնագրով[18]։

Ահա այս ժողովածուումն են տեղավորված Սայաթ-Նովայից թարգմանված 7 բանաստեղծություններ։ Դրանք են «Kein Instrument» («Ամեն սազի մեջքն գոված»), «Ich härm mich nicht» («Աշխարումըս ախ չիմ քաշի»), «Du folles Herz» («Արի ինձ անգամ կալ»), «Hier feiern sie ein Hochzeitsfest» («Արի համով ղուլուղ արա»-ի վերջին տունը), «Mit der Nachtigall» («Բլբուլի հիդ լաց իս էլի»), «Wie eine Zauberin verführerisch du bist» («Դուն էն հուրին իս»), «Weit in der Welt» («Թամամ աշխար պրտուտ էկա») բանաստեղծությունները իրենց սկզբնաղբյուրով։

Լայստի թարգմանած «Mit der Nachtigall» («Բլբուլի հիդ լաց իս էլի») բանաստեղծության առաջին և երկրորդ տունները մեջ են բերված նաև Բագրատ Խալաթյանցի կողմից իր մի հոդվածում, «19-րդ դարի հայ գրականությունը» վերնագրով[19]։

Լայստի վերոհիշյալ գիրքն ունի իր երկրորդ հրատարակությունը, լույս տեսած 1912

---

[15] „Armenian legends and poems", illustrated and compiled by *Zabelle C. Boyajian*, London, Dent, 1916, XVI, 194/2/ p., 12 plates.

[16] Լայստ Արտուր, «Հիշողություններ 80-ական թվականներին», «Մշակ», 1912 թ., № 109, էջ 2—3։

[17] *Leist Arthur*, „Litterarische Skizzen", Leipzig, /S. a./ 174 S. (Armenische Bibliothek, Hrsg. Von Abgar Joannissiany, II).

[18] *Leist Arthur*, „Armenische Dichter", Übers. von A. Leist, Dresden und Leipzig, Pierson, 1898, 83 S.

[19] *Chalatianz* B., „Die armenische Literatu des 19 Jahrhunderts", Neue Heidelberger Jahrbücher, /1905/. XIV, S. 34:

թվականին նոր հեղինակների հավելումով[20]։ Այս հրատարակությունը նվիրված է իր բարեկամ Արգար Հովհաննիսյանին։

Այս նոր ժողովածուում հեղինակի կողմից համարակալված կա 9 բանաստեղծություն Սայաթ-Նովայից։ Դրանցից յոթը նույնն են, ինչ որ առաջին հրատարակության մեջ։ Միայն մի նոր բանաստեղծություն կա՝ «Ein Fenster ist die Welt» («Աշխարքս մե փանջարա է») վերնագրով։

Լայստի 1912 թվականի հրատարակության մեջ թվարկված առաջին համարակալումը, որ տվել է ինքը Լայստը իբրև Սայաթ-Նովայի տաղերից, «Ein Volk, das keine Sänger hat, Im Herzen keine Liebe hat ....» («Ժողովուրդ որ երգիչ չունի, սրտումն էլ սեր չունի...») և այլն, ավելի շուտ փոխադրություն է քան թե թարգմանություն։

Սայաթ-Նովայի կյանքի մասին հունգարերեն լեզվով մենք առաջին անգամ հանդիպում ենք «Armenia» հանդեսում, որը հրատարակվում էր Սզոնկոթ Քրիստովի կողմից։

Ահա այս հանդեսի 1891 թվականի հոկտեմբերի համարում կա կենսագրական ակնարկ, գրված Չիլինկիրյանի կողմից[21]։

Հետագայում նույն հանդեսի 1901 թվականի սեպտեմբերի համարում թարգմանված կա Սայաթ-Նովայի «Te döre sziv! hallgass meg engemet..» («Արի ինձ անգամ կալ») բանաստեղծությունը, թարգմանված Սիմայ Կերկերլիի կողմից[22]։

Գրիգոր Սիմայանը (Simay Gergerly) ծնվել է 1823 թվականին և մահացել է 1907 թվականին։ Նա Հունգարիայի արքունիքում խորհրդական էր և ջերմ հայրենասեր։ Ունի հայ մշակույթին վերաբերող բազմաթիվ հոդվածներ «Armenia» հանդեսում և թարգմանել է շատ հայ գրողների գործերից։

Սայաթ-Նովայի տաղերի իտալերեն թարգմանիչն է արևմտահայ նոր բանաստեղծներից Հրանտ Նազարյանցը։ Նա ծնվել է Պոլսում։ Մանկուց սովորել է Պերպերյան վարժարանում, հետո գնացել է Լոնդոն և Փարիզ ուսման և վերադարձել Պոլիս և վերջում, 1913 թվականին, Պարի (Իտալիա), իտալական երկնքի տակ, ստեղծագործելով և ծանոթացնելով հայ մշակույթը իտալացիներին։ Նա մահացավ վերջերս, 91 տարեկան հասակում։

Ահա թե ինչ է գրում գրող Ենովք Արմենը նրա մասին. «Նազարյանց բանաստեղծ մըն է, բառին ճշմարիտ առումով... Սերած հանրային գործիչները եղող երկու դեմքերու գերդաստանեն, Ստեփանոս Նազարյանցեն, որ ռուսահայ մտավորական շարժումին մեջ դրոշակրության նշանակելի դեր մը ունեցած է, Թորոս Նազարյանեն, որ թրքահայ մատենագրության մեջ առաջնակարգ գրաբարագետի մը գործունեությունը ցուցուցած էր...»[23]։

1916 թվականին լույս է տեսնում Նազարյանցի մի գործը իտալերեն լեզվով՝ «I Trovieri dell' Armenia»[24] վերնագրով։

Գիրքն ունի առաջաբան, որը գրել է իտալացի գրող Ֆերդինանդ Ռուսսոն։ Առաջաբանում մանրակրկիտ խոսվում է հայ ազգի ծագման, դիցաբանության և այլնի մասին։

Այս գրքի 51—54 էջերում տրված է Սայաթ-Նովայի հակիրճ կենսագրությունը և «Lodato fra gli strumenti» («Արի ինձ անգամ կալ») վերնագրով բանաստեղծությունը։

Գրքի 70—71 էջերում ևս կա մի բանաստեղծություն 7 տունից բաղկացած «Devo dirti una voce di preghiera» («Մե խոսք ունիմ իլթիմազով»), որի վերջին երկու տունները չեն վերաբերում այս տաղին, այլ «Ես մէ զարիր բուլբուլի պես» տաղի 1-ին և 2-րդ տուներն են։

Սայաթ-Նովայի տաղերի ռումիներեն թարգմանությունները տպագրված են «Din Lirica Armeana» ժողովածուում, որը հրատարակվել է 1922 թվականին Բուխարեստում[25]։

Այս ժողովածուի 177—199 էջերում զետեղված են Սայաթ-Նովայի հինգ բանաստեղծություններ «Slavita între toate instrumentele («Ամեն սազի մեջը գոված»), «Tu esti asemeni unei colivi de aur» («Ցիս մե զարիր բուլբուլի պես»), «Imprumuta-mi auzul tau» («Արի ինձ անգամ կալ»), «De unde ai sosit, privighetoareo?» («Ուստի՞

---

[20] **Leist Artkur**, „Armenische Dichter", Übertragen von Arthur Leist. Neue, Vermr. Ausg. Berlin—Leipzig, Modernes Verlags. Curt Wigand, 1912, 78/5/ S.

[21] **Csellingarian Jakab**, "Szajat Nova asugh„, "Armenia„, Magyar ürmény havi szemle, Felelös..., **Szongott Kristof**, Szamosujvar, 1891, okt. 10 füzet, p. 311—314.

[22] Ibid., 1901, Szept. 11 füzet, p. 259—260.

[23] Ենովք Արմեն, «Հրանտ Նազարյանց», Կ. Պոլիս, 1911, էջ 8։

[24] **Nazariants Hrand**, „I Trovieri dell' Armenia„, nella loro vita e nei loro canti... Pref. Di Ferdinando Russo, Bari, 1916 (Conoscenza ideale del l' Armenia, vol. II), 73 p.

[25] "Din lirica Armeana", trad. **Mircea Gorghui** si **Gr. Avakian**, Cu uu studiu introd. de **Gr. Cialhusian**, Bucuresti, Cultura Nationala, 1922 (literatura Universala, colectie imgrijita de V. Parvan...), 213 p.

կու գաս, ղարիբ բըլբուլ»)[26], «Asculta rugamintea mea» («Մե խոսկ ունիմ իլթիմազով»)[27]։

Այս ժողովածուն թարգմանել են Միրչյա Գյորգիուն և Գր. Ավագյանը։ Գրիգոր Ավագյանը դոկտոր պրոֆեսոր է։ Այժմ էլ աշխատում է Ռումինիայի ակադեմիայում։

Սայաթ-Նովայի տաղերի իսպաներեն մեկ թարգմանությունը զետեղված է Բլիկսենի գրքի «Հայ գրողների անթոլոգիա»-ի 95—96 էջերում[28], «Oh, luz de mis ojos»! («Մե խոսկ ունիմ իլթիմազով») սկզբնատողով։

Անթոլոգիան ընդգրկում է հին և նոր հայ գրողներին, ինչպես Գրիգոր Նարեկացի, Սայաթ-Նովա, Ջիվանի, Ավետիք Իսահակյան, Հովհաննես Թումանյան, Դերենիկ Դեմիրճյան, Վահան Տերյան, Եղիշե Չարենց, ընդամենը մոտ 40 հեղինակների։

Սայաթ-Նովայի այս տաղերը, որոնք թարգմանվել են արևմտա-եվրոպական լեզուների, միայն փորձեր են և հավասար արժեք չունեն։ Պարզ է, այս թարգմանություններն արված են գաղութներում ապրող հայերի կողմից, հայ մշակույթը ծանոթացնելու համար օտարներին։

Սայաթ-Նովան իր բանաստեղծական վաստակով, իր հումանիզմով, սրտառուչ լիրիկայով, իր արժանի տեղն է գրավել համաշխարհային գրականության թանգարանում, որպես խաղաղության մեծ երգչի և բանաստեղծի։

Սայաթ-Նովան հարազատ է բոլոր ժողովուրդներին։ Ահա թե ինչո՞ւ անցյալ դարի 50-ական թվականներից մինչև մեր օրերը հնչել են նրա երգերի օտար թարգմանությունները նույն հուզականությամբ, արտահայտչական նույն միջոցներով և նույն իդեալներով։

Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի հոբելյանական տոնակատարությունը կվերածվի ժողովուրդների մերձեցման, սիրո, խաղաղության, արդարության վեհ սկզբունքների տարածման, սկզբունքներ, որոնց համար մեծ Սայաթ-Նովան աշխատեց, ստեղծագործեց և մնաց անմահության դափնին նվաճելով մեծ հանճարների շարքում։

---

[26] Նույն բանաստեղծության թարգմանությունը տե՛ս նաև "Ararat", Bucuresti, 1928. No. 51, p. 5 և Սիրունի Հ. "Ani" (տարեգիրք), Bucuresti, 1941, p. 259 (Trad. L. A.).

[27] "Ararat", Bucuresti, 1928, No. 53, p. 5.

[28] „Antologia de Poetas Armenios", por Josefina Lerena Acevedo de BLIXEN, Montevideo, 1943, 280 p.

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Հնագիտական հայտնագործություններ.— Վերջերս Լենինականի շրջակայքում գտնվող ավազահանքերից մեկում, ավազաշերտը փորելիս, հայտնաբերվեց մի արտասովոր առարկա: Հնագետների ստուգումից պարզվեց, որ դա մամոնտի սեղանատամ է, 8 կիլոգրամ քաշով: Ատամը փոխադրված է Լենինականի գավառագիտական թանգարանը:

Լենինականի միջնակարգ դպրոցներից մեկի տնօրեն Արտավազդ Մովսիսյանը, կրթությամբ պատմաբան, որը տպագրության է պատրաստել «Լենինականի պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» հետաքրքրական աշխատությունը, վերոհիշյալ հայտնագործության առթիվ հետևյալն է հայտնել.

— Նույն այդ վայրում առաջին անգամ մամոնտի ատամ է գտնվել 1841 թվականին, երբ ռուսական զորքերը, տիրելով Անդրկովկասին, սկսեցին Նախկին Ալեքսանդրապոլում ռազմական ամրություններ կառուցել: Այդ ատամը այժմ գտնվում է Լենինգրադի Էրմիտաժում: Գրեթե 100 տարի հետո, 1934 թվականին, երբ սկսվեց Լենինականի մսի կոմբինատի (սպանդանոց) կառուցումը, շինարարության վայրում հայտնաբերվեցին հնագույն բնակավայրի, այդ թվում նաև երկաթածուլման արհեստանոցի հետքեր, երկաթյա գործիքներով միասին: Այդ բնակավայրում գտնվեցին մամոնտի ժանիքներ երկու և կես մետր երկարությամբ: 1940 թվականին նույն բնակավայրում հայտնաբերվեցին մամոնտի կոնքոսկրներ: Այս տարվա փետրվարին գտնվեց նույնպես մամոնտի մեկ հատ սեղանատամ:

Այս ամենը, եզրակացնում է Արտ. Մովսիսյանը, հիմք են տալիս համարձակորեն ասելու, որ Շիրակի հարթավայրում ապրելիս են եղել նախապատմական մարդիկ, որոնք գիտեին մետաղից զենքեր ու գործիքներ պատրաստել և որսի ելնել նույնիսկ մամոնտների դեմ:

Շենգավիթի հնագիտական պեղումները.— Մի քանի տարի է, ինչ Երևանի արվարձաններից մեկը հանդիսացող Շենգավիթ գյուղի մոտ Հայաստանի հնագիտական ինստիտուտը պեղումներ է կատարում: Հայտնաբերվել են հնագույն բնակավայրերի հետքեր, դամբարաններ, պարիսպների բեկորներ: Վերջերս այս նույն վայրում հայտնաբերվեցին հացահատիկի հորեր, ընտանի կենդանիների ոսկորներ, կարասիներ, կավե վանական ամաններ, կրակարաններ և այլն: Այս հայտնագործությունները նոր նյութեր են տալիս մեր գիտնականներին՝ ավելի հանգամանորեն ուսումնասիրելու նախաքրիստոնեական շրջանի Հայաստանի պատմությունը:

«Վարդանանք» հերոսապատումի բացօթյա ներկայացումները.— Այդ օրը երեկոյան բացառիկ աշխուժություն էր տիրում Լենինականի քաղաքային ստադիոնում: Բոլոր տրիբունաները լեփ-լեցուն էին: Հապարավոր լենինականցիներ սիրով ու հաճույքով ականատես եղան Երևանի Գ. Սունդուկյանի անվան դրամատիկ թատրոնի արտասովոր ներկայացմանը: Խաղացվում էր Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ը, որը բեմականացրել է ժողովրդական արտիստ Գ. Ջանիբեկյանը և որն արդեն 2-րդ տարին է ինչ ներկայացվում է Հայաստանի թատրոններում:

Ստադիոնի կենտրոնում պատրաստված էր վիթխարի բեմական ամրոցը, ուր տեղի էր ունենում գործողությունը, դրված էին զորավոր լուսարձակներ, միկրոֆոններ: Հարևան գյուղերի կոլտնտեսությունները տրամադրել էին ընտիր ձիեր դերակատարների համար, իսկ մասսայական տեսարանների համար հրավիրված էին մեծ թվով պինվորներ: Ներկայացումը ղեկավարում էր անձամբ թատրոնի գլխավոր ռեժիսյոր Վարդան Աճեմյանը:

Ներկայացումն անցավ բացառիկ հաջողությամբ, մեծ գոհունակություն պատճառելով հանդիսականներին, որոնք

բուռն, երկարատև ծափահարություններով էին վարձատրում դերասաններին:

Մի քանի օր հետո, թատրոնը նույն ներկայացումը տվեց Կիրովականի ստադիոնում, իսկ օրերս նույնը տեղի ունեցավ Էջմիածնի քաղաքային ստադիոնում: Երկու դեպքումն էլ ներկայացումներն անցան մեծ հաջողությամբ:

Նույն ներկայացումով Սունդուկյանի թատրոնը հանդես է գալու Արտաշատի և Ղափանի ստադիոններում:

Ֆիլմ նվիրված Վ. Սուրենյանցին.— Երևանի դոկումենտալ և խրոնիկալ ֆիլմերի ստուդիան նկարահանել է հայ ականավոր գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի կյանքին ու գործունեությանը նվիրված մի ֆիլմ, որը ցուցադրվում է մեր հանրապետության կինոթատրոններում:

Դիտելով ֆիլմը, հանդիսատեսը մեծ հետաքրքրությամբ հետևում է նկարչի կյանքին և բեղմնավոր գործունեությանը: Վրաստան (ուր ծնվել է նկարիչը), Մոսկվա՝ Լապարյան ճեմարան, Մյունխեն (ուր ավարտել է Գեղարվեստի ակադեմիան), Իրան, Իսպանիա, Իտալիա, Կովկաս, Ղրիմ—սրանք հանգրվաններ են նկարչի կյանքում, որոնք սնուցել են նրա արվեստը, օգնել կատարելագործվելու:

Վերոհիշյալ ստուդիան նախատեսել է հետագային նման ֆիլմեր պատրաստել մեր ժողովրդի մի շարք անվանի մարդկանց մասին:

Ջերմուկ բուժավայրի հեռանկարները.— Վերադաս մարմինների կողմից քննվել և հաստատվել է Ջերմուկ բուժավայրի գլխավոր հատակագիծը: Ըստ այդ հատակագծի, Ջերմուկի սանատորիաները պետք է ունենան 5 000 մահճակալ, իսկ համանուն ավանը՝ 20 000 բնակիչ:

Բուժավայրի սահմանների մեջ է մտնելու այն ջրամբարը, որի միջոցով Արփա գետի ջրերը պետք է ուղղվեն դեպի Սևանա լիճը՝ շուրջ 50 կիլոմետր երկարություն ունեցող թունելով: Ջրամբարը կունենա 135 հեկտար մակերես, սանատորիաների մի մասը կառուցվելու են նրա ափերին: Միաժամանակ ջրամբարը կծառայի իբրև ջրային սպորտի վարգացման միջոց:

Կանաչապատվելու են Ջերմուկի շրջակա լեռնալանջերը: Ընդարձակվելու է հանքային ջրերի գործարանը: Նախատեսված են բարեկարգման խոշոր աշխատանքներ:

Գործող սանատորիաների թիվը շուտով կավելանա ևս երկուսով, յուրաքանչյուրը 250 մահճակալով: Ընդհանուր օգտագործման լողարանների մեծ շենքից բացի, կառուցվում է մի երկրորդ այդպիսի շենք՝ 40 լողասենյակներով և հատուկ բուժարանով, որոնք պատրաստ կլինեն առաջիկա ամսում:

Ս. Տ. Գասպարյանը կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ.— Նպատակ ունենալով բարելավել կինեմատոգրաֆիայի հետագա կարգացման գործը, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով ստեղծված է Հայաստանի Մինիստրների սովետի կինեմատոգրաֆիայի պետական կոմիտե. ոյի իրավասության և ղեկավարման պետք է հանձնվեն կինեմատոգրաֆիայի հետ կապված գրեթե բոլոր ձեռնարկությունն ու կազմակերպությունները:

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության մեկ ուրիշ հրամանագրով, կինեմատոգրաֆիայի պետական կոմիտեի նախագահ, Հայկական ՍՍՌ մինիստր է նշանակված Սարգիս Տիգրանի Գասպարյանը:

Ս. Տ. Գասպարյանը վերջին 6 տարիներին հանդիսանում էր Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահը:

Հայկական ճենապակի.— Երևանի հախճապակու գործարանը գոյություն ունի շուրջ 15 տարի: Նա արտադրում է բազմապիսի առարկաներ տնային գործածության և շինարարական կարիքների համար:

Այժմ գործարանում ստեղծված է ճենապակու բաժանմունք, որը տեղավորված է նորակառույց ընդարձակ շենքում: Բաժանմունքը հագեցված է ճենապակու արտադրության համար անհրաժեշտ նորագույն մեքենաներով և սարքերով:

Օրերս գործարանը ձեռնարկեց ճենապակյա իրերի թողարկմանը:

Ճենապակու համար անհրաժեշտ հումքը՝ կաոլինը ստացվելու է Սովետական Միության մյուս հանրապետություններից: Սակայն նման հումք կա նաև Հայաստանում՝ Դիլիջանի շրջակայքում: Ներկայիս գործարանի լաբորատորիայում փորձեր են կատարվում հայկական հումքի որակը պարզելու նպատակով:

Ժողովրդական կոնսերվատորիայի մեկ տարին.— Լրացավ Երևանի ժողովրդական կոնսերվատորիայի մեկ տարին: Այն հիմնված է Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդի, կոմպոզիտորների միության և կուլտուրայի մինիստրության համատեղ ջանքերով: Կոնսերվատորիան գործում է հասարակական հիմունքներով՝ դասախոս-կոմպոզիտորներն աշխատում են առանց վարձատրության: Սովորողների թիվն է շուրջ 100 հոգի՝ բանվորներ, ծառայողներ, ինքնագործ գեղարվեստական խմբերի կատարողներ, որոնք հաճախում են երեկոները, առանց հիմնական աշխատանքից կտրվելու:

Ժողովրդական կոնսերվատորիայում սովորել ցանկացողների թիվը մեծ է: Անցյալ աշնանը, երբ հայտարարվեց ընդունելություն, Հայաստանի ամենատարբեր ծայրերից ստացվեցին ավելի քան 300 դիմումներ: Կոնսերվատորիան ունի 5 ֆակուլտետ՝ երգեցողության, դաշնամուրի, փողային և լարային գործիքների, դիրիժորական և ժողովրդական գործիքների:

Վերջերս տեղի ունեցան փոխադրական քննություններ: Ուսանողների շուրջ 80 տոկոսն ստացավ գերազանց և լավ գնահատականներ:

Կոնդ թաղամասի վերակառուցումը.— Երևանի քաղաքային սովետի ճարտարապետական խորհուրդը քննարկեց և հաստատեց քաղաքի հնագույն թաղամասերից մեկի՝ Կոնդի վերակառուցման նախագիծը:

Թաղամասը, որն ընկած է քաղաքի հյուսիսային կողմի բլրի վրա, գրավում է շուրջ 30 հեկտար տարածություն: Այդ տարածության վրա նախատեսվում է կառուցել 70 000 քառակուսի մետր ծավալով բնակելի շենքեր, որոնք կլինեն 9, 12 և 14 հարկանի: Բլրի գագաթին, թաղամասի կենտրոնում, կստեղծվի պրոսպեկտ, ուր կլինեն ջրավազան և բացօթյա թատրոն:

Կարճ և բարեկարգ ճանապարհներով Կոնդը կկապվի Հրազդանի ձորի հետ: Վերջինս իր հերթին կգալիորեն կբարեկարգվի, կկառուցվեն լողավազաններ, մարզահրապարակներ, սրճարաններ, ճաշարաններ: Թաղամասի բոլոր հին հյուղակները պիտի քանդվեն և կառուցվեն նոր շենքեր: Կոնդը կդառնա Երևանի բարեկարգ թաղամասերից մեկը: Վերակառուցման աշխատանքները կսկսվեն 1964 թվականին:

Ոռոգման նոր կառույցներ.— Բնությունը շատ բարիքներ է պարգևել Հայաստանին, սակայն խնայել է մի կարևոր բան՝ ջուր՝ ոռոգման կարիքների համար: Կենտրոնական և հարավային շրջանների սարահարթերում, ուր մթնոլորտային տեղումները շատ ավելի սակավ են քան հյուսիսային շրջաններում, հարյուր հազարավոր հեկտարներով բարեբեր հողեր կան, որոնք անմշակ են մնում ոռոգման ջրի պակասի պատճառով: Այս բացը դարեր շարունակ արգելակել է Հայաստանի գյուղատնտեսության զարգացմանը:

Վերջին 30—35 տարում շատ բան է արված ոռոգման ջրի պակասը մեղմացնելու: Շիրակի, Թալինի, Հոկտեմբերյանի, Արփի—Շամիրամի, Ներքին Հրազդանի, Կոտայքի, Արտաշատի և բազմաթիվ այլ մանր ջրանցքների կառուցման շնորհիվ հնարավոր դարձավ ոռոգելի հողերի տարածությունը ավելի քան քառապատկել: Եթե 1920 թվականին ոռոգելի հողերի տարածությունը կազմում էր ամբողջ Հայաստանում 60 000 հեկտար ապա այժմ այդ տարածությունը հասնում է 262 000 հեկտարի: Այսպիսով, հանրապետության սահմաններում եղած շուրջ 460 000 հեկտար մշակելի հողերի կեսից ավելին ոռոգելի է:

Սակայն այս ամենը չի կարող բավարարել տարեցտարի զարգացող գյուղատնտեսության պահանջները: Եվ ահա հրապարակի վրա է դրված ջրային նոր պաշարներ հայտնաբերելու և օգտագործելու խնդիրը: Այդպիսիք կարող են լինել լեռնային գետակները, որոնք հոսում են մեր երկրի անդնդախոր ձորերով: Փակել այդ գետակների առաջը բնականորեն ավելի հարմար մասերում, ստեղծել խոշոր արհեստական լճակներ ու ջրամբարներ, կուտակել նրանց մեջ հեղեղաջրերը, այնուհետև բարձրացնել այդ ջրերը մինչև լեռնալանջերն ու սարահարթերը և ոռոգել ամայի հողերը. ահա բուն խնդիրը:

Ներկայիս Հայաստանում լայն թափ են ստացել ջրաշինարարական աշխատանքները: Արթիկից ոչ հեռու, Մանթաշի ձորում, Արագածի ստորոտին, կառուցվում է խոշորագույն ջրամբարներից մեկը՝ Մանթաշի ջրամբարը, որը պիտի ոռոգի 5 000 հեկտար նոր հողեր: Այն ունենալու է ավելի քան 6 000 000 խորանարդ մետր ջրածավալ: Սկսված է Ապարանի ջրամբարի կառուցումը, որը նույնպես ոռոգելու է մի քանի հազար հեկտար տարածություն: Եղեգնաձորում (Դարալագյազ), Արփա գետի վրա, անցյալ տարվանից կառուցվում է հզոր ջրհան կայան, որի միջոցով գետի ջուրը բարձրացվելու է 400 մետր վեր և ոռոգվելու են Աղավնաձոր, Արփա, Ռինդ, Զիվա և Շահումյան գյուղերին պատկանող ավելի քան 2 000 հեկտար անջրդի հողեր: Ջրամբարներ և ջրհան կայաններ են կառուցվելու նաև Թալինի, Վեդու, Սիսիանի, Կոտայքի և մի քանի այլ շրջաններում:

Հետաքրքիր վիճակագրական տեղեկություններ.— Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր կենտրոնական վիճակագրական վարչությունը հրապարակել է հանրապետության ժողովրդական տնտեսության կարգացման պետական պլանի կատարման 1963 թվականի առաջին կիսամյակի արդյունքները:

Ըստ այդ տվյալների, Հայաստանի ողջ արդյունաբերությունը առաջին կիսամյակի արտադրական ծրագիրը կատարել է 102,8 տոկոսով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ արդյունաբերական արտադրանքի թողարկումը աճել է 10,3 տոկոսով, ըստ որում ամենաբարձր աճ տվել է քիմիական արդյունաբերությունը՝ 26 տոկոս:

Ընթացիկ տարվա անցած 6 ամսում հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները տվել են. հանքային պարարտանյութեր՝ 102 800 տոննա, կաուստիկ սոդա՝ 17 400 տոննա, մետաղահատ հաստոցներ՝ 4 032 հատ, ավտոմոբիլային անվադողեր՝ 563 000 հատ, էլեկտրական էներգիա՝ 1 320 000 000 կիլովատ ժամ, կանապան տեսակի կաբելներ՝ 5 295 կիլոմետր, էլեկտրահաղորդման լարեր՝ 53 700 կիլոմետր, էլեկտրահաղորդման այլ լարեր՝ 8 917 տոննա, ցեմենտ՝ 310 400 տոննա, բամբակե կերպասեղեն՝ 29 400 000 քառակուսի մետր, բրդյա կերպասեղեն՝ 3 119 000 քառակուսի մետր, մետաքսյա կերպասեղեն՝ 3 452 000 քառակուսի մետր, կանապան տեսակի գուլպաներ՝ 19 800 000 զույգ, տրիկոտաժե վերին ու ներքին զգեստներ՝ 14 183 000 հատ, կանապան տեսակի կոշկեղեն՝ 3 135 000 զույգ, կանապան տեսակի ժամացույցներ՝ 1 002 000 հատ, կանապան տեսակի պահածոներ՝ 16 200 000 տուփ, գինիներ՝ 2 177 000 դեկալիտր, օճառ՝ 9 937 տոննա:

Վերոհիշյալ թվերը մենք բերեցինք իբրև նմուշ արդյունաբերության մի քանի տեսակների: Հարկավ, սրանցից բացի, հանրապետության արդյունաբերությունը տալիս է մեծ քանակությամբ պղինձ, մոլիբդեն, քիմիական արժեքավոր նյութեր, ալյումին, կարբիդ, էլեկտրական շարժիչներ և սարքեր, սենդամթերքներ, շինանյութեր, կահույք, հագուստեղեն և այլն: